


Հ. ԳԵՂԱՄՅԱՆՅ



Ա
Բ
Է
Տ
Պ
Ե
Ն
Ս
Կ
Ո
Ւ
Տ
Ս

ԿԱՐԱՊԵՏ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1999

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎԱԿԻՄ ԳԵՂԱՄՅԱՆՑ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանը և ծանոթագրությունները՝
ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

4108207



Երևան 1999

Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ Գիտու-
թյունների ազգային ակադեմիայի պատմության ինստի-
տուտի նոր պատմության բաժինը

Գրքի առաջաբանը և ծանոթագրությունները՝ Աշոտ
Մելքոնյանի:

Նշանավոր պատմաբան Հովակիմ (Եղիշե) Գեղամյանցի
“Կարապետ արքեպիսկոպոս” (կենսագրություն) աշխա-
տանքը, որը երկու մասով տպագրվել է Թիֆլիսի «Փորձ»
ամսագրում 1876 և 1879 թթ., առանձին գրքով հրատա-
րակվում է առաջին անգամ՝ Կարապետ արքեպիսկոպոս
Բագրատունու ծննդյան 220 և Հայաստանում քրիստո-
նեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակների
կապակցությամբ: Գրքում հարուստ արխիվային նյութի
հիման վրա հանգամանորեն ներկայացված է Կարապետ
Բագրատունու հայրենանվեր գործունեությունը՝ 19-րդ
դարի առաջին կեսի հայոց պատմության հենքի վրա:
Աշխատությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում
ընթերցող լայն հասարակայնության, մասնավորապես
Բարձր Հայքի, Ախալցխայի, Ջավախքի և Ծալկայի պատ-
մությամբ զբաղվող մասնագետների համար:



Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի (1779-1856)

Զ Ո Ն

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Նա ծնվեց և ապրեց,
Նա ապրեց և փրկեց,
Փրկեց կյանքը հազարավոր հայերի,
Մահվան շեմին կանգնած տառապյալների:

Սերգեյ Հմայակի Անխտոնյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային պատմութեան մեջ, անընդհատականութիւնն ունի իր ուրույն խորհուրդն ու զարմանալի գրավչութիւնը: Պատմութեամբ հետաքրքրվող յուրաքանչյուր անձնավորութեան համար առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում արքայատոհմերի, իշխանական տների, նշանավոր անձանց տոհմաբանութեան պատմութիւնը: Հայ ժողովրդի հազարամյակների պատմութեան մեջ դժվար է առանձնացնել բազմաթիւ թագավորական և նախարարական տների, որոնք մշտապես եղանակ են ստեղծել մեր ժողովրդի հարուստ տարեգրութեան մեջ, անջնջելի հետք թողել մեր անցած պատմական ուղու վրա. Արտաշեսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, Մամիկոնյաններ, Արծրունիներ, Խորխոռունիներ, Պոռչյաններ, Օրբելյաններ...

Այդուհանդերձ, պատմական իրերի բերումով հայոց արքայական և նախարարական տներին չի վիճակվել մշտապես մնալու պատմութեան թատերաբեմում և շարունակելու իրենց պատմական առաքելութիւնը մեր ժողովրդի կյանքում: Այդ իմաստով, թերևս, բացառութիւն է միայն Հայ Առաքելական եկեղեցին, որն իր 1700-ամյա գոյութեան ընթացքում ապահովել է և՛ իր անընդհատականութիւնը, և՛ իր սեփական հոտի հոգևոր հովվապետութիւնը, իսկ պետականութեան կորստից հետո մեր պատմութեան ամենամղձավանջային ժամանակաշրջաններում ստանձնել նաև ազգի քաղաքական առաջնորդի դժվարին ու պատասխանատու դերը: Թերևս, բավական է վերհիշել պարսկաթուրքական տիրապետութիւնից ազգի ազատագրման, կորուսյալ պետականութեան վերականգման ուղղութեամբ բազմաթիւ հայոց կաթողիկոսների ձեռնարկած քայլերը, նրանց ղեկավարած

կամ առաքած պատվիրակությունների հուսահատ, բայց ազգանվեր գործունեությունը եվրոպական տարբեր երկրներում. Ստեփանոս Սալմաստեցի, Միքայել Սեբաստացի, Հակոբ Զուղայեցի, Սիմեոն Երևանցի, Հակոբ Շամախեցի, Ղուկաս Կարնեցի և ուրիշներ, նրանց կողքին, տառապյալ հայրենիքի ազատագրման համար մաքառած հոգևոր գործիչների շարքում՝ Մինաս վարդապետ Տիգրանյան, Գաճասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան – Զալալյան, Հովսեփ արքեպիսկոպոս Արղունթյանց, արքեպիսկոպոս, հետագայում կաթողիկոս՝ Ներսես Աշտարակեցի... Այս թվարկումը կարելի է անվերջ շարունակել 19-20-րդ դարերի գործիչների օրինակով: Սակայն ճիշտ կլինի վերջին գործչի՝ Ներսես Աշտարակեցու նվիրական անունը հիշատակելուց հետո ընդմիջել, առավել ևս, որ սույն գրքույկի թեման կազմող նյութը ժամանակագրորեն ևս ավարտվում է նույն շրջանում՝ 19-րդ դարի կեսերին և անմիջականորեն կապվում է մեր ժողովրդի պատմություն մեջ նոր փուլ նշանավորող 19-րդ հարյուրամյակի առաջին կեսի հետ:

Պատմություն մեջ հաճախ լինում են իրադարձություններ, որոնց ճշգրիտ գնահատականը տասնամյակներ և անդամ հարյուրամյակներ անց չեն գտնում վերջնական ու սպառիչ ձևակերպումներ: Դրանց թվին, թերևս, կարելի է դասել բռնամիջոցներով, քաղաքական ու տնտեսական շարժառիթներով և այլ հանգամանքներով թելադրված ազգաբնակչության տեղաշարժերի խնդիրը, երևույթ, որը, դժբախտաբար, կազմում է հայ ժողովրդի միջնադարյան ու նոր ժամանակաշրջանի պատմության անբաժանելի մասը: Երբ ինչպես ժամանակի, այնպես էլ հետագա դարերի հեղինակները ցավով խոսում են հայ բնակչության արտագաղթերի մասին, բնականաբար արձանագրում են այդ երևույթների ազգակործան, աղետաբեր հետևանքները, ողբում հայրենիքի հայաթափումը: Բայց, միաժամանակ, շատ դեպքերում դժվար չէ նկատել նույն հեղինակների ոգևորությունը, երբ խոսք է լինում այդ

գաղթերի հետևանքով, օրինակ, Կիլիկիայում հայ բնակչու-
թյան ստվարացման և հայոց պետականության հիմ-
նադրման, իրանում Նոր Զուղա հայաշատ ու վաճառաշահ
քաղաքի ստեղծման կամ ազդեցիկ գաղթաշխարհի հան-
դես գալու մասին: Անշուշտ, որքան էլ տվյալ դեպքում
տեղին լինի «չկա չարիք առանց բարիքի» ժողովրդական
ասացվածքը, ընդհանուր առմամբ էթնիկական տեղաշար-
ժերը բացասական հետևանքներ են ունեցել մեր հայրենիքի
համար և կազմել են նրա պատմության ամենացավոտ
էջը: Նույնիսկ այդ ժողովրդագրական տեղաշարժերի մեջ
դժվար է եղել առանձնացնել դրական երանգներ, եթե
դրանց հաշվին կրկին հայահոծ է դարձել պատմական
Հայաստանի մեկ այլ տարածաշրջան: Այսպես. այսօր էլ
չի կարելի միանշանակ ասել, թե 1829-1830 թթ. թուրքա-
հպատակ Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս, մաս-
նավորապես Ախալքալաք և Ախալցխա արևմտահայերի
գանգվածային գաղթը ունեցել է միայն դրական հե-
տևանքներ: Եթե երբեմնի հայաշատ Զավախքն ու նրան
հարակից գավառներն այդ մեծ գաղթի շնորհիվ կրկին
վերականգնել են իրենց ժողովրդագրական պատկերը,
ապա միաժամանակ, Բարձր Հայքը զրկվել է իր բաղմա-
հազար հայ բնակիչներից, ինչ որ իմաստով, արևմտահայ
գավառաշխարհում կորցրել է իր երբեմնի ազդեցիկ դերը:

Այսօրվա հեռավորությունից, երբ դարձյալ դժվար է
գտնել վերոհիշյալ իրադարձությունների ճշգրիտ գնահա-
տականները, միանգամայն հասկանալի է, թե որքան
դժվարին ու պատասխանատու վճռի առջև է կանգնեցրել
պատմությունը քաղաքական այն այրերին, որոնց վիճակ-
վել է առաջնորդելու ժողովրդին դեպի գաղթի անհրա-
պույր ու անհեռանկար ուղին, նախընտրելու բաղմահա-
զար ընտանիքների՝ հայրենի օջախները թողնելու և տե-
ղաշարժվելու հրամայականը: Հատկանշանական է, որ
հայոց ճակատագիրը նման կացությունների առջև հաճախ
կանգնեցրել է մեր եկեղեցու հոգևոր սպասավորներին,
նրանց թողել է վճռական քայլի այնքան անհրաժեշտ ու

միաժամանակ, անշնորհակալ իրողության առջև: Այդ իմաստով տեղին է հիշել մեծ երախտավոր, էրզրուճապ հրականության «մեծավոր» Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու անունը, որի բարդ ու խռովահույզ կյանքի դրվագները դեռ կարոտ են լուրջ ու բազմակողմանի լուսաբանման: Կարծում ենք, որ 1830 թ. արևմտահայերի գաղթին վերաբերող տարբեր մոտեցումների առկայու-
թյամբ է պայմանավորված նաև նրա գլխավոր կազմակերպչի անձի և գործունեությունից վերաբերյալ ժամանակի ու հետագայի հետազոտողների իրարամերժ գնահատականները: Կարապետ Բագրատունու կյանքի և գործունեությունից առաջին գնահատականները տրվել են դեռևս նրա կենդանության օրոք: Ռուսական պաշտոնական և ռուսամետ շրջանակները միանշանակ բարձր են գնահատել նրա գործունեությունը, իսկ նրա հակառակորդները, հատկապես 1840-ական թվականներին և 50-ական թվականների սկզբին, օգտվելով արևմտահայ գաղթականների շրջանում ծագած ղժգոհություններից, փորձել են վարկաբեկել նրան, ներկայացնել միայն բացասական գծերով:

19-րդ դարի 80–90-ական թվականներին ինչպես 1830 թ. գաղթին, այնպես էլ Կարապետ արքեպիսկոպոսի գործունեությունն անդրադարձել են նշանավոր պատմաբան Եղիշե Գեղամյանցը և Ավետիս Պերպերյանը¹, ռուս ռազմական պատմաբան Վ. Պոտտոն², մասամբ Ալեքսանդր Երիցյանն³ ու Գյուտ քահանա Աղանյանցը⁴: Խորհրդային շրջանում տպագրվել են Վ. Գալամդարյանի և Մ. Դարբինյանի հոդվածները⁵:

¹ Պերպերյան Ա., Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871:

² Потто В., Кавказская война, т. IV, вып. 4, т. 1888, ст. 471-495.

³ Երիցյանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ.1, Թիֆլիս, 1894:

⁴ Աղանյանց Գ., Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891:

⁵ Գալամդարյան Վ., Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, էջմիածին, 1956, նո. 11-12, և Դարբինյան Մ., Կարապետ Բագրատունի, ՀՍՀ, հ. 5, էջ 305–306:

Վերոհիշյալ աշխատություններից, անկասկած ամենաարժեքավորը 1876 և 1879 թթ. «Փորձ» ամսագրում Ե. Գեղամյանցի տպագրած «Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն)» ընդարձակ հոդվածն է, որը չի կորցրել իր թարմությունը նաև այսօր: Այն ժամանակին լույս է սփռել հայ դործչի գործունեության շատ կողմերի վրա: Հատված առ հատված տրագրված հոդվածը արևմտահայ գաղթականների շառավիղներից առանձին մարդկանց մոտ պահպանվել է առ այսօր իբրև մասունք, և դարձել հետաքրքրասեր շատ մարդկանց սեփականությունը: Նրանցից կարելի է առանձնացնել հնաբնակ ախալցխացի, հայտնի ժամագործ Սեպուհ Արշավիրի Սաղաթելյանի անունը, որը տասնամյակներ պահպանելով այն, սիրահոժար տրամադրել է իր համաքաղաքացի, այժմ երևանաբնակ Հմայակ Սերգեյի Անիսոնյանին: Վերջինս էլ, Կարապետ Բագրատունու ծննդյան 220-ամյակի կապակցությամբ, ձեռնամուխ է եղել հոդվածի վերահրատարակությանը, քաջալերել իր հայրենակիցներին հանգանակություններ կատարել այդ նպատակի համար: Կարևորելով Կարապետ արքեպիսկոպոսի կյանքն ու գործունեությունը լուսաբանելու անհրաժեշտությունը, մենք ևս միացանք այդ պիտանի գործի լուսընծայման աշխատանքներին:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող աշխատությունը պատկանում է էրզրումից Ախալցխա գաղթած մի հայ ընտանիքի զավակ, հոգևորական, պատմաբան, հրապարակախոս Եղիշե (Հովակիմ) Գեղամյանցի (Հայկունի, մահացել է 1920 թ.) գրչին: Նա ծնվել է 1840 թ., մանկությունն անցկացրել Ջավախքի Կորխս գյուղում և Ախալցխայում, ուսանել է Թեոդոսիայի Խալիբյան դպրոցում, աշխատել Ախալցխայի Կարապետյան և Ախալքալաքի Մեսրոպյան վարժարաններում, եղել Հայ Առաքելական եկեղեցու Վրացախմբեթական թեմի հոգևոր դպրոցների տեսուչ, թղթակցել «Արարատ», «Փորձ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներին: Ե.

Գեղամյանցի գիտական հետաքրքրությունների հիմնական շրջանակն ընդգրկում է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական շարժումների, հայկական հարցի բնագավառը: Հատկապես արժեքավոր են նրա 10 պրակից բաղկացած «Պատմական քաղվածքներ» (Բաքու 1909-1915), «Պատմության դասերը» (1915), «Ռուս բյուրոկրատիան և հայերը» (1917), «Պատմական զրույցներ» (1917) և այլ աշխատություններ:

«Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն)» հոդվածաշարը հեղինակի համեմատաբար վաղ շրջանի աշխատություններից է: Այն զբաղված է հարուստ արխիվային նյութի, մասնավորապես Վրացախմբերթական թեմի դիվանների փաստաթղթերի, մամուլի և Կարապետ սրբազանի ժամանակակիցների հուշերի հիման վրա: Գեղամյանցի օգտագործած փաստաթղթերի մի մասն այսօր պահպանվում է Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի 53, 56, 57 և մասամբ էլ՝ Մատենադարանի «Կարապետ արքեպիսկոպոսի» ֆոնդերում:

Կարապետ (Հովհաննես) Գրիգորի Բագրատունին ծնվել է 1779 թ. մայիսի 18-ին (30) Արևմտյան Հայաստանի էրզրումի նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում: Սպերը վաղ միջնադարից հայտնի է եղել իբրև Մամիկոնյան, ապա Բագրատունյաց նախարարական տների ժառանգական կալվածք: Վերջիններիս անունից էլ Կարապետի գերդաստանն ընդունել էր Բագրատունի ազգանունը, երբեմն նրա հասցեին գործածվել են նաև Հունուտցի կեղծանունը: Նախնական կրթությունն ստանալով Ակն քաղաքում իր ուսուցչի՝ Միքայել արքեպիսկոպոսի մոտ, 1788 թ. Հովհաննեսն անցնում է Կ. Պոլիս, ուր սովորում է լեզուներ և զանազան գիտություններ, ապա 1801 թ. ձեռնադրվում վարդապետ, ստանում Կարապետ անունը: 1808 թ. Պոլսի պատրիարքը նրան վստահում է էրզրումի հոգևոր վիճակի հովվապետությունը: 1811-ին էջմիածնում Կարապետն օծվում է արքեպիսկոպոս: Շուտով սրբազանը հիմնում է էրզրումի Կարապետյան վար-

ժարանը, զբաղվում լայն տնտեսական գործունեությամբ, շենացնում է թեմի եկեղեցիները, ընդարձակում նրանց կալվածքները, զգալի օգնութիւն ցուցաբերում բազմա-հազար հայ սովյալների և այլն:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին Կարապետ արքեպիսկոպոսի եռանդուն ջանքերի շնորհիվ հաջողվում է էրզրում քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչուծյանը փրկել մոլեռանդ մահմեդականներից սպառնացող վտանգից: Միաժամանակ, համարձակ հոգևորականը գաղտնի կապեր է հաստատում ռուսական զորքերի հրամանատար, գեներալ-ֆելդմարշալ Ի.Ֆ. Պասկևիչ-էրիվանսկու հետ, օժանդակում ռուսների առաջխաղացմանը դեպի էրզրում, իսկ հունիսի 27-ին ս. Նշան լեռան վրա օրհնում է ռուս զինվորների մուտքը Արևմուտյան Հայաստանի ամենամարդաշատ քաղաքը:

Ադրիանապոլսի (1829 թ. սեպտեմբերի 2-ի) պայմանագրով Կարսի, Բաբերդի, Խնուսի, Դերջանի, Բայազետի, Ալաշկերտի և ռուսների գրաված այլ բնակավայրերի՝ թուրքիային վերադարձնելու լուրը անելանելի վիճակ է ստեղծում հայության համար, որը պատերազմում նպաստել էր ռուսական զորքի հաջողությանը և ռուսների հեռանալուց հետո հայտնվել թուրքական վրեժխնդրության առջև:

Ընդառաջ գնալով ռուսական իշխանութիւնների առաջարկներին և հայ բնակչության մի ստվար հատվածի խնդրանքներին՝ Կարապետ Բագրատունին դիմեց մի վճռական և խիստ պատասխանատու քայլի՝ հանդես եկավ դեպի Ռուսաստանին անցած տարածքներ արտագաղթելու կոչով: 1830 թ. մայիս-հունիս ամիսներին շուրջ 7300 ընտանիք՝ էրզրումցի, բաբերդցի, խնուսցի, բասենցի հայեր, թողնելով իրենց հայրենի օջախները, կրելով անասելի դժվարութիւններ, վերահաստատվեցին Ախալցխայի, Ախալքալաքի և Մալկայի շրջաններում: Արևմտահայ գաղթականների ջանքերով, Կարապետ արքեպիսկոպոսի ամենանուանդուն աջակցությամբ վերաշինվեց կամ հիմ-

նադրվեց մոտ 100 գյուղ, 60 եկեղեցի, ինչպես նաև Ախալցխայի և Ախալքալաքի նոր թաղամասերը: Այս տարածքները, շնորհիվ այդ գաղթի, կրկին վերականգնեցին իրենց նախկին հայ էթնոնկարագիրը: Կարապետ Բագրատունին, ռուսական իշխանությունների հետ ունեցած իր անձնական կապերի շնորհիվ, կարողացավ գաղթականության համար ստանալ նյութական օգնություն, որոշակի արտոնություններ, բաց անել դպրոցներ, այդ թվում՝ Ախալցխայի Կարապետյան և Ախալքալաքի Մեսրոպյան նշանավոր վարժարանները: Իր գործունեության համար ռուսական արքունիքը նրան արժանացրեց ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանի: «Մեծավորը», ինչպես գաղթականության շրջանում նրան անվանում էին, կարողացավ գնել Ախալքալաքի Կարծախ, Դադեշ, Խավթ, Խոզափին և այլ գյուղեր ու արոտատեղիներ, որոնց եկամուտներն ի սպաս դրվեցին դպրոցների պահպանման, աղքատանոցների բացման և այլ բարեգործական նպատակների համար:

1837 թ. Կաթապետ արքեպիսկոպոս Բագրատունին նշանակվեց նորաստեղծ Վրացախմբեթական թեմի հոգևոր առաջնորդ: Նրա փոխադրումը Թիֆլիս որոշ դժվարություններ առաջացրեց էրզրումահայ գաղթականության համար Ախալցխայի դավառում և Զավախքում: Բացի այդ, միանգամայն նոր և անծանոթ միջավայրում Կարապետ արքեպիսկոպոսը չկարողացավ ծավալել նախորդ ժամանակներին հատուկ եռանդուն և բեղմնավոր գործունեություն, ունեցավ նաև վրիպումներ և ձախողումներ:

Ուշագրավ է, որ նոր պաշտոնում ևս նրա հոգածություն հիմնական առարկան մնացին գաղթականության խնդիրները: Ծակատագիրը գործչին փորձության առջև կանգնեցրեց նաև խորը ծերություն շրջանում՝ 1853 թ. աշնանը, երբ Ղրիմի պատերազմի օրերին թուրքական զորքերը ընդհուպ մոտեցան Ախալցխային, որի պաշտպանների կողքին կանգնեց նաև ծերունազարդ սրբազանը:

Կարապետ արքեպիսկոպոսը վախճանվեց 1856 թվականին հունիսին՝ իր կալվածքներն ու ունեցվածքը հիմնականում ժառանգութուն թողնելով Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն և դպրոցներին: Որոշակի միջոցներ թողնվեցին նաև բարեգործական ծրագրերի համար: Պատահական է, որ մինչև խորհրդային կարգերի հաստատումը, այդ եկամուտների հաշվին պահվեցին զանազան հոգևոր ու բարեգործական հաստատություններ:

Կարապետ Բագրատունին, շնորհիվ բազմաբեղուն ու հայրենանվեր գործունեության, մնաց իր ժամանակակիցների ու նրանց սերունդների հիշողության մեջ: Այդ հիշողությունը կրկին թարմացնելու նպատակով, մեծ հայրենասերի ծննդյան 220-ամյակի առթիվ, նպատակահարմար գտանք մեր ընթերցողին ներկայացնելու Ե. Գեղամյանցի «Կարապետ արքեպիսկոպոս» աշխատությունը:

Հոգվածաշարի տեքստը, որը թեև տեղ-տեղ շարադրված է բավական խրթին հայերենով, երկարաչուն է գրաբարյան քաղվածքներով, գրեթե խմբագրման չենք ենթարկել՝ բնագրին հարազատ մնալու նկատառումով: Շարադրանքի աշխարհաբար մասը, ընթերցող լայն հասարակությանը ավելի մատչելի դարձնելու նպատակով, տառադարձվել է նոր ուղղագրության: Բնականաբար, գրաբարով մեջբերված քաղվածքները թողնվել են անփոփոխ: Հեղինակի ծանոթագրությունները տարվել են տեքստի վերջը, իսկ աշխատությունում առկա անճշտությունների շտկման, պարզաբանման նպատակով արած մեր ծանոթագրությունները, աստղանիշերով իջեցրել ենք տողատակ:

ԱՇՈՏ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմություն

ինստիտուտի փոխտնօրեն,

պատմագիտության թեկնածու

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is difficult to decipher due to its low contrast and orientation.

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու գավիթ մտնողը կտեսնի նորա հարավային դրան կից մի անշուք շիրիմ, մի գերեզման, որի վերա չկա ոչինչ դիր և ոչինչ հիշատակարան: Այդտեղ հավաքվում են հաճախ Ախալցխայի փոքրիկ մանուկներն ու պատանիները և գերեզմանաքարի վերա զանազան խաղեր են խաղում. այդտեղ հավաքվում են նմանապես և ծերերը և զանազան խոսակցություններ անում: Եթե փորձեինք դառնալ դեպի այդ խաղացող մանուկներն ու պատանիները և հարցնել նոցա, թե ո՞վ է այդ գերեզմանի տակ հանգչողը, մենք կստանայինք բացասական պատասխան, նոքա մեզ կասեին «չգիտեմք». իսկ եթե դառնայինք դեպի ծերերը և նոցանից ուզենայինք մի բան իմանալ, նոքա մեզ թեև կպատմեին մի քանի դեպքեր, իրողություններ, բայց այդ ամենը այնքան հարևանցի և կցկտուր կլիներ, որ մենք անկարող կլինեինք մի պարզ և որոշ գաղափար կազմել հանգուցելու մասին. բայց այսուամենայնիվ դոքա յուրյանց մեծ նշանակությունն ունին, իբրև կենդանի զրույցներ այն անցքերի, որոց ժողովուրդը ականատես է եղել և որոնք վերաբերում են այնպիսի մարդու, որ յուր ժամանակին հառաջ է վարել այդ անցքերը: Կանցնեն սակայն մի քանի տասնյակ տարիներ, մենք կզրկվինք այդ ծերերից, նոքա կմտնեն գերեզման և իրանց հետ կտանեն և այն, ինչ որ գիտեին: Այդ գերեզմանի տակ, ընթերցող, հանգչում են Կարա-

պետ արքեպիսկոպոսի ոսկերոտիքը: Այդ անձի յոթանասուն և վեց ամյա կյանքի շրջանի անընդհատ եռանդուն գործունենությունը, նորա զանազան բարեմասնությունները, անձնանվեր ժողովրդասիրությունը և այն հեղափոխությունը, որ կատարվել է Տաճկական Հայաստանի հայ ժողովրդյան կյանքում 1830 թվականին, այնպիսի խոշոր երևույթներ են գաղթական ժողովրդյան համար մասնավորապես և մեր վերջին ժամանակի պատմության համար առհասարակ, որ դոցա չհետազոտելը, չքրքրելը հանցանք է մի կողմից գաղթական ժողովրդյան, մյուս կողմից մեղանչանք մեր պատմության դեմ:

Կարապետ արքեպիսկոպոսը Տաճկական Հայաստանում մեծ դեր է խաղացել, նա առաջնորդել է գաղթական ժողովուրդին դեպի Ռուսաստան, 26 տարի կառավարել և պահպանել է գաղթական ժողովուրդին, որ նորա շնորհիվ ունի այսօր յուր եկեղեցու անունով մեծամեծ և հաստատուն կալվածներ: Կարապետ արքեպիսկոպոսի շնորհիվ գաղթականաց զավակները այսօր ստանում են փոքր ի շատե կրթություն և դաստիարակություն, նրա հոգատարությամբ և խնամածությամբ կերակրվել են և դեռ կերակրվում են հարյուրավոր աղքատներ և վերջապես նորա հովանավորության և պաշտպանության տակ հառաջ են եկել հազարավոր անձինք աշխարհական և հոգևորական դասակարգից, որոնք կրթությամբ և ազգային գործունենությամբ բարձր են կանգնած ամբոխից:

Ահա այդ արքեպիսկոպոսի կենսագրությունն է, ընթերցող, որ փորձեցի գրել: Ես աչքի առաջ ունեի, բացի ժամանակակից մարդկանց կենդանի զրույցներից և պատմություններից, նաև բազմաթիվ պաշտոնական գործեր, կոնդակներ, պաշտոնական և մասնավոր գրություններ՝ թե հոգևորական և թե Ռուսաց քաղաքական ատենատեղիներից, բայց և այնպես, խոստովանում եմ, որ այս կենսագրությունը ունի դեռ շատ թերություններ, որոնք ես առիթ կունենամ հետո լրացնելու, եթե այն անձինք, որոնց մոտ դտնվում են ինչևիցե գրավոր, մինչև ցարդ չտպա-

գրված, տեղեկություններ Կարապետ արքեպիսկոպոսի կամ նորա ժամանակակից Եփրեմ, Հովհաննես և Ներսես կաթողիկոսների մասին, բարեհաճին ինձ ուղարկել:

Մի առողջամիտ բանաքննություն, գործին և ժամանակին տեղյակ անձինքների կողմից, ոչ պակաս կարող է օգնել ինձ նույնպես այս կենսագրությունը ավելի լուսաբանելու և ավելի կատարելագործելու:

Ա.

Հայատանի «Մեծ Հայք» կոչված նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում կենում էր 1770 թվականին մի հայ մարդ Կարապետ Եղիկ-օղլի անունով: Հայր յուր ահագին հարստությամբ և ամենին հայտնի իմաստությամբ այնքան մեծ վարկ և անուն էր հանել բոլոր գավառում, որ էրզուրումի փաշան նորան նշանակել էր նույն ընդարձակ գավառը (Սպեր) կառավարող ութն դատավորներից մինը: Դատաստանական գործերում, հասարակական հարցերում Կարապետ Եղիկ-օղլին յուր ուշիմությամբ և խելքությամբ այնպիսի մեծ համբավ էր ստացել բոլոր ժողովրդյան և մեծամեծ իշխանավորների առաջ, որ գավառի օսմանցիք նորան հայ թագավորազն էին անվանում: Կարապետ Եղիկ-օղլին խրախուսվելով այդ հանգամանքից և դուրս պատմությունից իմանալով, որ Սպերը հայոց իշխանության ժամանակ պատկանում էր Բագրատունյաց ցեղին, վերջերում թողել էր յուր «Եղիկ-օղլի» մականունը և ընդունել «Բագրատունյան» մականունը: Կարապետ Բագրատունյանը, յուր մեռնելից հետո, յուր մեծանունության հետ թողում է յուր Գրիգոր և Հարություն որդեցը նաև յուր ահագին կարողությունը: Գրիգորը և Հարությունը, ճշմարիտ է, հասարակական և տերութենական պաշտոններ չեն վարում հոր նման, բայց նորա թողած հարստությունը առևտրական գործերում շահեցնելով, կրկնապատկում են:

Հ 0 5 8 0 1
1708207

Ինչպես որ Կարապետ Բագրատունյանի ժառանգները Հունուտ գյուղում և բոլոր գավառում մեծ ձայն էին հանել յուրյանց հարստությամբ, նոցանից ոչ պակաս ձայն էր հանել և նոցա համագյուղացի և թաղակից մի հետին աղքատ հայի-այրի մահտեսի Թորոս Փտտյանցի - Արեգնազան անունով 13 տարեկան աղջիկը յուր աննման գեղեցկությամբ:

Գրիգոր Բագրատունյանը, անդադար տեսնելով Արեգնազանին, սիրահարված էր նորա վերա. բայց որովհետև նորանից ավելի մեծ և իշխանավոր մարդիկ օսմանցիներից, որոնցից գլխավորն էր Մեհմետ Դերե-բեգի (գավառապետ), նույնպես սիրահարված էին Արեգնազանի վերա և որոշել էին բռնությամբ տիրել այն հայուհուն, եթե սիրով չհաջողեցնեն, ուստի և Գրիգորը սիրտ չէր անում Արեգնազանին յուրյան կին ուզել, մանավանդ որ նորա պառավ մամը «Զանազան հանրմը» (տիկին Զանազան) միշտ զգուշացնում էր նորան «չընկնիլ այն շներուն» (օսմանցիների) հետ, ավելացնելով միանգամայն, թե յուր թոռանը (Գրիգորին) «լայեղո՞ղ» բան է առնել աղքատի աղջիկ:

Մի երեկո աղքատ Թորոսը յուր դրացիներից լսելով, որ Մեհմետ աղա Դերե-բեգիի մարդիկը շատ անցուդարձ արին յուր տան մոտից նույն օրը, և գուցե պատրաստություններ էին տեսնում նույն գիշերը նորա տունը «կոխել», դիմում է լեղապատառ դեպի Զանազան հանրմը և աղերսում է նրան՝ եթե ոչ ի սեր յուր թոռանը (Գրիգորին), գեթ ի սեր քրիստոնեական հավատո, փրկել յուր աղջկանը՝ Արեգնազին: Կրոնական զգացմունքները այնպիսի ուժ և զորություն են տալիս երբեմն մարդու, որ նա, մոռանալով ամեն բան, փառք, պատիվ, երկյուղ, վտանգ և այլն, հանկարծ փոխվում է և ամեն բան զոհում է այդ զգացմունքներին: Գրիգոր Բագրատունյանի պառավ տատը, որ մինչև այդ ժամանակ արգելք էր յուր թոռան նշանադրությանը, չնայելով նորա աղերսագին թախանձանացը, հառաջ բերելով յուր կողմից թե հիմնավոր և թե անհիմն

պատճառներ, այժմ լսելով, որ օսմանցիները ուզում են քրիստոնյա աղջկան հավատափոխ անել (տաճկացնել), իսկույն կանչում է յուր թոռն Գրիգորին ու նորա սիրուհի Արեգնազանին և դոցա հանձնելով մի քանի կտրիճ հայերի և թորոս Փտտյանցի խնամակալությանը, միևնույն գիշերը Հունուտից փախցնում է մինչև Կան (հայաբնակ գյուղ, էրզուրումից մի ժամ հեռու), հայրական կարողության մեծ մասը նոցա տալով:

Կան գյուղում Գրիգորը պսակվում է և փոխադրվելով էրզուրում քաղաքը, սկսում է տուրեառությամբ պարապել: Յուր պառավ տատի մահվանից հետո Գրիգորն էրզուրումից յուր մոտ է հրավիրում նաև յուր փոքր եղբայր Հարությունին և աներորդի Ավետիսին: Այդ ամուսնությունից Գրիգորը և Արեգնազանը ունեցան երկու զավակ, որոնցից անդրանիկը, որի անունն էր Հովհաննես, ջերմ սիրահարության արգասիք, ծնավ 1779 թվականի մայիսի 18-ին:

Դեռ Հովհաննեսը չկար տասը տարեկան, երբ ժանտախտից մեռան նորա հայրը՝ Գրիգորը և փոքր եղբայրը՝ Մկրտիչը. իսկ Արեգնազանը դնաց ուրիշ մարդու հետ ամուսնացավ: Գրիգոր Բագրատունյանը թեև մեռնելուց առաջ յուր հարստությունը օրինավոր կերպով կտակել էր յուր ժառանգներին, բայց նույն ժամանակվա օրենքները ոչինչ ուժ և նշանակություն չէին ունենում, մանավանդ մի «գեուրի» (քրիստոնեի) վերաբերությամբ, երբ բռնությունը երևան էր գալիս: Վեց ամիս հետո անզավակ մեռավ Արեգնազանը և զանազան վեճեր և տարաձայնություններ բացվելով, Գրիգոր Բագրատունյանի կարողությունը անցավ նորա աներոջը՝ մահտեսի թորոս Փրտտյանցի, յուր որդի Ավետիսի և Արեգնազանի երկրորդ մարդու ձեռքը: Իսկական ժառանգներից Գրիգորի Հարություն եղբայրը վերադարձած էր կրկին յուր հայրենիքը՝ Հունուտ գյուղը, իսկ Հովհաննեսը բոլորովին զրկված էր: Նորա խորթ հայրը խեղճ որբից խլած կարողության համար միմիայն այս փոխարինությունը արավ նորան, որ

մի մետաքսագործ վարպետի, մահտեսի Հակոբ անունով, մոտ տվեց նորան, որ այնտեղ մնալով և նորա տանը ծառայելով, սովորի այդ արհեստը և յուր համար ժամանակին մի կտոր հաց ճարե, «մյուլխեննեթի էհթեճ» չլինի, այսինքն խեղճ չմնա:

Թե փոքրիկ Հովհաննեսը յուր վարպետի մոտ օրերն ինչպես է անցկացրել, հայտնի չէ. հայտնի է միմիայն, որ այդ արհեստը նորա սրտովը չի եղել, թե նորա վարպետը նորա հետ լավ չի վարվել. ուստի, դեռ 12 տարին հաղիվ լրացած, Հովհաննեսը թողնում է յուր վարպետին և գնում էլին (Ակն) քաղաքը, Միքայել արքեպիսկոպոսի՝ հայոց առաջնորդի մոտ սպասավոր մտնում, ուր սովորում է մայրենի լեզվով կարգալ ու գրել, և օգուտ քաղելով յուր մեծավորի գրքերից, սկսում է հետզհետե ինքնուրույնաբար գարգանալ: (Փոքրիկ Հովհաննեսը յուր մետաքսագործ վարպետի մոտից փախչելու համար ստացել է «ուստագան-ղաջան» (վարպետից փախչող), իսկ Միքայել արքեպիսկոպոսի գրքերը շատ անգամ ծածուկ ձեռք ձգելու և կարդալու համար «քիթաբ-խրխզի» (գրքերի գող) տիտղոսները): Մի քանի տարի ծառայելով Միքայել արքեպիսկոպոսի մոտ, Հովհաննեսը յուր աչքաբացությամբ և սրամտությամբ այնքան էր սիրելի եղած նորան, որ տեսնելով նորա մեջ մեծ ընդունակություն և սեր դեպի ուսումը, յուր հաշվով ուղարկեց նորան 1788 թ. Կոստանդնուպոլիս, որտեղ նա այն ժամանակվա գիտնականների մոտ սովորեցավ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն և աստվածաբանություն, նույնպես և օսմանյան լեզու¹: 1795 թվականին լավ վկայականներ ձեռին վերադարձավ Հովհաննեսը յուր բարերարի մոտ, որ մի քանի տարվա ընթացքում նորան ձեռնադրեց դպիր (էրզուրումի ս. Աստվածածնի վանքում), սարկավագ և 1801 թվականին էլին քաղաքի Ս. Գևորգ եկեղեցում վարդապետ, երբ նորա Հովհաննես անունը փոխվեցավ, ըստ սովորության Հայաստանյայց եկեղեցվո, Կարապետ: Այնուհետև Կարապետ վարդապետը նշանակ-

վում .է յուր առաջնորդից «ընդհանուր կառավարիչ» էկինի և էրզուրումի վիճակաց բոլոր եկեղեցական կալվածների վերա: Մինչև Կարապետի վարդապետանալը այդ կալվածները կառավարում էր Միքայել արքեպիսկոպոսի մյուս «ավագ փոքրավոր» Հակոբ վարդապետը: Վերջին ընտրությունը - Կարապետ վարդապետի կառավարիչ նշանակվելը, որ մեծ պատիվ է բերում Միքայել արքեպիսկոպոսին, իբրև ուսումնական անձն գնահատողի և նորա վերա վստահություն հայտնողի, զարթեցրեց Հակոբ վարդապետի մեջ նախանձ դեպի Կարապետ վարդապետը, բայց այդ նախանձը չէր կարող, իհարկե, արգելք լինիլ գործին կամ վնասել Կարապետ վարդապետին, քանի որ կենդանի էր նորան սիրող և հարգող առաջնորդը: Վերջինիս մահվանից հետո, 1804 թվականին, Հակոբ վարդապետի նախանձը, ըստ երևույթին, լայն և անարգելք ասպարեզ է գտնում ոտնակոխ անել յուր հակառակորդին և նորա փառքը. ուստի և կազմելով մի բավականին զորեղ կուսակցություն, աշխատում է ժողովրդյան առաջը Կարապետ վարդապետի անունն ստորացնել և յուր ձեռքն առնել ոչ միայն եկեղեցական կալվածների կառավարությունը, այլև լինիլ առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսի փոխարեն - բայց արդեն ուշ էր: Կարապետ վարդապետը յուր արթուն կառավարությամբ արդեն գրաված ուներ ժողովրդյան մեծագույն մասի համակրությունը և հարգանքը: Հակոբ վարդապետի կուսակիցները, լինելով որպես մեծատուն անձինք, ամիրաներ, էֆենդիներ, սկզբից թեև բավական ազդել են ժողովրդի վերա և աշխատել են նորան առաջնորդ ընտրել տալ, բայց հասարակ ժողովուրդը չի հոժարացել զրկել եկեղեցին յուր արթուն կառավարչից, և համաձայնել է ընտրել Հակոբ վարդապետին առաջնորդ այն պայմանով, որ եկեղեցական կալվածների կառավարությունը առաջվա նման մնա Կարապետ վարդապետի ձեռին: Մեծատունները չկարողանալով ամեն կողմից ճնշել ժողովրդին և խեղդել նորա համոզմունքը, համաձայնել են նորա այս առաջարկությանը,

հուսալով, որ հետո հեշտ կլինի Հակոբ առաջնորդի համար հեռացնել Կարապետ վարդապետին յուր կառավարչական պաշտոնից: Նշանավոր են այն խոսքերը, որ Կարապետ վարդապետն ասել է այդ առթիվ հարուստների միջից յուր միակ բարեկամ Փիլիպպոս ամիրային: «Եթե դուք ինձ հավատում եք ժողովրդի կարողութունը, ինչի՞ չեք հավատում և լուկ իշխանական անունը»: Թե այսպես և թե այնպես մեծատունները և հասարակ ժողովուրդը միմյանց մեջ համաձայնում են Հակոբ վարդապետին ընտրել առաջնորդ, իսկ Կարապետ վարդապետը մտածելով, որ եթե առաջնորդութունը անցնեք ոսոխի ձեռքը, ինքն այլևս չի կարող ազատաբար կառավարութուն անել և ժամանակին յուր հանդեպ անշուշտ արգելքներ և թշնամություններ դուրս կգան, մի տարու չափ Փիլիպպոս ամիրայի տանը կենալից հետո, գնում է Կ. Պոլիս և այնտեղ, 1808 թվականին օգոստոսի 21-ին, Հովհաննես պատրիարքից նշանակվելով և սուլթանի հրովարտակով հաստատվելով առաջնորդ, վերադառնում է յուր վիճակը²:

Կարապետ վարդապետի կողմից մի այդպիսի վարմունք պետք է, որ հաճելի չլինեք, մանավանդ հարուստներին, բայց որովհետև դորանով հասարակ ժողովրդյան բուն կամքն ու ցանկութունը հաղթանակած կլինեք, ուստի հավանական է, որ նորահաստատ առաջնորդի հակառակորդները այլևս չկարողանան, գոնե բացարձակ կերպով, հակառակել Կարապետ վարդապետ առաջնորդին և հետզհետե նորա հետ հաշտեցան ու բարեկամացան, մանավանդ, ինչպես վերևում հիշեցինք, Կարապետ վարդապետը մի տարի կենում էր Փիլիպպոս ամիրայի տանը և իհարկե վերջնիս միջոցով հաջողել էր զրավել յուր կողմը և մի քանի ամիրաների և էֆենդիների: Առաջնորդ նշանակվելուց հետո Կարապետ վարդապետը նախևառաջ աշխատում է վանքերի տնտեսական վիճակը բարվոքել, միաբանից թիվը քչացնում է, սահմանում է սոցա համար կանոններ, նշանակում է նոցա գործ, գլխավորապես քարոզչութուն գյուղերում, և հետո Մամիկոնյան

Հակոբ Ամիրայի (Թովալ՝ կաղ մականվանյալ) հետ գնում է ս. Էջմիածին և այնտեղ, 1811 թվականի նոյեմբ. 2-ին Եփրեմ կաթողիկոսից ձեռնադրվում է արքեպիսկոպոս:

Բ

Ս. Էջմիածնից վերադառնալիս Կարապետ արքեպիսկոպոսը լուր առավ ճանապարհին Էրզուրումի մեջ տարածված սովի մասին: Աճապարեց նա և Էրզուրում հասնելուն պես ցույց տվավ յուր գործունյա և ժողովրդասեր բնությունը:

Առանց ժամանակ կորցնելու նա խորդակցեցավ մեծատունների հետ և նոցա օժանդակությամբ իսկույն մի աղքատանոց հիմնեց, որտեղ երեք տարի շարունակ 180 հոգի ծերեր և տնանկներ կերակրվում էին և շորեր ստանում եկեղեցու ծախսով և մասնավոր մարդկանց նվիրատվությամբ: Միևնույն ժամանակ նա քահանաների և ժամկոչների միջոցով այրիներին և որբերին ալյուր, ցորեն և դարի էր բաժանում յուր կառավարիչ եղած ժամանակը սահմանած եկեղեցական ամբարներից: Այդ սովի ժամանակ ընդարձակ գավառի հայաբնակ քաղաքներում և գյուղերում նորա ցրված շրջաբերականները, որոնցով սովելոց համար օգնություն էր «հայցում» յուր «սիրեցյալ» հոտից, լի և զեղուն են սրտաբուխ հորդորներով և կենդանի նկարագրություններով մարդկային բազմադետ թշվառությանց «յերեսաց Աստուծոյ և մանավանդ ինքեան մարդոյն»: Վերջին բառերը պարզ ապացույց են, թե Կ. արքեպիսկոպոսը չէր այնպիսիներից, որոնք սովոր են ամեն տեսակ թշվառությունք վերագրել Աստուծուն: Խորագետ արքեպիսկոպոսը այդ բառերով ակնարկում է դեպի տերությունը և դեպի հասարակության անհոգությունն ու տգիտութիւնը: Նա միշտ աշխատում էր ժողովրդին գրավել դեպի աշխատություն. այդիսկ պատճառով թե Էրզուրումում և թե Ախալցխայում դե-

դացիներին միշտ պատվիրում էր, որ բացի տերունական կյուրակեններից, ուրիշ կյուրակեններ չպահեն:

Որքան որ զարհուրելի էր էրզուրումի այդ սովը և երկարատև, այնքան անչափ էր Կարապետ արքեպիսկոպոսի եռանդը և գործունեությունը՝ օգնել յուր ժողովրդին. և հենց այդ ժամանակներից սկսվում է Կարապետ արքեպիսկոպոսի մեծագործությունը և իբրև բնական հետևանք դորա՝ նորա մեծահոգությունը: Ունենալով առաջնորդական աթոռ և իշխանություն Տաճկաստանի նման մի տերության մեջ, ի վաղուց հետև և վերջերում ևս գրաված լինելով յուր բոլոր հոտի ամենաջերմ համակրությունը, յուր ոսոխներից հետզհետև իրան բարեկամներ շինելով, յուր անընդմիջական իշխանություն և կառավարության տակ ունենալով ահագին վիճակի բազմաթիվ եկեղեցիների և վանքերի կառավարությունը, շարունակաբար պաշտոնական և մասնավոր հարաբերություններ ունենալով տերության մեծանուն պաշտոնատյարց հետ, Կարապետ արքեպիսկոպոսը այնուհետև յուր հոտի առաջ ներկայանում է իբրև միահեծան թագավոր և ըստ յուր կոչման՝ մի ճշմարիտ հովիվ և խնամատար ու գործվագութ հայր: Ամեն տեսակ քաղաքական, ազգային և կրոնական վեճ, ամեն տեսակ տարաձայնություն, դանդատ և բողոք, որ պատահում են հայ ժողովրդյան մեջ, պետք է քննվին և վերջանան Կարապետ արքեպիսկոպոսի մոտ և նորա «կտրածը կտրած է, կապածը՝ կապած»: Ընդարձակ վիճակի յուրաքանչյուր հայի մի որևիցև լավ կամ վատ գործում Օսմանյան տերությունը ճանաչելիս է լինում Կարապետ արքեպիսկոպոսին: Հպատակ հայերից ստացվելիք հարկերը տերությունը յուրաքանչյուր տարի ստանում է եղել նույնպես Կարապետ արքեպիսկոպոսից: Ընդունելով յուր վրա այդչափ քաղաքական ծանրություններ, Կարապետ արքեպիսկոպոսը աչքի առաջ ուներ, իհարկե, Տաճկաստանի օրենքների ու դատաստանատների խստությունները քրիստոնեից վերաբերություններն ալ տեղյակ էր և այն բռնաբարիչ և կեղեքիչ միջոցներին, որոնցով

Հարկեր էին ժողովում տերուլթյան մարդիկը քրիստոնյաներից. ուստի և յուր ժողովուրդը ամենայն կողմից ապահովացնելու համար, սահմանել էր էրզուլուումում ունենալ «ազգային դանձանակ», ուր ամեն հայ պարտավոր էր յուրաքանչյուր ամիս ձգել մի որոշյալ թեթև գումար, որից հետո Կարապետ արքեպիսկոպոսի ձեռամբ յուրաքանչյուր տարի տրվում էր տերուլթյան որոշյալ հարկերը: «Առ ի թեթևացուցանելոյ զպահանջս բազմատեսակ հարկաց, սահմանեցաք առ այն զազգային դանձանակ», գրում է նա ինքը յուր օրհնուլթյան թղթի մեջ: Կատարելով մի այդպիսի դեր, Կարապետ արքեպիսկոպոսը, ճշմարիտ է, կարողացել է ժողովուրդին միշտ ծառայեցնել յուր նպատակներին - առավելապես դեպի եկեղեցիների և վանորելից շինուլթյունն ու պայծառուլթյունը - բայց նա յուր ժողովուրդյան երեսից կրել է և դառն վշտեր, ժողովրդյան զանազան չարուլթյունների և անկարգուլթյունների համար նա շատ անգամ կանչվել է «յատեան անօրէն դատաւորաց», բանտարկվել է ամբողջ շաբաթներով և ամիսներով, դատապարտվել է կախաղանի և ազատվել. և երկու անգամ ստացած կաթիվածներից մեծ հոգատարուլթյամբ և չարչարանքներով հազիվ հազ է առողջացել:

Յուր այդ նեղուլթյունների և վշտերի մասին նա ինքը մասամբ հիշում է յուր այն «օրհնուլթյան» թղթի մեջ, որ ի 23-ն մայիսի 1856 ամի, վախճանելուց մի քանի օր առաջ, ուղղել է «սլատուարժան քահանայից, բարեծնունդ աստիճանաւորաց, արժանայարգ երեւելաց (իշխանաց), բազմաշխատ ուստաբաշեաց և արհեստաւորաց՝ գաղթականաց Կարնոյ՝ վերաբնակելոյ յԱխալցխայ»: «Նախնիք ձեր և հարք զիտէին քաջ և բազումք ի ձէնջ որք զիտեն և ականատես եղեալ են ինքեանք, խոտովանեսցին, զի ես որքանեաց վշտաց և տառապանաց տարի յերկրին Օսմանեան յերեսաց յայնժամեան խոտաբարոյ մահմէտականաց, թշնամեաց քրիստոսական արեամբ զնեալ մերս սուրբ Եկեղեցւոյ: Քանի՞ քանիցս յատեան անողորմ սպարապետաց նոցին և վէզիրաց չափ կրեցի դառնուլթեանց ըստ

պարտաւորութեան իմուժ ի սէր սիրելեացդ իմոց և որդւոցդ հարազատից»։ Բացի այդչափ բարոյական հարվածներից Կարապետ արքեպիսկոպոսը շատ անգամ ստիպված է եղել կրել և նյութական վնասներ։ Շատ անգամ նա ստիպված էր լինուժ մեծամեծ նվերներ (փեշքեշներ) տալու այս և այն քաղցած վեզիրին, այս և այն փաշային, այս և այն կրօնամուլ մուլլային, որոնց միջոցաւ կարող էր յուր կամ ժողովրդյան անձին և պատվին մի որևիցե վնաս հասնել։ Շատ բախտախնդիր պաշտօնատար անձինք զանազան չնչին պատճառներով աշխատուժ էին նորանից մի բան պոկել, և Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրված էր լինուժ բավականություն տալ դոցա, ենթարկելով ի վերջո և դոցա յուր ազդեցութեանը։

Միքայել արքեպիսկոպոսի օրով շատ խեղճ էին էրզուրումի և էկլիսի վանքերն ու եկեղեցիները և նոցանից շատերը անցել էին օսմանցիների ձեռքը պարտքի փոխարեն։

Կարապետ արքեպիսկոպոսը միաբանների համար կարգ ու կանոններ սահմանելից հետո աշխատուժ է օսմանցիների ձեռքից հետ առնել մի քանի նշանավոր վանքեր, բայց դորա համար հարկավոր էր մեծ գումար, ժողովրդյան տուրքերը բավական չէին դորա համար. ուստի Կարապետ արքեպիսկոպոսը ձեռք է զարնուժ վաճառականութեան և տնտեսագիտութեամբ նորանոր կալվածքներ է ձեռք բերուժ, գումար հաւաքելու ազնիւ միջոցներ և աղբյուրներ է որոնուժ և գտնուժ, որոնցից և մեծամեծ եկամուտներ ստանալով, մի քանի տարուց հետո պարտքից ազատուժ է էրզուրումի ս. Աստվածածնի (որ և Կարմիր) վանքը, մի քանի այլ նշանավոր ուխտատեղիներ, վերանորոգուժ և պարսպապատ շինուժ ս. Լուսավորիչ և ս. Խաչ վանքերը, որոնք արդեն հնացած և քայքայված էին, բարեկարգելով և նոցա ներքին վայելչությունը։

Թե Կարապետ արքեպիսկոպոսը յուր մեծագործութեանց համար պարտական էր ժողովրդյան առատ նվիրատուություններին, դորան տարակույս չկա, բայց հայտնի

է և այս, որ նա վանքերի և եկեղեցիների պատկանյալ դաշտերում և արոտատեղիներում պահելով և մեծացնելով մեծ բազմութիւն զանազան չորքոտանի կենդանիներ, վաճառում էր հետո «ջալաբներին», և հենց այդ էր նորահարսութեան գլխավոր աղբյուրը:

Հետո Կարապետ արքեպիսկոպոսը հաստատ համոզված լինելով, որ հոգևորականաց բարեկարգութիւնը կախված է միմիայն ազգային մանկտիւ լուսավորութիւնից և կրթութիւնից, էրզուրումում հիմնում է ազգային դպրոց «Կարապետյան» անունով, որ ամենայն իրավամբ և արդարութեամբ նա յուր վերոհիշյալ «օրհնութեան» թղթի մեջ անվանում է «աշխարհածանութ»։ Կարապետյան դպրոցը բացված լինելով էրզուրում քաղաքում մի այնպիսի ժամանակ, երբ ոչ թե ազգային (հայկական) այլ և տերութեան դպրոցներ չկային, գտնվելով Կարապետ արքեպիսկոպոսի վեհ պաշտպանութեան տակ, կառավարվելով եկեղեցական հաստատուն աղբյուրներով, շատ մեծ դեր է խաղացել էրզուրումի հայ ժողովրդյան բարոյական կյանքում: Այդ դպրոցի ուսուցիչներն էին այն ժամանակվա երեւելի հայկաբանները, որոնց Կարապետ արքեպիսկոպոսը հատուկ յուր ուսումնարանի համար հրավիրել էր Կ. Պոլսից: Դոքա էին Հովհաննես (Արդար մականվանյալ) վարժապետ, Շեքերճյան Գրիգոր պատվելի, Կարապետ վարժապետ Վանեցի, Գևորգ պատվելի Տեր Հովհաննիսյանց, և վերջերում՝ Կարապետ Չմշկյանց:

Ունենալով անսահման սեր դեպի ազգային մանկտին և ցանկանալով նոցա մեծագույն մասին մասնակից անել կրթութեան և լուսավորութեան, Կարապետ արքեպիսկոպոսը յուր հզոր ազգեցութեամբ իրագործել էր այն գաղափարը, որ այժմ մեր լուսավոր դարում հզոր տերութիւններն անգամ դժվարանում են իրագործել: Ուսումնառութիւնը Կարապետյան դպրոցում յուր ժողովրդի զավակաց համար Կարապետ արքեպիսկոպոսը պարտադիր էր արել: Հարուստ և միջակ դասակարգի ժողովրդյանը նա ստիպում և հարկադրում էր սրդիքը ուսումնարան

ուղարկել, (ուստի և էրզուրուումցիք ասում էին, թե Կարապետ արքեպիսկոպոսը ուզում է վարդապետ և քահանա չինել բոլորին. դոցա կարծիքով ամեն ուսում ստացող պետք է որ անպատճառ քահանա կամ վարդապետ դառնա) աղքատներին ու տնանկներին և նոցա զավակներին նա գրավում էր դրամական թեթև նվերներով և օգնություններով: Տարեկան 40 աղքատ աշակերտներ Կարապետ արքեպիսկոպոսի տանը կերակրվում էին, շորեր և ուսումնական պիտույքներ էին ստանում. բացի դորանից, նոցա ծնողներն ևս Կարապետ արքեպիսկոպոսից ստանում էին ամսական մի քանի կոտ ցորեն, գարի, մի քանի լիտր ալյուր, որպեսզի տեղիք չունենան որդոցը դպրոցից հանել և արհեստի կամ ծառայության տալ, ոռճկից ինքյանք (ծնողք) չահվելու նպատակով: Մեր ձեռքում գտնված մի կտոր հին հաշվեթղթից երևում է, որ Կարապետ արքեպիսկոպոսը ամենայն տարի վճարում էր Գևորգ աղա Բոգոյանցին (ճոթի վաճառական, միլենույն ժամանակ դերձակ) վերոհիշյալ քառասուն աշակերտաց հանդերձագինը 1037 ղուռուչ երեսուն փարա (մոտ 52 ռուբլի) այն ժամանակվա համար նշանավոր դումար: Միլենույն այդ ընթացքն ունեցավ Կարապետ արքեպիսկոպոսը և Ախալցխայում, «Կարապետյան» դպրոցի աղքատ աշակերտների վերաբերությամբ:

Կարապետյան դպրոցի աշակերտներից մինչև այսօր կան շատերը էրզուրուումում, որոնք մեծապես նպաստել են ազգային լեզվի զարգացմանը և տարածմանը նույն վիճակում: Նույն աշակերտներից Ախալցխայում հայտնի էին Հակոբ Չաթալբաշյանց, Բարսեղ Տեր Միքայելյանց, Կարապետ քահանա Մանդինյանց (Գանձակում վախճանեցավ), Հակոբ Կարինյանց, Մկրտիչ Արվանյանց (Վենետիկ մականվանյալ) և ուրիշները:

1828 թվականին, երբ սկսվում է պատերազմը օսման-ցիւնների և ռուսների մեջ, Կարապետ արքեպիսկոպոսի և յուր ժողովրդյան վիճակը - իբրև քրիստոնյաների վիճակ - վատթարանում է, նոցա կյանքը և կարողությունը ենթարկվում է հայտնի և բացարձակ վտանգների: Օսմանցիները, ըստ յուրյանց բնատուր երկչոտության և անվստահության, արդեն ռուսների «Ախալցխայի փաշալիկում» արած հաղթություններով վհատած և թուլացած, զանազան սնտոի պատճառներ են պտուում սրե անցցնել, կոտորել էրզուրումի և բոլոր վիճակի քրիստոնյաներին, երկյուղ կրելով, միգուցե նոքա ռուսների կողմն անցնեն, յուրյանց գործը ավելի դժվարացնեն:

Հղանալով իրանց մեջ մի այդպիսի զարհուրելի միտք, օսմանցիներին հարկավոր էր նախևառաջ սպանել հայերի, մանավանդ թե բոլոր քրիստոնյաների ընդհանուր պաշտպան և հզոր ախոյան - Կարապետ արքեպիսկոպոսին:

Մի կյուրակե օր ս. պատարագի ժամանակ եկեղեցու մեջ իմաց են անում «մեծավորին»³, թե երկու «ղավազ» (զինվոր) եկեղեցու դրանը նորան են սպասում: Քրիստոնյա եպիսկոպոսը ստիպվում է թողնել ս. պատարագը, չոքում է սեղանի առաջ, ջերմ արտասուքով համբուրում է ս. խաչը և եկեղեցուց դուրս գալով ու զինվորներին հետևելով գնում՝ դեպի փաշայի սարայը (պալատը): Ժողովրդականք սարսափած այդ տարօրինակ հրավերից, և այն եկեղեցու միջից, թողնում են եկեղեցին և քաշվում իրանց տներումն ամրանում:

Կարապետ արքեպիսկոպոսը արդեն յուր հավատարիմ մարդկանց ձեռքով լսած էր օսմանցիների մեծավորաց մտքում ծնած զարհուրելի և նենգավոր միտքը, ուստի և կարծում էր, թե այլևս չպիտի կարողանա վերադառնալ և տեսնել յուր սիրելի ժողովրդյան երեսը: Չնայելով որ այդ սոսկալի դադտնիքը քանի ժամանակից հետո՝ նորան վրդովում և տագնապում էր և այդ հանկարծական հրա-

վերը նորա վերա սաստիկ ազդեց, այսուամենայնիվ, ժողովրդային մեջ վրդով չձգելու համար, նա մինչև եկեղեցուց դուրս գալը ինքն իրան լավ գտալեց: Չնայելով Կարապետ արքեպիսկոպոսի պատվերին և հրամանին՝ թողնել իրան մենակ, այդ միջոցին հեռվից ծածկաբար հետևում էր նորան յուր հավատարիմ սպասավորը՝ Գևորգ անունով⁴:

Ս. Հովհաննես եկեղեցուց մինչև փաշայի սարայը (կես ժամից ավելի ճանապարհ) գնում էր քրիստոնյա եպիսկոպոսը գինվորներով առաջնորդված, հեծում էր և զանազան դառն մտքերում ալեկոծվում: Քառորդ ժամ հագիվ առաջ գնացած, նա ընկնում է բոլորովին անզգայության մեջ: «Իչ-մեյդանի» կոչված հրապարակը դուրս գալով, Կարապետ արքեպիսկոպոսը տեսնում է յուր հանդեպ յուր հավատարիմ սպասավոր Գևորգին, որ մի աման ջուր ձեռին, շտապում էր դեպի իրան: Այդտեղ եպիսկոպոսն սթափվելով, հարցնում է Գևորգին, թե ինչու՞ համար է այդ ջուրը:

«Հայր սուրբ, պատասխանում է սպասավորը լալազին, հայր սուրբ, տե՛ս քո դրությունը:

Կարապետ եպիսկոպոսն նայում է ներքև և յուր մորուքն ու վերարկուն արնաշաղախ է գտնում: Ճանապարհին նորա վարի շրթունքը ճաքել էր և այդ ճաքածի արյունը խառնվելով քթից հորդությամբ հոսող արյան հետ, ապականել էր նորա մորուքն ու վերարկուն, բայց նա ինքը այդ չէր նշմարել և ցավ բնավ չէր զգացել: Խնդրելով գինվորներին, նա անտրտունջ գնում է մոտակա աղբյուրը և լվացվելով, մտնում է փաշայի սարայը, ուր գինվորական և քաղաքական մեծամեծ պաշտոնակալները գինվորական խորհուրդ էին կազմում: Հավատարիմ Գևորգը մնաց սարայի դրան մոտ մի անկյունում և սրտատրոփ սպասում էր յուր տիրոջը:

Մտնելով սարայը և սովորական ողջույնը (թեմելլեմե, այսինքն խոնարհումն մինչև նստողների քղանցքները) տալուց հետո, Կարապետ արքեպիսկոպոսը, ոտքի վերա կանգնած, սպասում էր այդ նոր կայսրությանից լսել

յուր հանցանքը և նորա վճիռը: Խեղճ եպիսկոպոսի բոլոր հանցանքն այն է եղել, որ նորանից մի օր առաջ, շաբաթ օրը, հայերը, հետևելով օսմանցիների օրինակին, յուրյանց խանութները կողպել էին, որ ըստ կարծյաց զինվորական խորհրդի, հայերը նորա համար են արել իբր, որ տները քաշվին և տերության դեմ որոգայթներ լարեն, դորա համար զինվորական խորհուրդը որոշել է նորանց ամենքին էլ կոտորել և նախապես յուրյանց եպիսկոպոսին սպանել, որ յուր «միլլեթը» (ժողովուրդը) այդպես է «թերպից» արել (կրթել): Կարապետ արքեպիսկոպոսը հայտնում է, թե հայերը նորա համար են կողպել իրանց խանութները, որ նորանցից առաջ կողպել էին իրանք օսմանցիները, որոնց արածին հակառակ անելը հայերի կողմից հանդգնություն կլիներ:

«Չո՛ք շեյ» (չատ բան) բղավում է փաշան, «բայց օսմանցիները տանը նստած չեն կարող որոգայթներ լարել տերության դեմ»:

- Երբ հայերի կողմից տերության մի որևիցե վնաս հասնի, ես ինքս կլինիմ պատասխանատու, ասում է Կարապետ արքեպիսկոպոսը, իսկ եթե նոցա դուքաններ կողպելը հաճելի չէ ձեր վսեմության, հրամայեցեք, ես իսկույն բանալ կտամ:

«Այ բաջադան գեջմիշ» (լուսնյակը երդկից անց է կացել — ուշ է արդեն), գոռոզաբար պատասխանում է փաշան, «զինվորական խորհրդի որոշումը պետք է կատարվի»:

Այդտեղ երկյուղից Կարապետ արքեպիսկոպոսի շըրթունքի ճաքածից դարձյալ սկսում է արյուն վազել, որ տեսնելով մի ծերունի վեզիր և ճանապարհի պատահած անցքն ևս լսելով, համոզում է խորհուրդին՝ փոխել յուր առաջվան միտքը - եպիսկոպոսի և քրիստոնեից խողխողումը և պարապեցնում է նոցա պատերազմական զործերով, որպեսզի այլևս «քյոթու» (վատ) բաներ մտածելու ժամանակ չունենան:

Այդ այդպես սարքված էր արդյոք, թե ինչպես որ

անհիմն և անապարանոք վճիռ էր եղած, այնպես անապարանոք այդ վճիռը փոխվեցավ, հայտնի չէ, հայտնի է միայն, որ ծերունի վեզիրի առաջարկությունը զինվորական խորհուրդը հարգեց և Կարապետ արքեպիսկոպոսին հրամայեց՝ հավաքել յուր ժողովուրդը և քաղաքի ու ս. Նշան լեռան չորս բլուրքը «խենդեկ» (խրամ) փորել:

Օսմանցիք հնումը սովոր էին պատերազմի ժամանակ իրանց հպատակ քրիստոնեաներին աշխատեցնել զանազան պատերազմական գործերով: Այդպես 1805 թվականին, երբ պատերազմ սկսվեցավ ռուսաց և Ֆրանսիացոց մեջ, և երբ անգլիացիք տասն և մի պատերազմական նավերից կազմված նավատորմիղը մտցրին Միջերկրական ծովը, օսմանցիների սուլթան Սելիմ թագավորին ստիպելու՝ թողնել Նապոլեոն Բոնապարտի կուսակցությունը և անցնել ռուսաց կողմը, սուլթան Սելիմը, անգլիացիների այդ վարմունքը համարելով յուր իրավանց բռնաբարություն, պատրաստվեցավ անգլիացիներին ընդդիմանալու. նա պարտավորեց հայոց Հովհաննես պատրիարքին «Հանդերձ հասարակ ժողովրդեամբ դնալ ի պալատն արքայի, և ինքն առաջիկայ լինելով ժողովրդեան, սկսավ հող կրել ի թիկունս յուր և կիր և որ ինչ պիտոյքն էին շինությանն: Տեսեալ զայս սուլթան Սելիմ արքայ և հարցեալ ո՞վ ոք իցէ նա և իմացեալ՝ հրամայէ զգեցուցանել նմա (Յովհաննես պարտրիարքին) զսամոյր մուշտակ արքայապարզև և նստուցանել զնա յաթոռ, զի ինքն (պատրիարքն) մի՛ աշխատ լիցի, այլ ժողովուրդ յուր փոխանակ յուր»:
(Պէրպէրեան. Պատմ. հայոց. Կ. Պոլիս 1876 եր 56.):

Լի ուրախությամբ հեռանում է սարայից Կարապետ արքեպիսկոպոսը և երկու ժամից հետո բոլոր էրզուրումի հայ ժողովուրդը, բացառությամբ կանանց, ծերերի, կաղերի և կույրերի, բահ, թի, փետատ ձեռքերին, նշանակված տեղերում խրամ և պատնեշներ էին փորում: Սկզբումն ինքը Կարապետ արքեպիսկոպոսն էլ, ժամկոչի շորեր հագած, երեք օր աշխատեցավ յուր ժողովրդի հետ, իսկ երեք օրից հետո զինվորական խորհրդի որոշմամբ Ղեկիբ

փաշայի (խրամների վերակացուի) հետ ի միասին, ձի հեծած ման էր գալիս խրամների բոլորքը և խրախուսում ժողովրդին, որ թողած յուր առևտուրը, յուր բանն ու գործը, որից կախված էր նորա գերդաստանի օրական ապրուստը, ամենայն առավոտ վաղ հավաքվում էր «մեծավորի խցի» հանդեպ, առնում էր նորա օրհնությունը և գնում էր չարաչար աշխատանքի. գնում էր և լալագին երգում. «Բահ, թի, փետատներ դիզվեցան, մեծ ու փոքր հիվանդացան. գնա՛նք խրամը, խրամը»: Այդ երգն ասված է թուրքերեն. մենք թարգմանաբար ղնում ենք այստեղ դորա մի քանի տները, որոնցով լավ նկարագրվում է հայ ժողովրդի վիճակն ու զանազան արտահայտություններն այդ աշխատանաց օրերում:

Մոսկովը (Ռուսը) հասավ էրզուրումին,
Վայը եկավ Հայոց գլխին.
Սաստիկ հրամանը վեզիրի
Քունը կտրեց մեր աչքերի.
Գնա՛նք խրամը, խրամը:
Զմեռ կուգա բուք ու բորան,
Մեր ընտանյաց հալն է յաման,
Թողինք գործերս ցիրուցան,
Եկանք հասանք ի սուրբ Նշան,
Փորել խրամը, խրամը:
Բահ, թի, փետատներ դիզվեցան,
Մեծ ու փոքր հիվանդացան.
Թե չլիներ սուրբ օրհնություն (արքեպիսկոպոսը),
Ամենքին էլ հալն էլ զուլում.
Փորե՛նք խրամը, խրամը:
Արի՛, եղբա՛յր, փորե՛նք խրամ,
Հիմի կուգա Ղեկիբ փաշան.
Թո՛ղ, ի՞նչ ես մտածում այդքան,
Աստված կլինի մեր պահապան.
Գնա՛նք խրամը, խրամը:
Փետատը զարկինք ասպառաժին,

Զուր հանեցինք քարի միջին.
 Բայց ձագուկներս մորը կշտին
 Կարոտ մնացին ցամաք հացին.
 Գնա՛նք խրամը, խրամը:
 Հայր սուրբն ահա հեծած յուր ձին
 Կուգա՛, եղբայրք, երթա՛նք աջին.
 Նրա օրհնությունը մեր գլխին,
 Աստված պահե կյանքն յուր անգին.
 Գնա՛նք խրամը, խրամը:
 Հող ու մոխրում թավալ գլոր,
 Միտք ու ուշքերս եղավ մոլոր,
 Յամա՛ն, հա՛յր սուրբ, ղուրբան քեզի,
 Մեր ընտանյաց հոգսը քաշի.
 Գնա՛նք խրամը, խրամը:
 Մոսկովն եկավ շարան շարան,
 Ա՛յ օխտնանուն (Սուրբ Կարապետ), քեզի ղուրբան,
 Խնամք արա հայոց վերան,
 Էլ չմնաց մեր վերա ջան.
 Գնա՛նք խրամը, խրամը:

Այդ չարաչար աշխատանքը չորս ամիս շարունակվեց
 և հայ ժողովուրդը ամեն տեսակ նյութական և բարոյական
 զրկանքներին համբերատար լռությամբ և անձնվեր եր-
 կայնամտությամբ համբերեց ու տարավ, յուր սրտի խոր-
 քերից լուռ ու մունջ օգնություն և խնամք հայցելով և
 աղերսելով յուր և յուր գեղաստանի համար երբեմն
 Աստուծուց, երբեմն «մեծավորից», երբեմն «յոթնանուն»
 սուրբ Կարապետից և երբեմն ռուսի զորքերից, որի
 էրզուրումի մոտ գալը այնքան հետացավ:

Կարապետ արքեպիսկոպոսի ժողովրդին մատակարա-
 րած նյութական ձեռնտվությունները այդ չորս ամսվա
 միջոցում գրե՛թե դատարկեցին եկեղեցական գանձարանն
 ու հացի ամբարները և յուզի ու պանրի բղուղները: Նա
 զարմանալի առատաձեռնություն հազարավոր մարդկանց
 ամենայն երեկո հավաքում էր յուր մոտ և փող էր

ընծայում, և նոցա ընտանյաց ցորենն ու ալյուրը և յուղ ու պանիր էր ուղարկում, միևնույն ժամանակ աշխատանքի միջոցին զանազան ազդու և մխիթարիչ հորդորներով նոցա ոգին բռնում, պահպանում էր:

Տեսնելով հայ ժողովրդի այդ աստիճան անձնանվեր ու ձրի ծառայությունը և նոցա առաջնորդի գործունեությունը, խոջաներն ու վեզիրներն սկսեցին համակրել հայերին, ինչպես առաջ, սկսան պատկառիլ Կարապետ արքեպիսկոպոսից: Մի օր, երբ ահագին խրամները լրանում էին, Ղեկիբ փաշան դարձավ դեպի Կարապետ արքեպիսկոպոսը և նորանից շնորհակալ լինելուց հետո՝ գոռոզամտությամբ ասաց. «Թո՛ղ այժմ փորձե ուսը մոտ գալ այս խրամներին և կտեսնի, թե ուր կհասնի յուր վիճակը»: Կարապետ արքեպիսկոպոսը, որ ավելի քան մի որևիցե փաշա լավ գիտեր օսմանյան տերության քաղաքական թույլ կողմերը, դարձավ դեպի փաշան և ասաց. ներեցե՛ք, փա՛շա, եթե ուսը հասնի մինչև այս խրամները, սոցանից այն կողմն անցնելը նորա համար դժվար չի լինիլ:

Այս ճշմարիտ և մարգարեական խոսքը, բխած մի «գեուր դարաբաշի» բերանից, կասկած ծնեցրուց՝ Ղեկիբ փաշայի սրտում դեպի Կարապետ արքեպիսկոպոսը, որ այդ պատճառով բավականին վշտեր կրեց հետո, բայց ի վերջո Ղեկիբ փաշայի ցույց տված չարությունքը լավությամբ փոխադարձրեց, փրկելով նորա կյանքը, ինչպես հետո կտեսնի ընթերցողը:

Խրամները վերջանալուց մի փոքր ժամանակ հետո, երբ ուսները տիրելով Ախալցխային, Գյումրիին և նոցա շրջականերին, առնելով Կարսը, մոտենում էին էրզուրումին, ս. էջմիածնից Եփրեմ կաթողիկոսի կողմից գալիս է հանուն «Առաջնորդի հայոց Կարնոյ» մի կոնդակ, որի մեջ ընդհանուր Հայոց կաթողիկոսը պատվիրում էր Կարապետ արքեպիսկոպոսին հրավիրել յուր ժողովուրդը, օգնել ուսաց, իբրև քրիստոնեից, երբ վերջիններս կմոտենան էրզուրումին: Այդ թուլթն ընկնում է փաշաների

ձեռքը, որոնք դարձյալ ատյան են կանչում նույն տարաբախտ եպիսկոպոսին: Բայց նախքան ատյան կանչվիլը, Կարապետ արքեպիսկոպոսն արդեն այդ բանն իմանալով, յուր կողմն ունեւր գրաված արքունի թարգմանին, որ տարբեր իմաստով թարգմանեց ատյանի առաջ Եփրեմ կաթողիկոսի կոնդակը, և թեպետ այդ ատենում Կարապետ արքեպիսկոպոսն արդարացավ և կաթողիկոսի կոնդակն իրան տրվեցավ, բայց ինքը և յուր ժողովուրդը ենթարկվեցան նորանոր տուգանքների և աշխատանքների⁵:

Ճանաչելով Կարապետ արքեպիսկոպոսի մեջ մեծ արժանավորություն և ամենագորեղ ազդեցություն բոլոր վիճակի հայ ժողովրդի վերա, փաշան նորան պարտավորում է երեք օրվա միջոցում, զորաց պաշարը էրզրումից բանակը կրելու համար, ճարել 200 համետած ձիանք: Դեռ երեք օրը չլրացած, ձիանը պատրաստի կանգնած էին փաշայի սարայի առաջ և Կարապետ արքեպիսկոպոսը նախասենեկում սպասում էր փաշայի նորոգ հրամանին:

Տեսնելով այդպիսի մի հաջողություն Կարապետ արքեպիսկոպոսի կողմից, փաշան ուրախությամբ գոչեց. «մաշալլա՛, զարաբաշ էֆենդի», և Կարապետ արքեպիսկոպոսին յուր մոտ դահվեի հրավիրեց: Շատ հասկանալի բան է, որ վերջին ժամանակներում օսմանցի իշխանավորների ժամանակ առ ժամանակ ցույց տված այդ հյուրասիրությունը ոչ միայն հաճելի չէին Կարապետ արքեպիսկոպոսին, այլ մինչև անգամ երկյուղալի, թե միգուցե նորան թունավորեին, թեև օսմանցիների, ինչպես առհասարակ բոլոր հին բարբարոս ժողովրդյան հասկացողության մեջ չկար այժմյան ավելի վտանգավոր քաղաքականությունը, որով թշմանին մոտենում է քեզ գաղտնի, լռելյայն, շոհելով, փայտայելով և մինչև անգամ պարզևատրելով: Բարբարոս ժողովուրդը մոտենում է յուր հակառակորդին՝ սուրը ձեռքին, հայտնի ու բացարձակ, նախատում և սպանում է հայտնի ու բացարձակ:

Փաշայի պատվերը՝ 200 ձի ճարելու վերաբերությամբ, արդեն պարզ ապացույց է, թե որքան անզոր էր օսմանյան

տերությունը: Զորապետները պատերազմական դառն ժամանակում 200 ձի ճարելու համար մի հայ եպիսկոպոսի էին ապավինում և վերջնիս ժամկոչների ու գզիրների միջոցով տված բանավոր հրամանները ավելի գործ էին առաջացնում, քան նոցա շրջաբերականները: Օսմանյան տերության մեղկ և թուլամորթ զինվորները, որոնք պատերազմ էին գնում միմիայն ճանապարհներին պատահած խեղճ ու անտերունչ գյուղերը ավարի առնել, հափշտակել և իրանց քաղցած փորը կշտացնել, չէին կարող, իհարկե, դեմ առ դեմ կանգնել և պատերազմել ռուսական ոգելից զինվորների դեմ:

Այդպես էլ լինում է: 1828 թվականին ռուսները տիրելով Ախալցխային, Քոբլիանին, Փոցխովին, Ածղորին, Ասբինջային, Խրթվիզին, Ախալքալաքին, Փամբակ և Շիրակ գավառներին, առնելով և Կարսը 1829 թվականին,* մոտեցան էրզուրումին: Օսմանցիք նոցա զորաց սլինները տեսնելուց ահաբեկված, սկսեցին դարձյալ յուրյանց ուժը հպատակ քրիստոնեից վերա փորձել: Նոցա կրոնամուլ մուլաները, կատաղի «ղարադելիները», լեռնացի «լաղերը», սուրերը ձեռքերը առած, շրջում էին փողոցներում և ամեն պատահող քրիստոնեի խողխողում, սպանում: Ողորմելի քրիստոնյայք անտեր ու անօգնական կոտորվում էին: Այդ սոսկալի ժամանակի տեսարանի վերա դաղափար կազմել կամեցողը թող կարգա «Բարթողիմյան գիշերները», մեր նպատակը չէ այստեղ վիպասանություն դրել, այլ դուրս բերել այդչափ եղեռնագործությանց ժամանակ մի վատ ազգի ձեռին խաղալիք եղած, հայկական վեղարին պատիվ բերող մի հայ եպիսկոպոսի մեծագործությունները:

Այդ ընդհանուր արհավիրքի ժամանակ, հարկ չկա ասել, որ ամեն հայ, մոռացած ամեն բան, մտածում էր միմիայն յուր և յուր գերդաստանի կյանքի ապահովության համար, և յուր միակ հույսն ու ապավենը գտնում էր նկուղներում ու դեանափորներում:

* Կարսը ռուսների կողմից գրավվել է ոչ թե 1829, այլ 1828 թ. հունիսի 23-ին:

Ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրված էր ծպտյալ շորերով, քաղցած ու ծարավ հայազգի Մանելօղլյանցի տան գեճ և խոնավ նկուղում անցցնել երեք օր և երեք դառն գիշեր: Հենց այդ նկուղի միջից էր, որ նա մի գիր գրեց կոմս Պասկևիչին և մաքսատան բեռնակիրներից Ֆերման անունով մի հավատարիմ կտրիճ հայի տրեխներում հասցրեց կոմսին: Այդ թղթի մեջ Կարապետ արքեպիսկոպոսը հայտնելով քրիստոնեից վիճակը, միևնույն ժամանակ ցույց էր տալիս կոմսին, թե ո՞ր ճանապարհով և ո՞ր կողմից պետք է հարձակվել էրզուրումի վերա և ո՞ր դիրքի վերա:

Այդ թուղթը կոմս Պասկևիչի առջև կարդաց և թարգմանեց Սերովբե կաթողիկ վարդապետը, որ ռուսաց զորաց հետն էր գնալիս և վերադառնալիս: Սերովբեն հետո ընդունեց լուսավորչական կրոնը, էջմիածնում ձեռնադրվեց եպիսկոպոս և նշանակվեցավ Աստրախանի Հայոց առաջնորդ: Սա մի գործունյա, աշխույժ և եվրոպական կրթություն ստացած անձն էր: Դորա կայքերից, իմիջիայլոց, էջմիածնին մնաց նորա Ծնիբան գյուղը, մի պատվական կալվածք, Ախալցխայի հյուսիսային կողմում, 20 վերստ հեռավորությամբ:

Դ

Մի քանի օր պաշարելուց հետո, ռուսաց զորքը հարձակվում է էրզուրումի վերա և առանց արյունահեղության տիրում է էրզուրումի գլխավոր դիրքը — ս. Նշան լեռը: Օսմանցիք մի քանի թնդանոթներ արձակելուց հետո հարկադրվում են անձնատուր լինել, գլխիվայր ծռելով յուրյանց դրոշակները, և ուղարկում են կոմս Պասկևիչին բերդի բանալիները: Կայծակի արագությամբ հասնում է օսմանցիների այդ ամոթալի պարտության լուրը նկուղներում և գետնափորներում ապաստարան գտած հայերի ականջը և նոքա սրտատրոփ դուրս են ընկնում քաղաքը:

Դուրս է գալիս յուր նկուղից և Կարապետ արքեպիսկոպոսը, հագնում է յուր շորերը, ծածկում է վեղարը և ձի աշտանակած (հեծած), ս. Խաչը ձեռքին, Շեքերճյան Գրիգոր պատվելու ընկերակցությամբ դիմում է դեպի ս. Նշան լեռը՝ կոմս Պասկևիչին դիմավորելու: Անվահերոտություն սրտի և անդրդվելի հավատ և վստահություն դեպի քրիստոնեական ս. Խաչը՝ ահա Կարապետ արքեպիսկոպոսի անսայթաք առաջնորդները Մանելօղլյանի տանից մինչև ս. Նշան լեռը — մեկ ժամից ավելի ճանապարհ գնալը: Անվնաս հասավ Կարապետ արքեպիսկոպոսը կոմս Պասկևիչի մոտ, խաչակնքեց կոմսին և նորա զորքին, օրհնեց և գրկախառնեցավ նոցա: Բայց մենք թողնենք, ընթերցող, այդ գրկախառնությունքը և դառնանք էրզուրում:

Էրզուրումի և բոլոր վիճակի հայ ժողովուրդը, գլխավորապես երիտասարդները, ռուսների հաղթությամբ խրախուսված, և անփորձությամբ կարծելով թե հենց այդ է, որ ազատվեցան բարբարոս օսմանցուի իշխանության լծից, սկսում են տաք գլխությամբ անկարգություններ անել, կամենալով դարերի ընթացքում յուրյանց կրած վշտերի և նախատանաց վրեժը մի քանի օրում լուծել. նոքա բացարձակ կերպով սկսում են վիրավորել օսմանցիների մինչև անգամ կրոնական զգացմունքները: Ժողովուրդը, որի կյանքը, իրավունքները, փողը, անձնական և ընտանեկան պատիվը և որ նորա համար գլխավորն է՝ յուր «լույս հավատը» հարյուրավոր տարիներ շարունակ վիրավորված է եղել, նոքա, իբրև կենդանի, խորհուն և զգացող արարածներ, միշտ ոտնակոխ են եղել և միշտ ճնշված ու հալածված լուել են ու լուել, ներկա հանգամանքներում, պետք է ճշմարիտն ասած, այլևս չէին կարող լուել: Երբ մի տերության, արտաքո ամենայն իրավանց և արդարության, ճնշում և ստորացնում է յուր հպատակ որևէ ազգության անհատական, ազգային և կրոնական զգացմունքները, նա այդ ազգության մեջ ծնեցնում է անսահման ատելություն դեպի ինքը — տերությունը, թեև ծածուկ և լուելյայն, բայց և այնպես նա արծարծում

է նորա մեջ զարհուրելի սոսկալի վրեժխնդրության ոգի, որ նման է լինում այն կրակի կայծերին, որոնք թաղված են լինում մոխրի տակ: Երբ որևիցե պատճառով կշարժես այդ մոխիրը, տակից դուրս կցատկին անհամար կայծեր և մեծ հրդեհ կպատճառեն:

Կարապետ արքեպիսկոպոսը կոմս Պասկևիչի կշտից վերադառնալիս էլ, հետո էլ շատ հորդորներ և քարոզներ կարդաց յուր ժողովրդին՝ վերջ տալ այդ չարություններին, անմիտ և վտանգավոր վարմանցը, բայց այդ ամենը ապարդյուն անցավ: Այդ միջոցներում գալիս է Կարապետ արքեպիսկոպոսի մոտ խրամաների վերակացու Ղեկիբ փաշան և ներողություն խնդրում նորանից յուր հասցրած վատությանց համար, աղերսում է ազատել յուր կյանքը, ասելով. «եթե 20 տարի առաջ մենք ծանոթացած լինեինք միմյանց հետ էրզուրումը այսօրին չէր հասնիլ»: Անհիշաչար եպիսկոպոսը յուր բարեկամների ձեռքով այդ փաշային փախցնում է Կ. Պոլիս:

Երբ ռուսական զորքը կոմս Պասկևիչի առաջնորդությամբ մի կողմից հաղթություն էր անում Փոքր Ասիայում, մյուս կողմից մի ուրիշ բանակ Տիրիչ Ֆելդմարշալի առաջնորդությամբ գնում էր Կ. Պոլսո վերա, և 1829 թվի օգոստոսի 20-22-ին այդ բանակի առաջընթաց հեծելազորը արդեն հասել էր Սիլիվրի, օսմանյան կայսր՝ սուլթան Մահմուտ տեսնելով այդ մոտալուտ վտանգը, ստիպվեցավ խոնարհիլ եվրոպական ղեսպանների առաջարկությանը և խնդրել հաշտություն. և այդպիսով ահա սեպտեմբերի 14-ին 1829 թվականի կատարվեցավ Ադրիանուպոլսո դաշնագրությունը, որի երկրորդ հոդվածի զորությամբ 1828 թ. առնված տեղերը, այսինքն Ախալցխան, Ասպինջեն, Քուրեանը, Փոցխովը, Ածղորը, Խրթվիզը, Ախալքալաքը յուր շրջակա գյուղերով, Գյումրին յուր Փամբակ և Շիրակ* գավառներովը մնացին ռուսաց, իսկ 1829 թվի

* 2. Գեղամյանցը սխալմամբ Գյումրիի և ամբողջ Շիրակի միացումը Ռուսաստանին վերագրում է Ադրիանուպոլսի պայմանագրին:

առնվածները, այսինքն էրզուրումը, Բայբուրդը (Բաբերդ) և Բայազիդը մնացին դարձյալ օսմանցիներին: Այդ դաշնադրությունը ավելի քան որևիցե այլ դժբախտություն մեծ հարված տվավ առավելապես հայ ժողովրդին: Կարգեպիսկոպոսը – այդ բարբարոս օսմանցիների և նույնիսկ յուր անխոհեմ և անհեռատես ժողովրդյան ձեռին «կրակն ընկած» պաշտելի անձը, քաջ – զիտեր, որ Ադրիանուպոլսո դաշնադրությունից հետո յուր քրիստոնյա ժողովուրդը այլևս օսմանցիների ձեռին թողնելը անհնարին բան էր, որովհետև ուշ թե շուտ նոքա նյութապես և բարոյապես զոհ պիտի գնային օսմանցիների վրեժխնդրությանը. ուստի նախապես կոմս Պասկևիչի և Բագրատիոն* զորապետի հետ խորհրդակցելով և նոցա միջոցով կայսերական հաճություն ընդունելով, հրավեր կարդաց յուր ժողովրդյան՝ ռուսական զորաց հետ իմիասին գաղթել Ռուսաստան⁶:

«Գաղթե՛նք այո՛», տվեց միաբերան ժողովուրդը և հարցը վճռվեցավ: Բայց ինչ որ շուտ է վճռվում լոկ խոսքով, այնպես շուտ էլի վճռվում գործով: Հազարավոր անձինք պետք է թողնեին տուն, տեղ, կահ, կարասիք և գաղթեին. վիճակի բազմաթիվ եկեղեցիների և վանքերի անոթները, զարդերը, ս. մասունքները և զգեստները, նույնպես և անշարժ կալվածքներն ևս էլը կարելի թողնել. ուստի Կարապետ արքեպիսկոպոսը այդ հանգամանքներում ևս մեծ գործունեությամբ վաճառեց, ինչ որ կարելի էր վաճառել, իսկ մնացյալները հավաքեց և տասներեք սայլերի վրա բարձած, բերավ յուր հետ Ռուսաստան: Բայց իհարկե, շատ բաներ էլ մնացին այնտեղ. «բազում ինչ թողաք անդանոր», ինքը ասում է յուր մի թղթում: Այդ անոթների և զարդերի մեջ կային բավականին հազվագյուտ բաներ, մինչև 1200 տարվա մի ձեռագիր

Մինչդեռ, այդ տարածքները, որ մինչ այդ ննթարվում էին Իրանին, Գյուլիստանի (1813թ. Հոկտեմբեր) հաշտությամբ արդեն անցել էին Ռուսաստանին:

*Պետք է լինի ոչ թե Բագրատիոն, այլ Պանկրատև:

Ավետարան և այլն, բայց դոցա վերա մենք կխոսինք յուր տեղում: Մեծապես օգնեց Կարապետ արքեպիսկոպոսը և ժողովրդյան վաճառել յուրյանց կահ կարասիքը, ստանալ մասամբ յուրյանց առնելիքները. և այսպեսով էրզուրումից, Բայբուրդից և Բայազիդից յուր շուրջը հավաքած 90000 հոգի՝ այր, կին, երիտասարդ, ծեր, տղա և աղջիկ, որոնց հետ հետո միացան 5000 հոգի էլ Կարսից, գլուխ կանգնած Կարապետ արքեպիսկոպոսը, 1830 թվականի մայիսին 10-ին, թողեց օսմանյան երկիրը, ուր քսան և երկու երկար տարիներ առաջնորդություն էր արել բազմաթիվ հայ ժողովրդյան վերա և այն, ինչպես տեսաք, այնքան դառնությամբ և չարչարանքներով, մանավանդ վերջին ժամանակներում: Եվ յուր բազմամյա և գործունյա ծառայությանց համար նա ստացել է ս. էջմիածնի Եփրեմ կաթողիկոսից և Կ. Պոլսո ու ս. Երուսաղեմի պատրիարքներից «զբազմաթիվ կոնդակս», որոնց մեջ մեծ շնորհակալություններ է հայտնվում Կարապետ արքեպիսկոպոսին այն նվիրատվությանց համար, որ նա հավաքել է հօգուտ նույն վանքերի և սովատանջ հայերի զանազան ժամանակներում և զանազան դեպքերում:

Ե

Շատ և շատ նեղություններ կրելով ճանապարհին, ամբողջ շաբաթներով և ամիսներով Արփաչայ և Կարս գետերի եզերքներին զանազան ձորերում և հովիտներում մնալուց հետո, այդ ահագին բազմությունը յոթն ամսվա միջոցում հետզհետե վերջապես հասավ Ռուսաստան, ուր մի մասը Ալեքսանդրապոլ (գլխավորապես Կարսից գաղթողները) և նորա գավառը, մի մասը Ախալքալաք և նորա շրջակաները (Ձավախեթ), իսկ մնացյալները՝ 2800 տուն կամ 6-7 հազար հոգի Ախլցխան ընտրեցին իրանց բնակության համար: Կարապետ արքեպիսկոպոսը, որ իբրև մի նոր Մովսես մարգարե առաջնորդում էր այդ

ժողովրդին, մեծամեծ նեղություններ կրեց ճանապարհին: Աճապարանոք իրանց տներն ու տեղերը, իրանց կահ-կարասիքը Տաճկաստան թողնող հայ ժողովուրդը երկարատե Գանապարհին տոթի և շոգի, անձրևի ու ցրտի տակ, անտուն ու անպատսպարան մնալով, սկսավ հուսահատվիլ. ոմանք սկսան ետ դառնալ դեպի էրզուրում, այլք սկսեցին տրտնջալ Կարապետ արքեպիսկոպոսից, համարելով նորան պատճառ այդչափ թշվառությանց, լաց և կոծի աղաղակը մինչև երկինք բարձրացավ: Կարապետ արքեպիսկոպոսի դրությունը շատ վատ էր, բայց նա շշկվող մարդիկներից չէր, նա նման էր քաջ զորավարի, որ պատերազմի նեղ և ամենադառն ժամանակն անգամ գիտե գյուտեր անել, այնպիսի ոգևորեցուցիչ խոսքեր ասել, որով թե զինվորաց բարոյական ուժը կբռնե և թե հաջողությունը կվաստակե: Այդպիսի գյուտեր անելու շատ ընդունակ էր Կարապետ արքեպիսկոպոսը: Նա ուներ մի զենք, մի զորավոր զենք, որի առաջ խոնարհվում էին յուր ժողովրդի ամեն գոռոզ մտքերն ու հեղհեղուկ խորհուրդները: Այդ զենքը Կարապետ արքեպիսկոպոսի ճարտար լեզուն էր: Նորա մի թեթև քարոզը, մի համառոտ ատենաբանությունը բավական էին դեպի ինքը և դեպի յուր նպատակները հեղաշրջել հազարավոր խստապարանոց և ապստամբ մարդիկ: Ահա թե ինչով է մեկնվում այն զորեղ ազդեցությունը, որ ուներ Կ. արքեպիսկոպոսը յուր հոտի վերա:

Ռուսաց տերությունը, ըստ խնդրանաց և միջնորդության Կարապետ արքեպիսկոպոսի, յուր կողմից մեծամեծ օգնություններ արավ այդ գաղթականներին: Այսպես գաղթականության ժամանակ նա տալիս էր նորանց հաց, ալյուր, սայլեր և ճանապարհի ապահովության և անվտանգավորության համար պահապաններ. իսկ գաղթելուց հետո կայսերական հրովարտակով, 2-ն ապրիլի 1831 ամի, գաղթական ժողովրդյան (ախալցխացիներին) ընծայվեցավ 380000 ռուբլի արծաթ դրամ և 150000 ռուբլի դրամ փոխարինարար, որպիսի գումարները մասնատրելու

Համար նշանակվեցավ Հանձնաժողով ընդ նախագահու-
թյամբ Կարապետ արքեպիսկոպոսի, որի միջնորդությամբ
դարձյալ տերությունը ճրիաբար բաժանեց նաև ցորյան՝
կերակրվելու և սերմանելու Համար, արհեստավորներին
մետաքս, բամբակ, երկաթ և զանազան նյութեր ու գոր-
ծիքներ. բնակարաններ շինելու Համար հող և փայտեր ու
զանազան ատաղձներ: Հենց այդ ժամանակից սկսվեցավ
չինվիլ Ախալցխայի այժմյան Նոր քաղաք կոչված մասը,
Փոցխով գետի աջակողմում, որտեղ առաջ բանջարանոց
էր: Իսկ մինչև այդ բնակարանների շինվիլը, այդ բազ-
մությունն ստիպված էր ըստ մեծի մասին վրանների տակ
բնակիլ՝ Ջիրիթ-մեյդան կոչված դաշտի սարահարթի
կողքերում և Բաբադի գառիվայրում: Համոզված լինելով,
որ տերության կողմից եղած այդ օգնություններն
ժամանակավոր էին և ժողովուրդը չէր կարող միշտ հույսը
դորանց վերա դնել, Կարապետ արքեպիսկոպոսը հնարքներ
մտածեց, որ ժողովուրդը իրան ձեռքովը հայթայթե յուր
հացը: Նա տերությունից խնդրեց հունվարի 19-ին 1832
թվականի և ստացավ այն արտոնությունը, որով գաղթա-
կան ժողովրդյան ամենայն տեսակ մաքսի ազատություն
էր տրվում մինչև յոթը տարի և այդ արտոնության պետք
է վերաբերել անշուշտ այն հանգամանքը, որ Ախալցխա-
յում սկզբում նույնպես շուտ ծաղկեցան արհեստներն ու
վաճառականությունը: Բացի դորանից գաղթականներին
տրվեցավ և արքունական հարկի ազատություն, որ չնա-
յելով հետո առաջացած զանազան խոչընդոտներին և
դժվարություններին, Կարապետ արքեպիսկոպոսը պահ-
պանեց գեթ մինչև յուր մահը (1856 թ.)⁹:

Չբավականանալով այդ ամեն բանով և յուր հոտի
բարօրության և բարեկեցության գաղափարով միշտ տո-
գորված լինելով, Կարապետ արքեպիսկոպոսը դիմում էր
չատ անգամ դեպի տերությունը զանազան խնդիրներով⁹:

Շատ, խիստ շատ են այդ խնդիրների թիվն ու տեսակը,
չատ են նմանապես և տերությունից ստացված արտոնու-
թյուններն ու առանձնաշնորհությունները, որոնք հետո

ժամանակին և վատթար անձանց ազդեցության տակ կորել, անհայտացել են: Այդ խնդիրների կարգումն էին և այս երկուսը՝ ա) Ախալցխայում առանձին ազգային դատարան հիմնել. բ) Ախալցխայի մեծատանց սերնդոց իշխանական տիտղոս շնորհել, որոնք տերուծյունն ինքը բացասեց Կարապետ արքեպիսկոպոսին:

Կարապետ արքեպիսկոպոսի գլխավոր նպատակներից մինն էլ այն էր, որ գաղթական ժողովուրդը խառն չլինի բնակված ուրիշ ազգության հետ. այդ պատճառով նա չհամաձայնեցավ տերուծյան առաջարկությանը, որով Ախալցխայի գաղթականների համար տեղ էր նշանակված Թիֆլիզի այժմյան «գերմանական կոլոնիա» կոչված դաշտավայրը և ավելի լավ համարեց մնալ «ավերակ Ախալցըխայում»: Երբ Փոցխով դետի աջակողմը գաղթականներին տրվեցավ բնակարաններ շինելու և Ախալցխայի բնիկ քրիստոնյաներն ուզեցին նույնպես Րաբադից և «Դարա-մեհլեից» գալ այնտեղ, Կարապետ արքեպիսկոպոսը շատ ընդդիմացավ և չթողեց: Այդ հարցը նա շատ հաջող կերպով պաշտպանել է յուր նամակներում, որ առ փոխարքայն Կովկասու բարոն Ռոզեն:

Մենք արդեն տեսանք, թե ինչ մեծ և զորեղ ազդեցություն ունեւր Կարապետ արքեպիսկոպոսը օսմանյան երկրում յուր ժողովրդյան վերա, միևնույն այդ ազդեցությունը ունեցավ և Ռուսաստանում, մանավանդ այնքան իրավունքներ և արտոնություններ ձեռք ձգելից հետո: Ժողովուրդը մեծ և փոքր, այր և կին անխտիր ամեն մի դեպքում սովոր էր էլի դիմել միշտ դեպի յուր «մեծավորը» և «մեծավորը» միշտ պատրաստ էր նորան օգնել խրատելով, հորդորելով, սաստելով և հանդիմանելով:

Տերության կողմից նշանակված այն ժամանակվա դատավորները, կառավարիչները հայ ժողովրդյան աչքում ձևի համար էին կարծես. գաղթական ժողովուրդը նորանց մեջ ոչինչ բանի համար և ոչ մի դեպքում կարոտություն չէր զգում, իսկ եթե նորանք երբեմն միջամտում էին դեթ քաղաքական գործերի մեջ իրանց պաշտոնից հարկադրը-

ված, այն ժամանակ գաղթական ժողովրդյան տրտունջն ու բողոքը երկինք էր բարձրանում. «չենք ուզել, փոխե՛, Հեռացու՛ր»: Եվ քանի՛ քանի ոստիկանարանի ծառայողներ, քանի գավառապետներ այդ կերպով փոխել է տված Կարապետ արքեպիսկոպոսը: Այդ և այդպիսի հանգամանքները մի քանի ժամանակից Հետո եղան պատճառ, որ Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրվեցավ Հեռացնել իրանից ժողովրդին քաղաքական գործերում. բայց տգետ ժողովուրդն այդ մղումը բոլորովին ուրիշ կերպ մեկնելով, սկսավ բացարձակ տրտնջալ յուր բարերարի դեմ և նորան համարել միակ պատճառ յուր թշվառության, ուստիև ամեն տեսակ տգեղ վարմունք գործել նորա դեմ:

1831 թվականից սկսյալ մինչև 1835-ի վերջերը, այսինքն գաղթականության առաջին հինգ տարիները, Կարապետ արքեպիսկոպոսի կյանքը ներկայացնում է մեզ մի լի վշտերով պատկեր նյութական և բարոյական կատարյալ մարտիրոսության. նա հինգ երկար տարիներ հանգիստ չունեւր յուր ժողովրդի անթիվ և անհամար իրավացի և անիրավացի, հարմար և անտեղի պահանջներից, բողոքներից, գանգատներից, մինչև անգամ հայհոյություններից: Այսպես կանայք բաղնիս գնալիս յուրյանց «մեսփափուճները» (ոտնամանները) խրվում են ցեխերի մեջ, նորանք հիշում են էրզուրումի «ղալտրմները» (սալահատակները) և բողոքում են «մեծավորին», նորան հայհոյում են: Բաղնիսի ջրերը «պաղ» (ցուրտ) են լինում, մեղավորը «մեծավորն» է: Բաղնիս կամ եկեղեցի գնալիս ռուս աստիճանավորները կամ զինվորները նորանց «երեսները կաշեն» (երեսներին մտիկ են տալիս) մեղավորը «մեծավորն» է: Մի ռուս զինվոր և մի հայ պատանի կամ երիտասարդ միմյանց հետ կռվում են, ծեծվում են, «մեծավորն» է մեղավոր. մի գավառապետ, մի ոստիկանարանապետ փոքր ինչ խիստ է լինում, փողոցների մաքրության հոգսն է քաշում, «մեծավորն» է մեղավոր. ժողովուրդը պահանջում է մեծավորից «մուխաղ» (անպատճառ) փոխել (ոչ փոխել տալ հա՛) նորան. մինի

տունը անձրևից կաթում է, «մեծավորն» է մեղավոր. Ախալցխայի օդը ոմանց «վերա չի գալ», «մեծավորն» է մեղավոր. մյուսի առևտուրը «լավ չի բանել», «մեծավորն» է մեղավոր. պաշարեղենը երբեմն թանկանում է, «մեծավորն» է մեղավոր: Այս բաները որքան որ մի կողմից կարող են ապացույց համարվիլ գաղթական ժողովրդյան միամտությանը և տգիտությանը, մյուս կողմից ևս լավ ապացույցներ են, թե ժողովուրդը որքան վստահություն ունենա կարապետ արքեպիսկոպոսի վերա, և մի կողմից կարծես իրավամբ պահանջում էր նորանից, որ առջևն առնեն այն խստությանց, որ բանեցնում էր իշխանությունը էրզրումում հետ փախչողների դեմ, որոց և կողակներով հետ էր դարձնում ճանապարհից:

Այս և այսպիսի հազարավոր բողոքներն ու տրտուներները հետզհետե բազմանալով և սաստկանալով, պատրաստեցին այն ապստամբությունը և մոլի վրեժխնդրությունը, որ ուզեց թափել գաղթական ժողովուրդը, գլխավորապես ստորին դասակարգը, յուր բարերարի գլխին, և 1834 ամի սեպտեմբերի 23-ին սուր ու դանակ, կացին ու փետատ ձեռքերին՝ արք և կանայք խուռն բազմությամբ, խնուսցի Մկրտիչ հազարապետի առաջնորդությամբ՝ մոլեգնաբար հարձակվեցան դեպի Րաբադը՝ «մեծավորին խուցը»՝ նորան սրախողխող անելու:

Հեռվից տեսնելով, որ այդ խառնիճաղանճ բազմությունը շտապում է դեպի յուր բնակարանը, անվրդով և վեհանձն Կ. արքեպիսկոպոսն սպասավորների միջոցով տան դռներն ու պատուհաններն ամրացնելով և բերդից յուրյան օգնության եկած զինվորների ձեռամբ, առանց արյունհեղության, ժողովրդյան ձեռքից զենքերը և սուր դործիքները հավաքելով, ժողովեց նորանց Դաշղանի եկեղեցին և ալեծուփ ու մրրկյալ հոգով ու սրտով խոսեցավ այն նշանավոր քարոզը, որի ամեն մի տողից կաթում է ցասումն ու կարեկցություն, և որ ապացուցանում է կյանքի և բարօրության մասին նորա ունեցած ճիշտ հայացքները: «Մի՛ յուսայք ի մարդիկ և ի զորութիւնս

նոցին, այլ յուսացէ՛ք յԱստուած և յողորմութիւն նորա», բեմից որոտաց Կարապետ արքեպիսկոպոսը, այդ նշանավոր խոսքերը յուր քարոզին բնաբան առնելով:

Մանրամասնաբար նկարագրելով ժողովրդականաց արած չարություններն ու անկարգություններն էրզուրումում, հիշեցնելով յուր կրած երեսնամյաց վշտերն ու տառապանքները, ակներև կացուցանելով նորանց յուր մշտական պատրաստականությունը՝ ամեն մի կարելի եղած դեպքում օգնել նորանց, Կարապետ արքեպիսկոպոսը արտասովալից աչքերով կշտամբեց այդ անմիտներին, հասկացնելով նորանց, որ մի մարդու, մի «մեծավորի» ուժից և կամեցողությունից բարձր է նորանց ամենքին յուրյանց սրտի ուզածին համեմատ բավականություն տալ. թե նորանք «ամենաթշվառ արարածներ և քան զմըջիւնս անպետք» կլինին աշխարհի երեսին, եթե փոխանակ յուրյանց ձեռքերն ու խելքներն աշխատեցնելու և նորանց վերա հուսալու, ամենայն ժամանակ յուրյանց հույսը ղնելու են մի «մեծավորի» վերա: «Մի՛ յուսայք ի մարդիկ և ի զորութիւնս նոցին, այլ յուսացէ՛ք յԱստուած և յողորմութիւն նորա... Անմի՛տք, ո՛չ ապաքէն երկնից պատգամն ասէ. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»:

Այս սրտառուչ և կրակոտ քարոզովն ահա, որ Կարապետ արքեպիսկոպոսը սանձեց զայրացած ժողովրդի կատաղությունը, որոնք ափ ի բերան չոքեցան նոցա դիմաց և ներողություն խնդրելով, ակնկոր ետ դարձան յուրյանց տները, պատկառելի ծերունու աչքերից թափված արտասուքները տանելով յուրյանց հետ ի խայթ և ի կշտամբումն սրտի և խղճի:

Վերջապես 1835 թվականի վերջերում, երբ արդեն գաղթական ժողովուրդը հաշտված և ընտելացած էր յուր նոր հայրենիքի հետ, ուներ յուրյան համար եկեղեցի¹⁰, պատրաստի տուն և բնակարան և չափավոր ապրուստի եղանակ, Կարապետ արքեպիսկոպոսը, միշտ հաստատուն յուր գլխավոր և էական նշանաբանին, այնուհետև մտածեց

յուր ժողովրդի զավակաց կրթության և դաստիարակության մասին, բայց գիտենալով, որ այդ բարձր նպատակը չի կարող իրագործվիլ և հարատև լինիլ առանց հաստատուն եկամտի, միևնույն ժամանակ չկամենալով հետաձգել ուսման դործը, նախևառաջ տաճկական մի մղկիթ (որ հետո կերպարանափոխեց և շինեց եկեղեցի «Ս. Լուսաւորիչ» անունով) հարմարեցնելով ուսումնարանի, Կարապետ արքեպիսկոպոսը այնտեղ հավաքեց ազգային մանկտին և ժամանակավորապես այնտեղ էին սովորում ազգային լեզուն և կրոնը, մինչև Կարապետյան ուսումնարանի շինվիլը:

Օգուտ քաղելով ժամանակից և կալվածքների էտանությունից, Կարապետ արքեպիսկոպոսն աճապարեց և չնչին գներով հետզհետե գնեց Ախալցխայի մեջ շատ պարապ տեղեր, խանութներ և տներ¹¹, իսկ Ախալցխայից դուրս, նորա փաշայիկում, Կարծախ, Խավետ, երկու Տատեշներ, Վերանա Կարծախ, Խողաբին, Կարավ, Կոնճղա, Չուրչուտո, Կանաթխև, Սյուր, Ծիրա, Կոկաշեն, Պխիսցիխար, Թուտրութուբան, Բալաթուբան դյուղերը, ավերակներն ու ագարակները: Այդ կալվածներից Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն մնացին Ախալքալակա գավառում, Տաճկաստանի Չլտր նահանգին սահմանակից եղածներն՝ Կարծախ, Խավետ, Տատեշ-դյուղ, Ավերակ-Տատեշ, Խողաբին և Կարավ՝ յուրյանց մեջ գտնված վարելահողերով, լեռներով, լճերով, առուներով, մարգագետիններով, արոտներով և դաշտերով, որոնք Կարապետ արքեպիսկոպոսը գնել էր 1834–1840 թվականներում տաճկահայատակ Թայր-Բեգ Նաղգի-բեգ օղլուց 44000 օսմանյան դուռուշի (այն ժամանակվա ընթացիկ դնով 2315 ուրբլի ուսաց փող) և որոց կուսվյան հաստատված է հետո Թիֆլիզի քաղաքական և քրեական դատարանում 31-ն դեկտեմբերի 1852 ամի N16 ¹²: Երկրորդ՝ Պխիսցիխար, Տկվարի, Թուտրութուբան, Փողրաթուբան, Բալաթուբան և էլի մի քանի ավերակներ, որոնք, դժբախտաբար, հողևոր իշխանության սաստիկ թուլության պատճառով, Կարա-

պետ արքեպիսկոպոսի մահվանից հետո, անցած են մասնավոր մարդկանց ձեռքը:

Երրորդ՝ ս. Փրկիչ եկեղեցուն մնացին Գևորգ արքեպիսկոպոս Տեր-Դավթյանի գնածներն՝ ա) Սուլդա գյուղի երկու բաժինն. բ) Քեովխագ. գ) Բեղաշեն, դ) Ջատանա, ե) Պոզալ, զ) Կիլերտա և է) Քեսիկ-ղայան ավերակները, որոնք Գևորգ եպիսկոպոսը գնել է 5500 ղուռուշի կամ 284 ու. 70 կոպ.: Այդ կալվածքը Գևորգ եպիսկոպոսը մոտ 15 տարի առանց մի որևիցե վեճի տիրապետում էր առանց կուպչայի, իսկ երբ վերջերում կամեցավ կուպչա հաստատել տալ ս. Փրկիչ եկեղեցու անունով, գններալմայոր Ֆոն-Կլյուգենաուն և տեղական իշխանության մյուս պաշտոնավարք ղանազան անվայել միջոցներով կամեցան խլել եկեղեցու ձեռքից այդ կալվածքը և նորան հարքունիս գրավել, բայց Կարապետ արքեպիսկոպոսը չթողեց այդ բանը, բողոքելով փոխարքային նոցա ապօրինի վարմաց դեմ:

Կարապետ արքեպիսկոպոսի գնած վերոհիշյալ կալվածքներից, այսինքն Կոնճղա, Կանաթխև, Սյուր, Ծիրա, Կոկաշեն գյուղերն և Չուրչուտո ագարակն ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսը ընծայագրերով նվիրել է յուր ազգականներին, Հովհաննես, Մանուկ, Վարդան և Հակոբ Բագրատունյանցներին, որոց անունով հետո հաստատված են և կուպչաները:

2

Շատ մարդիկ մինչև այսօր Կարապետ արքեպիսկոպոսին բամբաստում են երկու բանի համար. ա) որ նա յուր գնած կալվածքներից վերոհիշյալ մի քանի գյուղերն ու մի ագարակը տվել է յուր ազգականներին. բ) թե ս. Փրկիչ եկեղեցուն թողած գյուղերը և ավերակները չէր ընծայիլ եկեղեցուն, եթե տերության օրենքը թույլ տար յուր անունով կուպչա շինել: Այդ գյուղերի և ավերակների

մասին, հիրավի, ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսը յուր կտակումը այսպես է գրում. «Գիւղօրայքն իմ Կարծախ, երկու Տատէչներ, Խաւէտ, Խողաբին, Կարաւ և Վերանա-Կարծախ և ընդ սոցին եղեալ լերինք և խոտնոցք սանջախին Չլտրոյ, որ անկանի ի կողմն ուսաց, զորս 1834 ամի գնեալ եմ ի սեփհական արդեանց իմոց, միայն ընդհանուր կանոնաց տերութեան, որով չհրամայի կուսակրօն հոգևորականաց հաստատել զկուսչայս յանուն իւրեանց, ըստ բարձրագոյն բարեհաճութեան հրամայեցաւ ինձ տալ հաստատել զայնս յանուն միոյ եկեղեցւոյ, որում ես յօժարիցիմ. վասն որոյ ես ետու հաստատել զայն կուսչա յանուն ս. Փրկիչ եկեղեցւոյ»: Այդ երկու կարծիքների սխալականութիւնը ցույց տալու համար՝ մենք ստիպված ենք մի քանի խորհրդածութիւններ անել մեր կողմից:

Մենք արդեն տեսանք, թե Կարապետ արքեպիսկոպոսը ի՞նչ եղանակով է փող վաստակում: Նախ՝ նա լինելով մի ընդարձակ վիճակի հոգևոր առաջնորդ, ուներ իհարկեւ, եթե ոչ յուր սահմանյալ ռոճիկը, գեթ առատ նվիրաբերութիւնք ժողովրդի կողմից: Այդ նվիրաբերութիւնքը Կարապետ արքեպիսկոպոսի արդար սեփականութիւնն էին, այնպես, ինչպես մեր ամենիս ստացած ռոճիկը, որւէ ծառայութեան համար, մեր սեփականութիւնն է: Երկրորդ, Կարապետ արքեպիսկոպոսը պարապում էր և անասնաբուծութեամբ և այդ պարապմունքը նորան տալիս էին գլխավոր օգուտներ: Ուրեմն Կարապետ արքեպիսկոպոսը էր միւսումնաբան և վաճառական: Երրորդ՝ բոլորովին նման չլինելով այն քանքարաթագուց ծառաներին, հին ժամանակի հոգևորականներին և հարուստ աշխարհականներին, որոնք սիրում էին փողը հավաքել և սնդուկներում դարսելով երբեմն երբեմն նորանց երեսին մտիկ տալ և ուրախանալ, կամ թե չէ՝ այդ փողերով միմիայն յուրյանց փորերը հաստացնել, Կարապետ արքեպիսկոպոսը ընդհակառակը՝ յուր փողերը միշտ տոկոսով տալիս էր այս ու այն մարդուն, գլխավորապես աղքատ վաճա-

ուսանողներին, այս և այն փաշային, այս և այն առևտրական հարուստ տներին, որով թե ինքն էր շահվում և թե ուրիշներին օգնում, շահեցնում: Ուրեմն Կարապետ արքեպիսկոպոսը էր միևնույն ժամանակ և սեղանավոր: Չորրորդ՝ հավանական է կարծել, որ տերության կողմից գաղթական ժողովրդին տված վերոհիշյալ մեծաքանակ գումարներից յուրյան ևս բաժին հանեց Կարապետ արքեպիսկոպոսը: Նա ինքը սաստիկ սակավապետ և չարքաշ կյանք էր անցցնում, ինչպես վերջերում կտեսնենք, և յուր ձեռքը հասած հետին ղուռուշն անգամ շահեցնում և բազմացնում էր: Այս եղանակներով ահա ժողոված և դիզած էր Կարապետ արքեպիսկոպոսը յուր ահագին կարողությունը: Ո՛վ ինչ կարող էր ասել Կարապետ արքեպիսկոպոսին, եթե նա ուներ յուր անձին և հաճոյից համար վատներ յուր կարողությունը, և միթե չե՞ն եղած մյուս բարձրաստիճան հոգևորականների մեջ վատնողներ, որոց մասին մենք մի խոսք անգամ չենք ասում. ընդհակառակը, Կարապետ արքեպիսկոպոսը չվատնեց, այլ պահեց և ազնիվ ու բարձր նպատակների վերա գործադրեց: Էրզուրումի վիճակի վերա առաջնորդ նշանակված օրից մինչև յուր մահը, Կարապետ արքեպիսկոպոսը յուրյան կետ նպատակի համարած էր հիմնել և հաստատուն աղբյուրներով ասպհովել եկեղեցի, ուսումնարան, որին նա գավիթ եկեղեցվո էր անվանում և աղքատանոց: Այդ երեք վսեմ նպատակներն էլ նա, ուր և եղել է, զարմանալի անձնանվիրությամբ և հաջողակությամբ հառաջ է տարել: Նորա փողերով և նորա ձեռնտվությամբ հազարավոր աղքատ մանկուկներ կրթվելով՝ այսօր յուրյանց համար մի կտոր հաց ունին, նորա պաշտպանությամբ և զոհաբերությամբ հառաջացել և զանազան փառքերի և աստիճանների հասել են այն հարյուրավոր հայ՝ թե քաղաքական և թե զինվորական աստիճանավորները, որոնք այսօր փայլում են փոքրիշատե գաղթական ժողովրդի մեջ: Կարապետ արքեպիսկոպոսի այդպիսի որդեգիրներից, քաղաքական և զինվորական աստիճանավոր-

ներից, մինչև այսօր Ախալցխայում և նորա վիճակում կան 56 հոգի, թողնենք հազարավոր քահանաները, թողնենք էրզուրումի մեջ զանազան բախտի ու աստիճանի հասցրածները: Այդպես և այդքան մարդիկ կերակրելով, բախտավորեցնելով և զանազան փառքերի ու աստիճանների հասցնելով, Կարապետ արքեպիսկոպոսը կարո՞ղ էր միթե բարձիթողի առնել յուր արենակից բազմաթիվ ազգականներին ու նորանց երեսը չմտիկ տալ: Եթե, ս. Գրոց վկայության համեմատ, «արդարն ողորմի և անասնոյ իւրում, և աղիք ամբարշտաց անօրենք են», ո՞չ ապաքեն Կարապետ արքեպիսկոպոսի ազգականները նույնպես մարդիկ էին, որոնք մշտապես և միշտ ապրելով նորահետ միասին, նորա ցավոցը ցավակից և վշտացը վշտակից էին ավելի, քան նորա ժողովուրդը: Վերջապես ի՞նչպես կարող էր Կարապետ արքեպիսկոպոսը օգնել, սիրել ուրիշներին, եթե չուեննար սեր և գուժ նախ դեպի յուր մերձավորները: Ով չի սիրում յուր անձը և յուր մերձավորին, նա չի կարող սիրել և հեռավորներին: Սա մի պարզ և երկնային օրենք է:

Կարապետ արքեպիսկոպոսը շահելով յուր ազգականներին, չզրկեց յուր ժողովուրդին. ընդհակառակն նա յուր կալվածքների մեծագույն և ընտիր մասը թողեց ժողովրդյան: Դատապարտել մի այդպիսի ազնիվ հոգու, թե ինչու՞ համար ամեն բան մեզ չթողեց, կամ թե ինչու՞ համար ուրիշներին ևս շահեց և ոչ միմիայն մեզ, մի ծաղրելի գործ է: Մեր կարծիքով շատ բախտավոր կլիներ Ախալցխայի հասարակութունը, եթե գիտենար խոհեմությամբ և տնտեսությամբ պահպանել և յուր օգտին ծառայեցնել այն եկամուտները, որոնք կտակել է Կարապետ արքեպիսկոպոսը հասարակության, և չթողներ, որ այն ահագին գումարները իզուր վատնվեին որևիցե երեցիոխանի անձնական շահերի համար:

Վերևում հիշեցինք, որ Կարապետ արքեպիսկոպոսի թողած Պիսիսցիխար, Տկվարի, Թուտրուլթուրան և Բալաթուրան և էլի մի քանի ուրիշ ավերակներ և խոտնոցնոր

նորա մահվանից հետո ընկել են մասնավոր մարդկանց տիրապետութեան տակ: Թե այդ կորուստը ինչից է հառաջացել, մենք գրում ենք այստեղ, ցույց տալու համար, թե մեր հոգ. տեղական իշխանութիւնը, որ աստիճանի անփուլթ և անհոգ են դեպի իրանց եկեղեցական օգուտները և թե հասարակութիւնը սիրում է առհասարակ աղաղակել ուրիշի վերա, ուրիշներին պարտականութիւն է հիշեցնում, իսկ յուր պարտականութեանց մասին բոլորովին լռում: Այս կալվածքների կես մասը ս. Փրկիչ եկեղեցուն, իսկ կես մասը յուր ազգականներին է տված եղել Կարապետ արքեպիսկոպոսը ընծայագրերով, որոնց մասին հայտարարութեամբ 31-ն օգոստոսի 1853 ամի, հայտնելով փոխարքային, խնդրել է նորա կարգադրութիւնը եկեղեցու և ազգակցաց անվամբը կուպչաներ շինվելու համար: Կարապետ արքեպիսկոպոսի այդ հայտարարութիւնը փոխարքան հանձնում է յուր երկրաչափին, որպեսզի նա գնա և չափելով՝ սահմանները որոշե և իրան՝ փոխարքային, տեղեկութիւն տա: Երկրաչափը 1857 թվականին մոտենալով այդ կալվածներին, գրութեամբ ի 24-ն հունիսի 1857 ամի N28, խնդրում է հոգևոր կառավարութիւնից՝ ուղարկել իրան, երկրաչափին, Կարապետ արքեպիսկոպոսի ընծայագիրը, ընդ նմին և ի հոգևոր կուսե պատգամավոր նշանակել: Հոգևոր կառավարութիւնը, երկարատև խորհրդածութիւնից հետո, հասարակութեան մի քանի նշանավոր անձանց հետ, գրութեամբ ի 4-ն հունիսի նույն 1857 ամի N 191, պատասխանում է երկրաչափին, թե Կարապետ արքեպիսկոպոսի ընծայագրերի իսկականը գտնվում է Քութայիսի նահանգական դատարանումը, իսկ նորա վավերացյալ պատճենը «հրամանաւ Կարապետ արքեպիսկոպոսի, եղեալ է ի պահեստ սուրբ Փրկիչ եկեղեցու»: Պատգամավոր էլ նշանակված է մի պարոն, Մարտիրոս Հարոյանց: Այս պարոնը, առանց մի ապացուցական թղթի, ներկայանալով երկրաչափին, նորանից չի ընդունվել. և ահա այդ միջոցին Բագրատունյանք և ուրիշները կարողացել են խլել

եկեղեցու կալվածքը: Ահա մի իրողութիւն, որ թե տգիտութեան և թե սարսափելի անհոգութեան հետեւանք է:

Այս այսպես: Բայց ինչու՞ համար Կարապետ արքեպիսկոպոսը չէր ուզում յուր մյուս կալվածքների կուպչան հաստատել եկեղեցու անունով, չմոռանանք՝ յուր, և ոչ ազգականների: Եվ հիրավի, ազգականներին շահելուց և նորանց վիճակը ապահովեցնելուց հետո, էլ ինչու՞ համար էր ղփարանում կամ չէր ուզում Կարապետ արքեպիսկոպոսը այդ կալվածքները թողնել եկեղեցուն: Ահա՛ ինչու համար: Այն ժամանակը, երբ Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր յուր գյուղերի կուպչան հաստատել, բուռն գործութեամբ բորբոքված էր արդեն այն կռիվը, որ սկսվել էր Ներսես կաթողիկոսի և Կարապետ արքեպիսկոպոսի մեջ և որ շարունակվեցավ, թեև վերջին ժամանակներում թույլ կերպով, մինչև վերջինի մահը: Ներսես կաթողիկոսը ամենայն ջանք ի գործ էր դնում Կարապետ արքեպիսկոպոսի բոլոր կարողութիւնը գրավել: Իհարկե, նորան հաճելի չէին կարող լինիլ ն. կաթողիկոսի այդպիսի նպատակներն և նա ոչինչ բանով չէր կարող համաձայնել, որ յուր կարողութիւնն անցնի կաթողիկոսի ձեռքը և գործադրվի այն նպատակների համար, որոց գուցե չէր համակրում Կարապետ արքեպիսկոպոսը: Չի կարելի մեղադրել նույնպես Կարապետ արքեպիսկոպոսին և այն բանում, որ նա չհարգեց յուր Հայրապետի պատվերը, որովհետև նորա այդ պատվերը անիրավացի էր. նա պահանջում էր Կարապետ արքեպիսկոպոսից նորա արդար իրավունքը, նորա անձնական սեփականութիւնը. ընդհակառակն՝ նորա այն պատվերները, որոնք օրինավոր էին, Կարապետ արքեպիսկոպոսը միշտ հարգել և ամենայն հնազանդութեամբ կատարել է չնայելով, որ այն ժամանակվա շատ բարձրաստիճան անձինք, Կարապետ արքեպիսկոպոսի մերձավոր բարեկամները, հորդորում էին նորան՝ հակառակել Ներսեսի կարգադրութեանցը: Թե այդ նշանավոր կռիվները երկու նշանավոր, աշխարհածանոթ և դանազան մեծագործութիւններով միմյանց վերա հաղթա-

նակող¹³ անձանց մեջ ե՞րբ սկսվեցավ, ի՞նչ պատճառով, այդ հանգամանքում ո՞վ էր արդարը և ո՞վ մեղավոր, մենք կխոսինք յուր տեղում. առ այժմ այսքան միայն կասենք, որ Կարապետ արքեպիսկոպոսը իրավունք ուներ կասկածելու Ներսես կաթողիկոսից, միանգամայն ճանաչած լինելով ընդհանուր Հայոց կաթողիկոսի լիակատար իրավասուլթյունը բոլոր եկեղեցական կալվածո վերա, իրավամբ չէր կարող յուր գյուղերի կուպչան հաստատել ս. Փրկիչ եկեղեցու անունով:

Վերևում հիշեցինք, որ Կարապետ արքեպիսկոպոսը գյուղերի կուպչաներն ուզում էր հաստատել յուր անունով և ոչ ազգականների. ազգականների պարտքից նա արդեն ազատված էր, ինչ որ նորանց տալու էր, տված պրծած էր, թողելով այդ գյուղերի եկամուտը յուր անկախ իրավանց տակ, Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր շահել յուր մյուս, սրտին ավելի մոտիկ, ազգականներին. դոքա էին Ախալցխայի նորաչեն անշուք եկեղեցին, գավառի եկեղեցիներին, Ախալցխո բաղմաթիվ աղքատ և տնանկ գերդաստանները, Ախալցխո Կարապետյան և Ախալքալակա ս. Մեսրոպյան հոգևոր ուսումնարանները, որոնք ամենքն էլ պայծառանալու, կառավարվելու և պահպանվելու համար գումար էին պահանջում և մեծաքանակ գումար: Բայց մեռնելուց հետո ու՞մ կմնային այդ գյուղերը, գուցե մեզ հարցնեն: Կմնար եկեղեցուն, այսինքն գաղթական ժողովրդյանը, ինչպես որ վերջումն էլ կտակեց Կարապետ արքեպիսկոպոսը: Ուրիշ կերպ չէր կարող լինիլ, որովհետև անկարելի բան է մտածել, որ Կարապետ արքեպիսկոպոսը յուր եկեղեցիները, ուսումնարանները և աղքատանոցները թողներ և գյուղերը կտակեր յուր ազգականներին. եթե նա այդ ուզենար անել, սկզբից կաներ, և ոչ ոք նորա ձեռքից բռնող չէր լինիլ: Վերջապես, գուցե Կարապետ արքեպիսկոպոսը հույս ուներ մի ժամանակ հաշտվիլ Ներսես կաթողիկոսի հետ և ապա երկոցունց համաձայնուլթյամբ որոշել այդ կալվածքների վիճակը: Ահա սոքա են գլխավոր պատճառները, որոնցից

ստիպված՝ Կարապետ արքեպիսկոպոսը չէր ուզում յուր գյուղերի կուսչան շինել տալ եկեղեցու անունով. բայց այս բավական չէ, կա էլի սորանից ոչ պակաս զորավոր պատճառ:

1836 թվականին ռուսաց տերութեան կողմից բարձրագույն հաստատված կանոնադրութեան մեջ, որ «վասն կառավարութեան հոգևոր գործոց Հայ-Գրիգորեան դաւանութեան», կա իմիջիայլոց մի հոգևած, որտեղ ասված է, թե «եկեղեցական մայր-գումարները պետք է շահեցողութեան գրվին արքունական կամ հասարակական բանկաներում»: Այս հոգևածը մինչև այսօր շարունակ տարածանութեան են եւ ձգել Տաճկաստանի մեր հայ եղբարց մեջ: Տաճկաստանի հայերի մեծագույն մասը մինչև այսօր չի կարող կարգաւ այդ հոգևածը և չվրդովվել: 1860 թվականին այդ խնդրի մասին գրվեցան բազմաթիւ հոգևածներ Կ. Պոլսո տեղական ազգային լրագիրներում, հրատարակվեցան զանազան բրոշյուրներ, և երեցփոխանական ժողովը պատրիարքարանի մեջ պաշտոնապես քննութեան ենթարկեց այդ հարցը: Տաճկաստանի հայերը վերոհիշյալ հոգևածը այսպես են մեկնում. որպես թե ռուսաց տերութեանը, սահմանելով որ հայոց եկեղեցաց գումարները պահվին տերութեան բանկաներում, նպատակ ունի խել այդ գումարները եկեղեցիների ձեռքից, կամ այդ կերպով իբր թե ռուսական տերութեանը կամենում է ջլատել հայ եկեղեցիների զորութեանը: Կարապետ արքեպիսկոպոսը լինելով տաճկաստանցի հայ և հին մարդ, որպես մի անձն, որ ամեն օր յուր աչքի առաջ տեսնում էր օսմանյան տերութեան խեղճ ու աղքատ դրութեանը, նորա գուղ ու գուրդ հատկութեանը, նույնպես հակված էր դեպի վերոհիշյալ կարծիքը. և ինչպես ինքը լավ պահպանել գիտեր եկեղեցական փողերը, կարծում էր, թե ուրիշներն ևս յուր պես, կլինին. բայց ամեն կաթողիկոս Ներսես չի լինիլ և ամեն առաջնորդ՝ Կարապետ:

Վերոհիշյալ կալվածքները ձեռք ձգելից և բացվելիք ուսումնարանի և աղքատանոցի հաստատուն եկամուտ-

ների աղբյուրները այդ կերպով հողալից հետո, այնուհետև Կարապետ արքեպիսկոպոսը յուր ուշադրությունը դարձնում է դեպի գյուղացիները, որոնք մինչև այդ ժամանակ չունեին եկեղեցիներ և նորա կարգադրությամբ հասարակ մատուռների մեջ էին անում ժամերգությունը, և Ախալքալաք և Մալկայի վիճակում հիմնարկում և հետզհետե ավարտում է մասամբ յուր կալվածքների փողով և մասամբ ժողովուրդյան տուրքերով վաթսուների չափ եկեղեցիներ, հոգում է նորանց ներքին պայծառությանց և վայելչությանց մասին, և երբ այդպեսով գյուղական հասարակության հոգեկան մխիթարությանց և յուրյանց ս. կրոնի պաշտելու միջոցները պատրաստում է, այնուհետև հիմնարկում է Ախալքալաք քաղաքի մեջ ս. Մեսրոպյան ուսումնարանը, ցորենի ամբարանոցը և աղքատանոցը, ապա 1842 թվականին՝ Ախալցխայի Կարապետյան ընդարձակ ուսումնարանը, որ և վերջացնելով 1844-ին, հավաքում է այնտեղ, բացի հին քաղաքում ժամանակավորապես բացված դպրոցի աշակերտներից, այլևս 150-ի չափ նոր աշակերտներ, որտեղ, ի թիվս այլ առարկաների, մտցնում է առաջին անգամ և ռուսաց լեզու: Մենք տեսանք, թե ինչ եռանդ և սեր ունեւր Կարապետ արքեպիսկոպոսը դեպի էրզուրումի Կարապետյան դպրոցը, նույն սերը և եռանդը սկզբից մինչև վերջը նա ունեցավ և դեպի Ախալքալաքա ս. Մեսրոպյան, մանավանդ դեպի Ախալցըխո Կարապետյան դպրոցը: Մենք տեսանք, թե նա ինչ միջոցներով գրավում էր հասարակությունը դեպի ուսումնարանը, միևնույն միջոցները մինչև յուր մահը գործադրեց և իրանից հետո գործադրելու կտակավ ավանդեց նա և Ախալցխայումը:

Քանի որ Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայումն էր, Կարապետյան ուսումնարանը գտնվում էր նորա անընդմիջական իշխանության և վերահայեցողության տակ, իսկ երբ առաջնորդության պաշտոնով նա գնաց Թիֆլիզ, շարունակ գրագրությամբ նա տեղեկություններ էր պահանջում յուր ուսումնարանի մասին և անդադար

պատվիրում էր հոգևոր կառավարութեան անդամներին՝ «հոգ մեծ կալնուլ ի վերայ ազգային դպրոցին»: Շատ անգամ նա չբավականանալով հոգևոր կառավարութեան անդամների տված տեղեկութիւններէ, ժողովրդեայն առաջնակարգ մարդիկներէ նույնպէս տեղեկութիւններ էր հավաքում և ըստ այնմ, «յետ մանրամասն հետազոտութեանց ի զգալի կարոտութիւնս տեղական ազգային հոգևոր ուսումնարանի», հրամայում էր հոգևոր կառավարութեան անդամներին, «ավելացուցանել զառարկայս և ուսուցիչս, ուստի և զշտատ (ռոճիկ) ուսուցչաց»: Այս բանը հաստատում են նորա բազմաթիւ հառաջադրութիւնքը առ անգամս հոգևոր կառավարութեան: Մի անգամ լսելով, որ կ. պոլսեցի Կարապետ Թորոսյան (որ և Չմշկյան) հայկաբան ուսուցիչը եկել է Ախալցխա, հառաջադրութեամբն ի 11 սեպտ. 1849 ամի, պատվիրում է հոգևոր կառավարութեան անդամներին՝ «Անշուշտ կարգել զնա (Չմշկյանին) ուսուցիչ հայկաբանութեան յազգային դպրոցի, տալով նմա զբնակարան, սնունդ և զերկու հազար հինգ հարիւր դուռուշ վարձս»:

Կարապետյան ուսումնարանի հառաջադեմ աշակերտներին Կարապետ արքեպիսկոպոսը ուղարկում էր գաւառական ուսումնարանը և ինքը հոգում էր այդ աշակերտաց թե ուսումնական և թե տնտեսական պիտույքները մինչև ուսման ընթացքն ավարտելը. այնուհետև զանազան արքունական ծառայութիւններէ է տալիս նորանց, միջնորդելով ուր հարկն է, և այդպեսով ահա հառաջացել են այն բազմաթիւ քաղաքական և զինվորական հայ աստիճանավորները, էրզուրումի գաղթական հասարակութիւնից, որոնց մասին մենք արդեն հիշեցինք:

Կարապետ արքեպիսկոպոսի ուսումնասիրութեան մի ուրիշ գեղեցիկ ապացույց էլ կա, որ հիշատակելու արժանի է:

Հայտնի է, որ 1846 թվականին Թիֆլիզում առաջին անգամ սկսավ հրատարակվիլ «Կովկաս» լրագիրը հայկական լեզվով: Թի այդ բանին որչափ համակրեց Կարա-

պետ արքեպիսկոպոսը, ցույց է տալիս նորա, 8-ն փետրը-վարի 1876 ամի N 16, գրությունը առ անդամս Հոգևոր կառավարութեան, Հորում, ի միջիայլոց, կան և հետևյալ ազնիվ տողերը. «Ոչ ընդ երկարեալ իմ ծանուցանել ձեզ (անդամոց) զօգուտ ընթերցման լրագրոց և պաշտպանութիւն նորին ազգային լուսավորութեան և լեզուի մերում, ընդ սմին աւաքելով զքանի մի թերթս հայտարարական թղթոց և լրագրոց համար 4 հառաջադրեմ, ծանուցեալ զայսմանէ ուսումնասէր Հոգևորականաց և աշխարհականաց, յորդորել զնոսս ստանալ զայնոսիկ լրագիրս և այնու լինել առիթ որպէս անխափան շարունակութեան այսօր օգտաբեր գործոյ, նոյնպէս և լուսաւորութեան մտաց ամենեցուն: Ես քաջահոյս եմ, թէ հայրական յորդոր անդամոց կառավարութեանդ շարժեցէ զբազումս յայս բարի ձեռնարկ, որ հայի ի բազմադիմի օգուտ ազգային լուսաւորութեան»:

Այսքան և այսչափ հոգսերի մեջ՝ թե Ախալցխայում և թե վերջերում Թիֆլիզում՝ Կարապետ արքեպիսկոպոսը երբեք չէր մոռանում յուր սիրելի գաղթական ժողովուրդին, նոցա զանազան քաղաքային, ընտանեկան ցավերին ցավակից էր լինում, նորանց նյութապես և բարոյապես օգնում էր անդադար¹⁴: Որեւիցե մի նոր կարգադրութիւն, որ լինում էր տերութեան կողմից, ինչ բանի համար էլ որ եղած լիներ, գաղթական ժողովուրդը չէր սիրտ անում գործադրել, առանց նախևառաջ յուր «մեծավորին» հետ գրագրութիւններով խորհրդածելու և առանց նորանից հաճութիւն ստանալու: Այս ապացուցանում են նույնպես նորա զանազան գրութիւնները, Հորդորական շրջաբերականները, զորս Կարապետ արքեպիսկոպոսը ժամանակ առ ժամանակ ուղղել է երբեմն Հոգևոր կառավարութեան անդամներին, երբեմն «երկոտասանից» երեւելի անձանց (իշխանաց), գաղթելոց Կարնոյ ի Տայս» և երբեմն բազմաշխատ ուստաբաշյաց և արհեստավորաց:

1837 թվականի հունվարի 20-ին Կարապետ արքեպիսկոպոսը, ըստ ընտրութեան Կարբեցի Հովհաննես կաթողի-

կոսի և ըստ Հաստատության թագավոր կայսեր, նշանակվեցավ Վրաստանի և Իմերեթի վիճակին թեմակալ առաջնորդ և նույն թվականում նա ինքը բացեց վիճակային կանսիստորիան, Ախալցխո, Գանձակի և Գորվո Հոգևոր կառավարությունները: Հովհաննես կաթողիկոսը ծանոթ էր արդեն Կարապետ արքեպիսկոպոսի բարեմասնություններին, ինքը նրանից էր օծված կաթողիկոս, Մայր Աթոռը արդեն մի քանի անգամ վայելած էր Կարապետ արքեպիսկոպոսի առատ նվիրաբերությունքը, Հարյուրավոր և հազարավոր թումաններ ժամանակ առ ժամանակ նվիրած էր Կարապետ արքեպիսկոպոսը «առ ի թեթևացուցանելոյ զպարտս մօրն մերոյ լուսածնի»: Հովհաննես կաթողիկոսի ընտրությունը հաջողակ էր, այն ժամանակ Կարապետ արքեպիսկոպոսը ավելի մեծ ձայն և համբավ ունեւր, քան մյուս շատերը. քայց երանի թե Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայում մնար. նա ավելի գործ կարող էր շինել Ախալցխայում, իբրև տեղապահ, քան Թիֆլիզում իբրև առաջնորդ: Բոլորովին անծանոթ օրինաց, անծանոթ և տարօրինակ բնավորության և վարուց ու բարուց տեր ժողովրդյան վերա նշանակվելով առաջնորդ, շրջապատած լինելով խարդախ և կաշառակուրծ մարդիկներով, Կարապետ արքեպիսկոպոսը յուր դեմ շարժեց Ներսես կաթողիկոսի զայրույթը. և թող որ յուր առաջնորդության ժամանակ չկարողացավ մի նշանավոր գործ կատարել, թող որ Ախալցխայում սկսածներն էլ, մանավանդ աղքատանոցը, չկարողացավ առաջ տանել և ծաղկեցնել ըստ յուր ցանկության, այլ նաև յուր բարձր անունը ևս մասամբ նվաստացրեց:

Է

Մարտի 11-ից 1836 թ. Բարձրագույն Հաստատված կանոնադրության զորությամբ Կարապետ արքեպիսկոպոսն ստիպվեցավ կորցնել յուր ազատությունը, որով մինչև առաջնորդ նշանակվիլը ինքնուրույնաբար գործել

էր նա էրզուրուճում և Ախալցխայում: Այնուհետև նա հարկադրված էր յուր ամեն մի ձեռնարկության համար լուծում և տնօրենություն խնդրել հոգևոր ծայրագույն իշխանությունից: Չնայելով այդ ամենին՝ Կարապետ արքեպիսկոպոսը փորձեց գործ շինել և Թիֆլիզում:

Ս. էջմիածնի հրամանով (22 փետր. 1837 թ. N 149) կոնսիստորիան բաց անելուց առաջ՝ Կարապետ արքեպիսկոպոսը կազմել էր շտատ կոնսիստորի համար: Այդ շտատով կոնսիստորի տարեկան ծախսերի գումարն էր 1350 ռուբլի, որ Կարապետ արքեպիսկոպոսը ուղարկելով Սինոդին ի հաստատություն՝ հարակցել էր, թե այդ շտատը կազմված է առժամանակյա փորձի համար, երբ կբացվի կոնսիստորիան, երբ նա կձանոթանա գործերի դրության հետ, կգրե հետո յուր կարծիքը այդ շտատը ավելացնելու կամ պակասեցնելու վերաբերությամբ (հայտարարություն 21 օգոստոսի 1837 թ. N 425): Բաց անելով կոնսիստորիան օգոստոսի 7-ին, տեսնելով գործերի շտատությունը Կարապետ արքեպիսկոպոսը երկրորդ հայտարարությամբ (25 դեկտ. 1837 N 591) ներկայացրեց Սինոդին մի երկրորդ շտատ, որի գումարը հասնում էր 3200 ռուբլու, այս կարգով - ատենադպրին՝ 500ռ., էկզեկուտորին՝ 400ռ., թարգմանչին՝ 300ռ., վեց գրագիրներին՝ 1200ռ., դիվանական ծախուց համար՝ 600ռ., իսկ ծառաներին՝ 200ռ.: Ուղարկելով այս շտատը Սինոդին, Կարապետ արքեպիսկոպոսը մի առ մի բացատրել էր այն պատճառները, որոնցով ստիպված նա շտատցնում էր շտատը: Սինոդն այս պատճառները հարգելով հանդերձ, բարվոք համարեց «պատուիրել ձեզ (Կարապետ արքեպիսկոպոսին) բավականանալ առայժմ նախկին շտատին, հրաւիրելով զանդամս և զաստիճանաւորս կոնսիստորիզ և հոգևոր կառավարութեանց, նոյնպէս և զայլ պաշտօնատար անձինս ընդ ձեզ յանձն եղեալ վիճակիդ, զներկայ դժուարութիւնս և զչքաւոր միջոցս լցուցանել սեպհական աշխատաւոր երկասիրութեամբք և անդուլ գործունեութեամբ, որք և ոչ մնասցին անտես յիւրումն ժամանակի ի տէրութենէ և

ի ծայրագոյն հոգևոր իշխանութիւն» (հրամ. Սինոդին 22 հոկտեմբ. 1838 N 1218):

Մի քանի ժամանակ հառաջ վարելով գործերը և հանդիպելով նորանոր դժվարությունների, Կարապետ արքեպիսկոպոսը երրորդ անգամ (հայտարարություն 10-ն մարտի 1839 N 192) խնդրեց Սինոդին 1350 ռուբլի շտատի վրա ավելացնել դեթ 900 ռուբլի, բայց սինոդը դարձյալ բացասեց «որովհետև կարգեալ վասն պահպանութեան դիւանատան կոնսիստորիայից գումարն (1350 ռ.) առաւել գերազանց է քան զայլս ընդ համեմատելն զայն ընդ միւս վիճակային կոնսիստորիայիցն Ռուսաստանի, յայնժամ, երբ աշխատանք աստիճանաւորաց և ծառայողաց դիւանատան այդորիկ սակաւ յոյժ համեմատին ռոճկին, զոր ստանան նոքա ըստ արդեան շտատին, բաց յայսմանէ արդեան պարապմունք նոցա ըստ սակաւաթիւ գործոյն, եղելոց ի գործունութեան դորին, ոչ պահանջին զմեծամեծ ճիգս» (հրամ. Սինոդին 30 ապրիլի 1840 N 822): Ինչպես ընթերցողը տեսնում է Սինոդի այս երկրորդ հրամանը հակառակում է առաջինին:

Կարապետ արքեպիսկոպոսը համոզված լինելով, որ մուրացկանությամբ չի կարելի վիճակ կառավարել, թե ծառայողները և նոցա ընտանիքը հաց են ուզում և ոչ պարգև, թե «ըստ նկատման հանգամանաց այդ վիճակի (Վրաստանի և Իմերեթի) որք քաջ հայտնի են Սինհոդոսիս (Հր. 5 մարտի 1838 N 205) խոսքերով փոր չեն կշտանալ, թե որովհետև վիճակը ընդարձակ և հարուստ լինելով պետք է նոր կոնսիստորի ծառայողները քիչ ռոճիկ ստանան և դորանով ստիպվին ցած միջոցների դիմել, որոց բացարձակ ակնարկում էր Սինոդը, չորրորդ անգամ դիմեց սինոդին՝ միջոց տալ իրեն վիճակի գործերը կարգավորելու (հայտարարություն 25 հոկտ. 1841 N 1590): Այդ հայտարարության մեջ Կարապետ արքեպիսկոպոսը, իմիջիայլոց, հիշեցնում է Սինոդին. ա) բազում գործք և ընթացիկ թուղթք ցայսօր ժամանակի մնան անշարժք և անվճիռք: բ) Բազում հին գործք մնացեալք ի

ժամանակէ անտի հոգևոր կառավարութեան ¹⁵ կան և մնան առանց վերազննութեան, երբ մեծ մասն ի նոցունց պարունակելով յինքեանս զօգուտ եկեղեցեաց պահանջեն փութանակի զննողութիւն և բազումք ի նոցանէ գոլով քննողականք վասն ընդ երկար շարունակելոյն, որոց դատապարտեալքն և մասնակիցքն տարբերելով մպասեն վճռոց: Յայսոցիկ թղթոց և գործոց քրէականս 20 և հասարակս 207, զ220 չև զեկուցեալ, թող զմատեանս արդեանց և ծախուց եկեղեցեաց Տիխիսոյ և վիճակաց նորին: գ) Ի նոր գործոց մնան ցարդ անկատարք 123 հասարակք, քննողականք 11, ընթացիկ թուղթք 665»:

Հայտնելով այս բաները, Կարապետ արքեպիսկոպոսը միևնույն ժամանակ իրանից վճռում է ավելացնել շտատի վերա 750 ու. (գումարն 2100 ու.) «բայց ոչ ածեալ զայս եզրակացութիւն ի կատար, առաջի արարեալ զայսմանէ հանդերձ նորոգ կարծեցեալ շտատիւն դիւանատան սորին Լուսաւորչեան Սինհոդոսին ս. Էջմիածնի ամենախոնարհաբար խնդրել զդորայն (Սինոդի) բարեհաճութիւն դարձուցանել զիւրն ծայրագոյն մտադրութիւն առ վերոգրեալ հանգամանս, յարգել զայս միջնորդութիւն հաստատութեամբ իւրով, ընդ սմին յարգոյաբար յաւելուլ և զայս թէ մատուցմամբ այսր յայտարարութեան հանդերձ դժադրելովք ի սմին դժուարութեանց զերծանիմք յամենայն պատասխանատուութենէ»:

Այդ ընդարձակ հայտարարությունը, յուր մեջ հիշված օրինավոր և հարգելի հիմունքներով, յուր սուր և ազդու ոճով, մի դատապարտություն է Սինոդի անգործունեությանը և այն ձգտմունքին, որ ի սկզբանե անտի մինչև այժմ ունեցել է և ունի Սինոդը, ամեն բան քաշել իրան, միմիայն իրան վերա մտածել և փոքր ուշադրություն դարձնել վիճակների դրությանը վերա:

Ոչինչ ուշադրություն չդարձնելով վերահիշյալ հայտարարության մեջ բացատրված ճշմարտությունների վրա, այլ նորա սուր ոճը և լեզուն (որ Սինոդի թուլությանը և հանցանքին պետք է վերադրել) իրան ձեռին զենք

առնելով, Սինոդը մի ծիծաղելի, կարելի է ասել, տղայական հպարտությամբ երկու ամենափառավոր հանդիմանություն և սպառնացումն գրեց Կարապետ արքեպիսկոպոսին և կոնսիստորի ծառայողներին, մինը պրոկուրորի կողմից (4-ն ապրիլի 1841 N 47) մյուս յուր (Սինոդի) կողմից 27-ն փետր. 1842 N 382): Եվ որպեսզի մյուս անգամ կոնսիստորը յուր «անտեղի տրտունջներով» (??) Սինոդին չձանձրացնե, վերջինս բարեհաճեցավ 1350 ռ. շտապի վրա ավելացնել նաև 300 ռ. «վասն փտանելոյ գերկուրնդունակ գրագիրս»։ Կարծես թե գրագիրները պետք է մաքրեին վերոհիշյալ այնքան անկատար գործքերն և նոցա վճռեին: Այդ կծու հադիմանությանց վրա և այլևս հույս չունենալով իրանց ոռոկի շտանապուրն ատենադրվիրը և կոնսիստորի մյուս ծառայողները հրաժարվեցան իրանց պաշտոններիցը և նորանց փոխանակեցին նոր մարդիկ (2. Կարինյանցը նշանակվեցավ ատենադպիր): Պետք է գիտենալ, որ մեր հոգևոր ատենատեղիներում գործող առաջին և գլխավոր ուժերն են միշտ ատենադպիրները, քարտուղարները և մյուս աստիճանավորները. իսկ առաջնորդները, հաջորդները և անդամները լեզու և օրենք չգիտնալով, ատենական գործառնությանց մեջ հարկադրված են միշտ նորանց երեսը մտիկ տալ և վայ այն ատենին և նորա գործերին ու հաշիվներին, որոց ծառայողները խմբովին կհրաժարվին կամ կհրաժարեցնելվին:

Ը

Շտապի և ծառայողների պակասության պատճառով, Սինոդի անտեղի, անխորհուրդ և միշտ միակողմանի հրամանագրերի և տնօրեննությունների պատճառով Թիֆլիզի կոնսիստորիան ներկայացրել է միշտ մի բարեխոնական խառնակություն: Կարապետ արքեպիսկոպոսից սկսյալ մինչև Մակար արքեպիսկոպոսի հրաժարումը 1837-1876, բոլոր առաջնորդները զգացել են այդ շոշափելի պակասու-

Թյունը, ազդու և հիմնավոր փաստերով ապացուցել են Սինոդին, թե գործող անձանց պակասության, նոցա ռոճկի անբավարարության, և այլն պատճառով որքան գործեր մնացել են անկատար, որքան եկեղեցական փողեր կորել են Թիֆլիզի և վիճակի երեցփոխանաց վրա, որքան կավածական վեճեր և դատեր ի զուր տեղը կորել են, ո՞րքան իրավացի բողոքողներ եղել են ժողովրդյան մեջ, ընդ նմին այդ առաջնորդները ներկայացրել են Սինոդին միշտ իրանց կարծիքները, նախագիծները, վիճակը բարվոքելու և կանոնավորելու համար, բայց Սինոդը, դժբախտաբար, նրանց ոչ մեկի առաջարկությունը չի հարգել, և ոչ մեկին մի կատարյալ բավականություն չի տվել, այլ պատ ի պատ պատճառներով աշխատել է միշտ արդարացնել իրան և յուր էական նշանաբանը. ամենայն ճիգ և հնարք թափել է ամեն վիճակից իրեն քաշել գումարները «գմնացորդ վիճակապատկան գումարն փութով առաջի առնել Սինոդիս», (հրամանագիրք Սինոդից 18-ին հունվարի 1858 N 49, 24 մարտի 1861 N 585, 30 հուլիսի 1865 N 1325 և այլն, և այլն)՝ կտրելով ծառայողների բերաններից, զրկելով եկեղեցիները իրան պայծառությունից և ժողովուրդը իրան բարօրության միջոցներից:

Կարապետ արքեպիսկոպոսից հետո Վրաստանի և Իմերեթի վիճակի խոշոր պակասությունները տեսած և նորանց առաջն առնելու միջոցներ առաջարկած են Սինոդին, բայց միշտ բացասություն ստացած և Կարապետ վարդապետ Շահնազարյանց (օրադիր. 11 հոկտ. 1848 N 4), որ Կարապետ արքեպիսկոպոսից հետո նախագահեց կոնսիստորում և Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց (հայտարար. 18 փետր. 22 հոկտ. 1858 N N 30 և 184 ևս և օրագր. 9 հունվարի. 23 սեպտ. 1859 N N 5 և 7) և Մակար արքեպիսկոպոսը, որի գրածներից ամենանշանավորն է մեր կարծիքով, գաղափար (պրոեկտ) բարեկարգության դիվանատան վիճակային կոնսիստորիային հայոց Վրաստանի և Իմերեթի, կազմված սեպտեմբերի 2-ին 1866 ամի:

Այդ հմուտ կերպով գրված գաղափարի գլխավոր տեղն է բռնում «Ցուցակ անկատար դրամական և վիճողական գործոց կոնսիստորին Հայոց Վրաստանի և Իմերեթի, որք կարոտ են առանձին մտադրութեան իշխանութեան»:

Այդ, իրավամբ, առանձին մտադրության կարոտ գործերի, որոնցից մի քանի Հարյուր Հազարներ կվխտան, թիվն է 80, որոնք 1831 թվականից սկսյալ մինչև 1860 թիվն, գուցե մինչև հիմա էլ, մնացել են առանց մի որևիցե մտադրության: Այս տարի կոնսիստորիայում եղած փոփոխութենների ժամանակ հին ատենադպիրը նորեն հանձնելու պատրաստում էր 2000 քանի Հարյուր անկատար գործեր: Մենք գիտենք թե այդ թղթերից շատերը քանի քանի Հարյուրանոց և Հազարանոց թղթեր են:

Մենք տեսանք թե վիճակային ատենի համար Կարապետ արքեպիսկոպոսի առաջարկած նախագիծները ինչպիսի սառնությամբ և անտարբերությամբ ընդունեց Սինոդը: Միևնույն անտարբերությունը մենք տեսնում ենք և վիճակի հոգևոր կառավարությունների և հաջորդների մասին առաջարկված նախագիծների վերաբերությամբ: «Յաջորդին ոչ է հարկաւոր տարեկան վարձ, իսկ հանդերձագին տացջիք նմա ի տարին միայն վաթսուն մանէթ: Սպասաւոր ոչ է հարկաւոր յաջորդին... բարեկարգիչ գործակալաց ոչինչ ռոճիկ» և այլն և այլն (հրամ. Սինոդին 5 մարտի 1838 N 205): Միևնույն այդ անտարբերությունը և անտեղի խնայողությունը, եթե միմիայն խնայողության համար էր այդ և ոչ պորտաբուծության, շարունակվեցավ և Կարապետ արքեպիսկոպոսի իրա ռոճիկի վերաբերությամբ:

Պետք է գիտենալ, որ Կարապետ արքեպիսկոպոսը շատ խնայող, կարելի է ասել ժլատ անձ էր, բայց որպես գործնական մարդ, նա գիտեր և հարկ եղած ժամանակ լինել առատաձեռն: Նորա հռչակված անունը, նորա դրությունը, պաշտոնը, հաճախակի հարաբերությունները տերության և համազգային մեծանուն մարդկանց հետ,

նորա տված ճաշերն, ընթրիքներն և «զակուսկաներն»
 (նախաճաշ), որոնք նա շատ անգամ անուժ էր (իբրև մի
 տաճկաստանցի մարդ, որի համար մեծ նշանակութուն
 ունեւր «աղն ու հացը») և այդպիսով, առածի ասածի
 նման, «թրով չկտրածըն հացով էր կտրել տալիս», չէր
 կարող մի վանքի վարդապետի կամ եպիսկոպոսի նման
 գծուծ կերպով ապրել և ծախք չանել: Եվ մի այդպիսի
 առաջնորդի թե ռոճկի և թե այլ ամենայն ծախուց համար
 Սինոդը հատկացրել էր տարեկան 2100 ռ.: այս կարգով.
 «ա) ուտելեաց և ըմպելեաց, չայի, շաքարի, փայտի, բոմի
 ի տարին Զերդ բարձր սրբազնութեան նշանակել հազար
 երկու հարիւր մանէթ: Ի սմին բովանդակի և ծախք ստօլի
 (սեղանի) Զերոյ: բ) Ի հարկաւոր դէպս վասն գրագրութեան
 Զերոյ կարող էք դուք ի գործ դնել զկոնսիստորիայի
 ատենադրպիրն և զայլ գրագիրս, վասնորոյ և չէ հարկավոր
 ունել Զեզ զանձնական գրագիր: գ) Վասն անձնական
 ծառայի Զերոյ նշանակեալ զերկու ծառայս, որոց եթէ
 իցեն նոքա աշխարհականք, տալ ի տարին քառասուն
 մանէթ իւրաքանչիւրում ի նոցանէ, իսկ եթէ իցեն
 հոգևորականք՝ տալ նոցա և ոչինչ: դ) Կառավարացն,
 այն է կուչերաց ի տարին միոյն եօթանասուն մանէթ և
 միւսոյն յիսուն մանէթ, գումարն հարիւր քսան մանէթ,
 միոյ դռնապանի, որ կատարէ և զպարտիզպանութիւն,
 տացջիք ի տարին քսան և հինգ մանէթ, միոյ խոհարարի
 մի տարին եօթանասուն մանէթ, միոյ օգնականի խո-
 հարարի տացջիք երեսուն մանէթ: Տնտեսն լիցի մին ի
 հոգևորականաց առաջնորդարանիդ և տացջիք նմա միմի-
 այն հանդերձագին ի տարին յիսուն մանէթ: ե) Ի սնունդ
 տարեկան վասն հինգ ձիոց միայն երկու հարիւր մանէթ,
 իսկ ի պէտս շինութեան պարտիզին և ճանապարհի ջրոյ
 նորին քսան և հինգ մանէթ: զ) Ի պէտս հոգևորական
 հիւրոց, կայսերական տօնից զակուսկայի և այլ այնպիսի
 անակնկալ ծախուց ի տարին երեք հարիւր մանէթ:» (Հր.
 Սին. 5 մարտի 1838 N 205): Նշանակելով այդ շտատը
 առաջնորդի համար, Սինոդը միևնույն ժամանակ «ժանո-

թուլթյուններով» ցույց էր տալիս, թե ի՞նչ աղբյուրներից
 պետք է հավաքեր և ստանար Կարապետ արքեպիսկոպոսը
 այդ գումարը. «Եթէ Ձերդ բարձր սրբազնութիւնն զստա-
 ցեալն ի վիճակաց զցորեան, զգարի, զիւղ, զպանիր, ի
 պտղոց, և զմիս, զհաւ և զայլ սոյնպիսիս ի մատաղաց
 վաճառեսլիք և զարդիւնս և զդրամս գնոց նոցին մի առ
 մի յանուանէ իբրև արդիւնք գրեսլիք իտումարին յապա-
 ւինեալ, յայնժամ ստասլիք Դուք զնշանակեալ ծախսն»:
 Կարապետ արքեպիսկոպոսը իհարկե չէր բաւականանալ
 այդ գումարով, այլ նա յուր սեփականությունից էր
 մտխում շատ անգամ և Սինոդը բացարձակ ակնարկում
 էր նորան այդ մասին: Նորա հարստությունը սինոդականց
 և վերջում Ներսես կաթողիկոսի աչքում եղավ «քար
 գայթակղության» և ամենքը աշխատում էին Կարապետ
 արքեպիսկոպոսի հարստությունը, եթե ոչ բոլորովին
 դրավել, գեթ մի բաժին էլ իրանց հանել: Եվ երբ Կարապետ
 արքեպիսկոպոսը յուր սեփականությունից երբեմն-երբեմն
 վիճակի համար շատ կամ քիչ զոհողություններ էր անում,
 Սինոդը շտապում էր իսկույն շնորհակալ լինել և խոշոր-
 խոշոր ածականներով յուղել նրա գլուխը, դրվատել նորա
 անունը և համբավը: Այդ բանի օրինակը մենք տեսնում
 ենք, իմիջիայլոց, 640 ուրբլիանոց նվերի համար մի
 պաշտոնական հրամանագրի մեջ (8 հուլիսի 1840 N 1169,
 նույնպես և 8 հունիսի N 1172):

Թ

Մի մարդ, որ յուր մանկությունից սկսյալ սիրել էր և
 ուսումը և ուսումնարանը, ուր որ եղել էր, հիմնել էր
 ուսումնարաններ ըստ մեծի մասին յուր ծախսով, չէր
 կարող անուշադիր թողնել «Սեմինարիայն»՝ Ներսիսյան
 ազգային հոգևոր դպրոցը, որի հիմնարկության ժամանակ
 հիմնադրի խնդրանոք դեռ էրզուրումից 8 ախչա քիստ
 կամ 8000 դոլոս (1000 ու.) օգնություն էր հասցրել և

որը այժմ նրանից չէր պահանջում նյութական զոհողություն:

Կոնսիստորի շտաբը որոշելիս Կարապետ արքեպիսկոպոսը որոշեց և շտաբ Ներսիսյան ուսումնարանի համար: Ներսիսյան ուսումնարանի համար Կարապետ արքեպիսկոպոսի առաջարկած մտքերն արժանի են ընթերցողի խորին ուշադրությանը: Կարապետ արքեպիսկոպոսը առաջարկեց Սինոդին-

ա) Ուսումնարանի համար կազմակերպել առանձին «կառավարություն» (հոգաբարձություն):

բ) Որդեգիր ընդունել աշխարհականի որդվոց:

գ) Հիվանդանոցը կազմակերպել:

դ) Բաց անել ստորին ուսումնարան աշակերտաց թիվը շատացնելու համար:

ե) Շատացնել շտաբը

զ) Նշանակել վերատեսուչ կամ ուսուցչապետ (տեսուչ):

Թե այս առաջարկությունները կամ մտքերը որքան հարգ ունեցան Սինոդի աչքում, այդ երևում է նորահետևյալ պատասխանիցը: «Սեմինարիան կամ Հոգևոր դպրոցն առ այժմ մնասցէ ըստ առաջնոյն, այնպէս զի զպաշտօն վերետեսչի Հոգևոր դպրոցին կատարեսցէ մին ի գլխաւոր ուսուցչաց: Առաջին (գլխաւոր) վարժապետին ռոճիկ երեք հարիւր վաթսուն մանէթ, երկրորդին՝ երեք հարիւր մանէթ, երրորդին՝ հարիւր ութսուն մանէթ, չորրորդին՝ հարիւր քսան մանէթ, վեցերորդին՝ իննսուն և վեց մանէթ, եօթներորդին՝ իննսուն և վեց մանէթ, միոյ սպասաւորի՝ քառասուն մանէթ, վասն կարկատանաց շինուածոց դպրոցին՝ հարիւր մանէթ, ամենն հազար չորս հարիւր քսան՝ մանէթ: Կառավարութիւն Սեմինարիայի առ այժմ՝ չէ հարկաւոր, բայց կառավարութիւնն այն առ այժմ՝ յանձն լինի գլխաւոր անդամոցն կոնսիստորի ընդ գլխաւոր իշխանութեամբ Զերդ բարձր սրբազենութեան: Զեզ նշանակի վասն գրագրութեան մին յուսուցչաց և գրագիրք կարեն լինել յառաջագէմ աշակերտք: Վերակացու գրանոցին կարելի է լինել միոյն յուսուցչաց:

Հիւանդանոց կամ բժիշկ չեն պէտք, այլ առ այժմ յանձն լենին այնպիսի տկար կարեօք աշակերտք իւրեանց ծնողաց խնամարկութեան: Ստորին ուսումնարան առ այժմ չէ հարկաւոր: Ի հոգևոր ուսումնարան կարելի է ընդունել գորդիս աշխարհականաց յայնժամ, երբ նուիրանօք քաղաքին Տփխիսոյ անեսցին դրամք ուսումնարանի, իսկ այժմ համեմատ արդեանցն առաւելապէս ուսուցանել գորդիս հոգևորականաց և մինչ ցայն ժամանակ որդիք աշխարհականաց կարեն ուսանել յարքունի ուսումնարանի ժողովրդականաց Տփխիսոյ» (Հրամ. Սինոդին 5 մարտի 1838 N 205):

Մենք մեր կողմից ավելորդ ենք համարում հայտնել մի որևիցե կարծիք Սինոդի այս տողերի մասին. ամեն ուշիմ ընթերցող ինքը կարգալիս կարող է գաղափար կազմել էջմիածնեցոց գաղափարի, հոգվո և հասկացողութեան մասին: Մենք միայն այս ենք հարցնում ընթերցողից՝ կարո՞ղ էր արդյոք Կարապետ արքեպիսկոպոսը մի օրինավոր գործ շինել վիճակի և ուսումնարանի համար, երբ Սինոդը ամեն կողմից կաշկանդում էր նորան: Թե Կարապետ արքեպիսկոպոսը գործունյա և ժողովրդական մարդ էր, դրան ընթերցողը, հույս ունինք, տարակույս չունի, մինչև հիմա կարդացածներիցը. բայց մի մարդ որքան էլ որ գործունյա, որքան էլ որ ժողովրդասեր լինի, հանդիպելով միշտ արգելքների, փոխանակ խրախուսանքի և քաջալերութեան, կամա-ակամա պետք է, որ հուսահատվի: Արհամարհել այդպիսի անտեղի հրամանադիրները գործել ինքնուրույնաբար և այլն, այդ չէին ներիլ Կարապետ արքեպիսկոպոսի ոչ գաղափարը, ոչ էլ ժամանակը:

Յուր խնդրածների ու առաջարկութիւնների և ոչ մինին բավականութիւն չստանալով Սինոդից, Կարապետ արքեպիսկոպոսը դիմեց ուղղակի դեպի կաթողիկոսը, խնդրելով, իմիջիայլոց, «ի նորին վեհաստիճանութենէ»՝ թոյլատրել ինքեան մատակարարել ի ճեմարանի անդ զմին յօտար ազգի լեզուաց» (հայտար. 23 ապրիլի 1838 N 193): Այս անգամ Սինոդը, որին հանձնված էր մակա-

գրութեամբ Կարապետ արքեպիսկոպոսի հայտարարու-
 թյունը, հարգեց առաջնորդի վերջին խնդիրը, մի օտար
 լեզվի ավանդումը ներսիսյան ուսումնարանում, միմիայն
 «ըստ այնոցիկ իսկ միջոցացն, գորս նշանակեալ է Սիւնհո-
 դոսս վասն պահպանութեան ճեմարանի այնորիկ» (Հրամ.
 Սինոդին 22 հոկտ. 1838 N 1218): Մի քանի տարուց ի վեր
 դադարած տպարանն էլ կրկին բաց անելու հրամանը ևս
 Սինոդը, զիջանելով Կարապետ արքեպիսկոպոսի խնդրա-
 նացը (հայտար. 17 ապրիլի 1841 N 79), նորա համար
 միմիայն թույլատրեց առաջնորդին, որովհետև այդ մասին
 ոչինչ փող կամ գոհողութիւն չէր պահանջվում վիճա-
 կային արդյունքից: Տեսնելով, որ ներսիսյան ուսումնա-
 րանը, ըստ ներքին մասին, չպիտի համապատասխանե
 յուր արտաքին ընդարձակութեանը, Կարապետ արքե-
 պիսկոպոսը օգտակար համարեց ուսումնարանը և տպա-
 րանը տեղափոխել ներքնահարկը, իսկ վերնահարկը վար-
 ձով տալ ժողովարանի համար, և այդպեսով ներսիսյան
 ուսումնարանը, դժբախտաբար, շեղվեցավ այն բարձր և
 լայն նպատակից, որը յատկացրել էր նորան երջանկահի-
 շատակ հիմնադիրը, որ երբ յուր վերադարձին Բեսարա-
 բիայից (1845 թիվ) առաջին անգամ գնաց այցելութեան
 դպրոցին, «տեսեալ զայն խոպանացեալ և ի վարձու
 տուեալ այլոց, ցաւ մեծ զգաց» (Պերպէրեան. Պատմ.
 Հայոց, Կ. Պօլիս 1871, երես 288): Այսչափ տեղեկութիւն-
 ները մեջբերելով Կարապետ արքեպիսկոպոսի կենսագրու-
 թեան մեջ, մենք ուզեցինք ապացուցանել, որ Կարապետ
 արքեպիսկոպոսի առաջնորդութեան առանց մի նշանավոր
 գործի անցնելուն գլխավոր պատճառն էր Սինոդը: Բաց ի
 դորանից Սինոդը կոնսիստորիայի ծառայողներին կատա-
 րյալ բավականութիւն չտալով պատճառ էր դառնում
 նորանց ապօրինի միջոցների դիմելու: Այդպես էլ լինում
 է, օգուտ քաղելով Սինոդի տարտամ դրութիւնից, նորա
 ակնարկութիւններին, կոնսիստորիայի ծառայողները
 սկսեցին ուրիշ ճանապարհներով իրանց ապահովել: Նոքա
 ուսում էին, նոքա գումար էին ժողովրդից, մեջտեղում

Կարապետ արքեպիսկոպոսի անունն էր քաջքչվում:¹⁶ Ինքը՝ Կարապետ արքեպիսկոպոսը առնում էր նույնպես ժամանակ առ ժամանակ, բայց ոչ որպես անիրավ փող, որպես կաշառք, որովհետև կաշառքի մասին մեր և տաճկաստանցի հոգևորականաց կարծիքը բոլորովին տարբերվում է միմյանցից:

Այն, ինչ որ մենք կաշառք ենք անվանում և որից կարմրում, տաճկաստանցի վարդապետը թե այժմ և թե մանավանդ Հին ժամանակներում, որպես յուր ռոճիկ էր ընդունում և առանց քաշվելու ստանում: Մի մարդ ուզում էր պսակվել, առաջնորդը նրանից ստանում էր մի որոշյալ պարտադիր տուրք, որ կոչվում էր «աջահամբույր», «հոգևոր տուրք»: Այդ տուրքի քանակությունը Կարապետ արքեպիսկոպոսը էրզուրումում որոշել էր աղքատից 5, միջակ կարողություն տեր մարդուց 10, իսկ հարուստներից 20 դուրուշ (մեկ ռուբլի): Մի մարդ, մի տիրացու, մի դպիր ուզում էր վկայական առնել, նա պարտավոր էր առաջնորդին որոշյալ տուրք վճարել: Մի մարդ դատաստանատներում գործ ուներ, նորան հարկավոր էր առաջնորդի օգնությունը, վերջինս նորան օգնում էր, ստանալով «աջահամբույրը» և այլն: Որովհետև Հին ժամանակվա առաջնորդներն ու հաջորդները չունեին իրանց սահմանյալ ռոճիկը, ուստի այդպիսի տուրքերը անհրաժեշտ էին և մասամբ արգարություն, բայց հիմա երբ առաջնորդները ու հաջորդները ունեին իրանց ռոճիկը, հիմա միթե չկա՞ն այդ բաները: Այժմյան «գավազանապտուղը, սրբադրամը, աթոռահասը, ձեռնադրող չեկը, եկեղեցու օժող չեկը» և այլն և այլն, չէ՞ որ մի մի տեսակ կաշառքներ են, որովհետև եթե եպիսկոպոսը ստանում է ռոճիկ, այդ նորա համար է, որ եկեղեցի էլ օժե, քահանա էլ ձեռնադրե և այլն և այլն: Եվ Կարապետ արքեպիսկոպոսը այդպիսի տուրքերը ստանում էր բացարձակ¹⁷: Թե այսպես և թե այնպես՝ Կարապետ արքեպիսկոպոսի անունը, մեր կարծիքով, չի կարող արատավորված լինել, մանավանդ որ նա ինչ որ ստանում էր և հավաքում ու

բարի, բարձր նպատակների գործադրում: Նույնիսկ Թիֆլիզի միջում կարապետ արքեպիսկոպոսը մի կատարյալ հայր էր խեղճերին մանավանդ պանդուխտներին, թե հոգևորական և թե աշխարհական դասակարգիցը, որոնք միշտ և հանապազ թե հայտնի և թե ծածուկ վայելում էին նորա առատ նվիրատվության և ողորմածասիրության արդյունքն թե դրամով, թե հագուստով և թե կերակրեղեններով: Մինչև այսօր Թիֆլիզում դեռ կան շատերը այն բազմաթիվ օտարական պանդուխտ աղքատներիցը, գլխավորապես վանքի թաղի բոլորքում բնակվողներիցը, որոնք ամենայն շաբաթ և կյուրակի կերակրվում էին առջնորդարանի պղինձներով պատրաստված կերակրեղեններով¹⁸:

Ժ

Մինչդեռ Վրաստանի և Իմերեթի վիճակն, և Իհարկե մյուս վիճակներն ևս, խարխափում էին անգործունենության մեջ, և առաջնորդներն ու հաջորդները կարծես խրախուսվելով Մինոզի տարտամ դրությունից նորա անխորհուրդ տնօրենություններից, ձեռք էին զարնում զանազան միջոցներով իրանց գրպանը հարստացնել, իրանց շնորհված իրավունքներն ի չարն գործածելով և հասարակական գործերը բարձիթողի առնելով, Ներսես Ե Աշտարակեցին ընտրվեցավ կաթողիկոս (մայիսի 18-ին 1843): Ներսեսի կաթողիկոս ընտրվիլը առաջին և գլխավոր դարագլուխ է մեր կաթողիկոսների պատմության շարքում:

Ազգի փառքով և պատվով տոգորված և բորբոքված Ներսեսը, որ նորա (ազգի) համար իրեն անձը մատնել էր ի հուր և ի սուր, ստանալով ընդհանուր Հայոց ծայրագույն պատրիարքությունը, չէր կարող տանել այն ամենն, ինչ որ կար, ինչ որ լինում էր այն ժամանակը: Ներսեսի ընտրության օրից սկսվում է հեղափոխությունը մեր հոգևորականության մեջ: «Հուր եկի արկանել յերկիր», ասաց Ներսեսը և խարազանը ձեռքին սկսեց արտաքսել,

վտարել Սինոդից, հոգևոր կառավարություններից «աղափ-
նեկաճառներն և հատափաճառներն» - ամեն մի առաջ-
նորդ, ամեն մի հաջորդ, ամեն մի անդամ, ատենադպիր,
քարտուղար, երեցփոխան, մի խոսքով՝ ամեն մի հոգևոր
իշխանության իրավասության ենթարկված անձն, որի
որևիցե ծանր կամ թեթև պակասության մասին կասկա-
ծում էր կամ յուր սեփական համոզմունքով կամ յուր
բարեկամների ասություններին լսելով: «Լաւ համարեալ
լինի ինձ եթէ հնար իցէ ունել զայր հաւատարիմ՝ որպէս
գործակատար առաջնորդական՝ - ասում էր Ներսեսը,
քան զանուանեալ և ոչ ենթակայացեալ տխմար հոգևո-
րականաց ժողով անուամբ հոգևոր կառավարութեան»
(կոնդակ 8 հոկտեմբ. 1848 ամիս N 283): Ներսեսը ուզում
էր հոգևոր իշխանությանը տալ այն ուղղությունը, որին
ցանկանում էր ինքը և որը պահանջում էր ժամանակը.
«բարեկարգել զամենայն կառավարութիւն հոգևորական
ըստ ցանկութեան մեր»: 1845 թվականի դեկտեմբերի 18-
ին Ներսեսը մուտք գործեց Թիֆլիզ և խսկույն ձեռք
զարկեց յուր բարձր նպատակը իրագործել: Ծաղրելով
դիվանական ձևերն, կարգ ու կանոններն, նա կոնդակ-
ներով ամեն ատյան, ամեն դիվանատուն լքցրեց, ամե-
նամեծ գործերից սկսյալ մինչև ամենաչնչին գործերն
ինքն էր քննում, ինքն էր վերահասու լինում, ինքն էր
տնօրեննություն անում: Նորա գործակալները Նիկողայոս
արքեպիսկոպոս Ալեքսանդրապոլցի, Ալեքսանդր Վարլա-
մյանց, Իսահակ քահանա Զիալյանց, Ստեփաննոս քա-
հանա Տեր Ստեփանյանց, Սարգիս վարդապետ Զալալյանց,
Ստեփաննոս քահանա Մանդինյանց, Կարապետ վարդա-
պետ Շահնազարյանց, մ. Կարապետ Յաղուբյանց, Դավիթ
Խերողենյանց, մ. Հարություն Դազազյանց, Սարգիս Հա-
կոբջանյանց, Հակոբ Զաթալբաշյանց և այլն և այլն ման
էին գալիս ամեն վիճակ, ամեն քաղաք և դյուղ և քննու-
թյուններ անում: Այդ մարդկանց իրեն հասցրած ամեն մի
ճշմարիտ և սուտ, իրավացի և անիրավացի տեղեկություն-
ների գորությամբ Ներսեսը առանց խնայելու, առանց

ծածկելու, աներկյուղ և վստահ կերպով ջարդուփշուր արավ ամեն մի կասկածավոր, իրան չսիրած հոգևորական անձն, արտաքսելով, աքսորելով, տանջելով, չարչարելով և նրանց տեղ աշխարհականներ կարգելով, որոց նա «խորհրդական» անուն էր տվել:

Բայց մի այդպիսի մեծ հեղափոխությունը այդչափ ջերմ եռանդով, այդ աստիճան շտապով ձեռամուխ լինելով իրագործել և «գիշխանն ժամանակաց» (կոնդակ 8-ն հոկտ. 1848 N 280) բազմակողմանի և սառն կերպով չքննելով, Ներսես կաթողիկոսը չէր կարող, բնականապես, չսխալվել, ուրիշներին սխալացրած չլինել:

Կարապետ արքեպիսկոպոսը Ներսեսի լավ բարեկամն էր, Ներսեսը ծանոթ էր նորա լավ հատկություններին: 1811 թվականից սկսյալ մինչև 1840 թվականը նոքա միմյանց հետ շարունակ գրագրություն ունեին: Բայց Ներսեսը առ ոչինչ համարեց այդ ամենը և գլխավորապես յուր բարձր գաղափարի ազդեցություն տակ, բռնացավ և Կարապետ արքեպիսկոպոսի վերա:

1846 թիվ հունիսի 9-ին ս. էջմիածնում Ներսեսը Կարապետ արքեպիսկոպոսի ձեռքով օձվեցավ կաթողիկոս: Միևնույն օրը ճաշի վրա խոսք բացվեցավ Դավմայի ջրի¹⁹ մասին, որին մեծ հարկավորություն էր զգում վանքը: Մինչդեռ կաթողիկոսը ցավ էր հայտնում, որ էջմիածնի դրամական միջոցները չեն ներում այդ բանը գլուխ բերել, Կարապետ արքեպիսկոպոսը հրապարակավ խոստացավ յուր հաշվով Դավմայի ջուրը բերել մինչև վանքը: Այդ ձեռնարկության ծախսը հաշվեցին մինչև 30.000 ռուբլի մոտավորապես: Կարապետ արքեպիսկոպոսը կրկնեց յուր խոստումը: Կաթողիկոսը համբուրեց նորան և կրկին ու կրկին շնորհակալ եղավ այսպիսի խոսքերով. «Եթե դուք, սրբազան հայր, մի այդպիսի հիշատակ կթողնեք վանքին, վանքն էլ ձեր հիշատակի համար մի արձան կկանգնեցնե նույն առվի գլխում»:

Այդ խոստումնքով Կարապետ արքեպիսկոպոսը գրավեց դեպի ինքը Ներսեսի ամենաջերմ համակրությունը:

Նոքա միշտ ի միասին էին ճաշում և միասին ընթրում: Մի առավոտ, երբ ըստ սովորականին Կարապետ արքեպիսկոպոսը գնում էր կաթողիկոսի մոտ չայի, նորան մտածմանց մեջ գտավ: Հարցնելով պատճառը, Կարապետ արքեպիսկոպոսը տեղեկացավ, որ Ներսեսը յուր մտադրությունը փոխել է. խոստացված 30000 ռուբլին ուզում է ուրիշ բանի գործադրել:

Տաճկաց և տաճկաստանցի հայերի համար աշխարհումս չկա մի այլ մեծ առաքինություն, քան ջուր, աղբյուր վազեցնել հասարակության համար և նորա «ողորմիսը» ժառանգել: Այդ բանը գուցե ունի և յուր պատմական ու կրոնական նշանակությունը տաճիկների համար: Կարապետ արքեպիսկոպոսը, որ ամեն տեղ, ուր բնակվել էր, ունեցել էր յուր աղբյուրը և հոժարել էր 30000 ռուբլի նվիրել և էջմիածնի վանքումը ունենալ մի այդպիսի հիշատակ, չհամակրեց կաթողիկոսի մտքին: Վերջինս աշխատեցավ նորան համոզել, Կարապետ արքեպիսկոպոսը համառոեցավ յուր մտքի վրա: Ի վերջո բանն այնտեղ հասավ, որ Ներսեսը պահանջեց խոստացված գումարը անպատճառ իրեն տալ, որպես վիճակի փող: Կարապետ արքեպիսկոպոսը հասկացավ, որ յուր թշնամիները պղտորել են կաթողիկոսի միտքը, որից իրան անձը անպատված համարելով այդ խոսքերից, միևնույն օրը կառք նստավ և դուրս եկավ էջմիածնից: Կաթողիկոսը նորա ետևից, մի քանի ժամանակից հետո, հասավ Թիֆլիզ և ահա դուրս եկան Ներսեսի կոնդակներն (Գ-ն և ի 10 փետր. 1847 N N 38 և 39), որոց վերջինը Կարապետ արքեպիսկոպոսի անունով: Այդ ահագին կոնդակի լեզուն և ոճը շատ խաղաղական, կարելի է ասել փաղաքշական է, և կաթողիկոսը Կարապետի հետ խոսում է ամենամեծ հարգանքով, վիճակի բոլոր պակասությանց միակ պատճառը համարելով նորա, Կարապետ արքեպիսկոպոսի, ստորադրյալներին: Այդ կոնդակների գորությամբ Թիֆլիզում կազմվեցավ մի հանձնաժողով կոնսիստորյայի բոլոր գործերը, սկսյալ բացված օրիցը, քննելու:

Այդ հանձնաժողովի անդամներն էին Մինաս արքեպիսկոպոս (մի ողորմելի անձն, որ հազիվ յուր անունը ստորագրել էր իմանում), Իսահակ քահանա Զիալյանց, տիտուլյարնի սովետնիկ Ալեքսանդր Ստեփանյան Վարլամյանց և ազնվական Դավիթ Խերողինյանց, որոց օգնում և նպաստում էին, թեև ոչ պաշտոնապես, այսինքն աշխատում էին անպատճառ Կարապետ արքեպիսկոպոսին հանցավոր դուրս բերել նորա ռեսերիմ թշնամիները՝ Նիկողայոս արքեպիսկոպոս Տեր-Մարուքյանց, որ ուզում էր ստանալ Կարապետ արքեպիսկոպոսի պաշտոնը, Մեսրոպ Երևանցյանց, որ եկեղեցվուն ունեցած պարտքի մասին շատ նեղութուն կրած էր առաջնորդից (հետո նա ստիպվեցավ այդ պարտքը վճարել Ներսեսին հրապարական աճրդախոսությամբ վաճառելու յուր տունը) և Թոմաս Սարգսյան Կորդանյանց (էջմիածնի Սինոդի պրոկուրորը), որ չէր կարողացել հարուստ արքեպիսկոպոսին որսալ դեպի յուր կողմը²⁰...

ԺԱ

Փետրվարի 19-ին 1847 ամի վերոհիշյալ հանձնաժողովը դեռ նոր էր սկսել յուր գործունեութունը, երբ Ներսես կաթողիկոսը արձակեց իրանց պաշտոններից կոնսիստորի բոլոր ծառայողներին սկսյալ առաջնորդից մինչև հետին գրագիրը: - Ներսեսի այդ կրակոտ կոնդակում՝ Կարապետ արքեպիսկոպոսի մասին ոչինչ ասված չէ, բայց սաստիկ հարձակողական, մինչև անգամ հայհոյական, բառերով կաթողիկոսը կշտամբում է մյուս ծառայողներին: Կոնդակը սկսվում է այսպես: «Յառաջեցին անդր քան զսլայման յիմարութեանց ներգործութիւնք մինչև մոռացեալ զաջ և զահեակ անձանց իւրեանց և պաշտոնի աներկիւղ յԱստուծոյ և անպատկառ ի մարդկանէ զբազում՝ երկայնատուութիւն մեր ի վերայ բազում՝ խարդախութեանց իւրաքանչիւրոց ինքեանց չարաչար ի գործ եղեալ իբրև անծանօթի

իւրեանց մշտավնաս կառավարութեանց յանդգնեցան և մեզ որսալ ի ճարտարարուեստ թակարդ իւրեանց»։ ... (կոնդակ 31 մարտի 1841 ամի N 118)։ Աչքի առջ ունենալով հանձնաժողովի ընդարձակ և ամենախիստ պրոգրամմը կոնսիստորիայի գործերի խառնափնթորությունը, հավանական է կարծել, որ հանձնաժողովը չէր կարող մի որոշ նպատակի հասնել, միայն թույլ ենք տալիս կարծելու, որ եթե Կարապետ արքեպիսկոպոսը օրինավոր կերպով մեղավոր դուրս եկած լիներ քննությունից, ներսեսը նրան չէր թողնիլ հանգիստ և վիճակի կորուստներ, եթե կային, անպատճառ կստանար նրանից։ Հաշվեքննությունը վերջանալից հետո կայսերական բարեհաճությամբ և Կառավարիչ ծերակույտի կարգադրությամբ (հրամ.՝ 15 հոկտեմբերի 1848 ամի N 44, 492) Կարապետ արքեպիսկոպոսը կրկին հաստատվելով յուր առաջնորդության պաշտոնի մեջ միևնույն ժամանակ նշանակվեցավ և գլխավոր անդամ՝ Սինոդում, բայց նա բարվոք համարեց թողնել յուր առաջնորդությունը և Սինոդի անդամակցությունը և վերադառնալ Ախալցխա դեպ յուր «սիրելի գաղթական ժողովուրդը»։ - Վերադառնալով Ախալցխա, Կարապետ արքեպիսկոպոսը վիճակն էլ, նրա գործերն էլ, փողերն էլ թողեց կաթողիկոսին, որը և «ստանձնելով զպաշտօն վիճակաւորի» (կոնդակ 28 հուլ. 1850 ամի N 210) և կոնսիստորիայի օրագիրներին ստորագրելով, թե Տփխիսում և թե Էջմիածնում եղած ժամանակ, որպես «վիճակավոր Վրաստանի և Իմերեթի և կաթողիկոս ամենայն Հայոց» (կոնդակ 13 ապրիլի 1848 ամի N 153) ժողովեց թե վիճակի և թե եկեղեցիների ահագին գումարներն (կոնդակ 17 սեպ. 1848 ամի N 278) և տանելով Էջմիածին, շինեց այնտեղի լիճն ու անտառն...։ Վերադառնալով Ախալցխա, Կարապետ արքեպիսկոպոսը չազատվեց ներսեսի հալածանքներից մինչև 1849 թվականի վերջերը։ Կարապետ արքեպիսկոպոսին յուր շինած բնակարանում չթույլատրվեցավ բնակվելու, ուսումնարանի համար նորա պատրաստած շինությունը

առնվեցավ նորա ձեռքից և հոգևոր կառավարութիւնը գետեղվեցավ, նորա սպասավոր Գևորգ եպիսկոպոսի կահարասիքն նորա ձեռքից խլվեցավ, նորա անվան հիշատակութիւնն անգամ ինչպես վիճակի, նույնպես և Ախալցխայի եկեղեցիների հիշատակութեան թերթերից ջնջվեցավ և ով որ Կարապետ արքեպիսկոպոսի բարեկամ կհամարվեր կամ իսկապես բարեկամ էր, հալածվեցավ: Շատ մարդիկ, որոնք Կարապետ արքեպիսկոպոսին մտերիմ էին, բայց նորանց վնասելու անձեռնհաս էր Ներսեսը, զանազան խայտառակ տիտղոսներով կնքվեցան, ինչպես «մաքոքն անիրաւութեան» և այլն, Կարապետ արքեպիսկոպոսին խստիվ արգելվեցավ «չառնել ոչինչ կարգադրութիւն ոչ բանիւ և ոչ գործով» (կոնդակներ 15 հոկտ. 31-ն մարտի, 4 հուլիսի 1847 ամի NN 383, 118, 245. Ի 13-ն ապրիլի, 22 հոկտ. 8-ն նոյեմբերի 1848 ամի NN 153, 262 և 276):

Բայց Ներսեսի այդ բոլոր հալածանքներին տանոււմ էր Կարապետ արքեպիսկոպոսը և միշտ ասում «կաթողիկոսը մեղաւոր չէ, այլ մեղաւոր են քսու մարդիկ»: Մի օր մի բարձրաստիճան անձն մի ժողովի ժամանակ ասաց Կարապետ արքեպիսկոպոսին «եթե դուք կամենաք, սրբազա՛ն, օրենքով շարժել, կարող եք Ներսեսի հախիցը գալ»: Եպիսկոպոսը պատասխանեց. «Իմ Հայրապետի կամքը ինձ համար օրենք է, թող ես հալածվիմ, բայց թող Հայոց կաթողիկոսի խոսքը չկոտրվի»:

ԺԲ

Անցավ մի քանի ժամանակ, Ներսեսի բարկութիւնը փոքր առ փոքր հանդարտեցավ, նա սառը կերպով սկսեց քննել յուր շուրջը պատող մարդիկներին և հասկացավ, որ այն ժամանակվա եպիսկոպոսների և առաջնորդների մեջ չունեն որ ուրիշ Կարապետ: Մեր ձեռքի տակ կան կոնդակներ, որոնց մեջ կաթողիկոսը բացարձակ խոստո-

վանում է, որ իրան սխալեցրին, որ Կարապետի ստորագր-
վածների հանցանքի պատճառով միմիայն նա դատա-
պարտվեցավ, թե Կարապետ արքեպիսկոպոսի հանցանքն
էր «միմիայն տարապայման յանձնաստան թողուլն ամե-
նեցուն նոցա (կոնսիստորի ծառայողներին): 1850 թվա-
կանից ներսեսը սկսում է բարեկամանալ Կարապետ ար-
քեպիսկոպոսի հետ: Նա ուղարկում է նորան 1851 թվին
առանձին հրավիրակ (Մակար վարդապետին, այժմ արքե-
պիսկոպոս) առանձին կոնդակով և հրավիրում է գնալ
էջմիածին, բայց Կարապետը չի գնում: 1852 թվին, երբ
կաթողիկոսն ինքն գալիս է Ախալցխա, իջևանում է
Կարապետի մոտ, նորա առանձին բնակարանումը, հրա-
վիրում է, Կարապետ արքեպիսկոպոսը խոստանում է
գնալ առաջիկա աշնան, բայց պատերազմը (1853) վրա
գալով, չի կարողանում գնալ: Վերջապես 1855 թվին
երկրորդ անգամ գալիս է հրավիրակ նույն Մակար եպիս-
կոպոսը առանձին կոնդակով, որի մեջ ներսեսը հիշելով
Կարապետին յուր քառասնամյա բարեկամությունը և
գրագրությունքը նրա հետ, պատմելով յուր կրած վշտերն
ու տառապանքներն էջմիածնում, Բեսսարաբիայում և Ս.
Պետերբուրգում, յուր «ճանապարհորդելն ի բանակն կայ-
սերական զօրաց ընդդէմ օսմանեան տէրութեան» յուր
համբերությունն և «անվրդով ըստ ամենայնի մնացեալ
լու՛ն լու՛ն օրհնաբանութեամբ հաճոյից Տեառն Աստուծոյ»
աղոթելն և այլն և այլն, ավելացնում է՝ «յատուկ մեծա-
րանօք առաքեցաք (առաջին անգամ) հրաւիրակ ձերում
բարձր սրբազնութեան իծոց լուսոյ մօր մերոյ զՄակար
վարդապետ պատուարժան անդամն Սինոդի և միաբանու-
թեան զհարազատն մեր, որում թէպէտ և զառաջինն,
որպես ծանոյց նա մեզ, յոժարեցայք դուք գալ, այլ ահա
քանի ամբ են զի գտանիք իբրև օտարացեալ առ ի մէնջ և
բազմութեանց միաբանութեանց սրբոյ մօրն լուսոյ: Ուստի
այժմ ևս ուշադրութեամբ պաշտելի ճշմարտութեանց առա-
քելական ձայնարկութեանցն - «Աշխարհս անցանէ և
ցանկութիւնն, այլ որ առնէ զկամս Աստուծոյ մնայ յաւի-

տեան»։ Մեք ամենեքին գոյով ակնկալ յուսոյն յաւիտե-
նական յիշատակութեամբ նորուն այժմ ևս ահա ի դիմաց
մեր և ի դիմաց Սինոդին սրբոյ Էջմիածնի և ամենայն
միաբանութեանց առաքեցաք հրաւիրակ բարձր սրբազնու-
թեան Ձեր զսրբազան Մակար եպիսկոպոս անդամն Սինոդի
Ս. Էջմիածնի և վանքական կառավարութեան պատրիար-
քական աթոռոյ ամենայն Հայոց և ցանկամբ ամենեքեան
զի և դուք զմտաւ ածելով զձեր յաւիտենական յոյսն
անարժան համարելով վասն ձեր բացակայութիւն ձեր ի
գրկաց սրբոյ Մօր ձեր լուսոյ և ի մէջ և յամենից եղբարց
միաբանութեան, բարեհաճեսջիք յարգել զցանկութիւն
մեր և ամենեցուն և գալ ընդ յիշեալ հրաւիրակին մերոյ և
արժանաւորել զմեզ մեծագոյն ուրախութեանց ձերով
տեսութեամբ և շարունակել զսինողական խորհրդածու-
թիւն ձեր վասն օգտի սրբոյ Աթոռոյն և ամենայն ազգա-
կան միաբանութեան մերազանց և վասն փառաւորութե-
անց անուան բարձր սրբազնութեան ձերոյ (կոնդակ 11
հոկտեմբերի 1855 ամի N 299)։ 1853 թվականի պատերազ-
մի ժամանակ յուր կրած նեղություններից ժողովրդյան
հանգստութեան և կազմութեան համար, նրանց կրած
նորանոր վնասներից և աղքատների թվի հետզհետե շա-
տանալուց, Կարապետ արքեպիսկոպոսը չէր կարող նորանց
թողնել անխնամ ու անտեր և գնալ Էջմիածին, մանավանդ
որ, ինչպես գրուած էր կաթողիկոսին «հասեալ գոյով
յարևմուտս կենաց» նա ուզում էր յուր մտադրյալ մյուս
մեծագործություններն գլուխ հանել, ուստի և դարձյալ
մնաց Ախալցխա յուր առանձին բնակարանում։

Էրզրումից գաղթելից հետո մինչև Թիֆլիզ վիճակավոր
գնալն և հետո Թիֆլիզից մինչև կրկին Ախալցխա վերա-
դառնալն Ախալցխայի խղճուկ աղքատների հոգսը քաշում
էր ինքը Կարապետ արքեպիսկոպոսը զանազան ձեռնտվու-
թյուններ անելով նրանց։ Այսպես մինչև վիճակավոր
նշանակվիլն նա ծխատեր քահանաների ներկայացրած
ցուցակների համեմատ տաղավարներին բաժանում էր
աղքատներին ցորեն, ալյուր, յուղ։ Բացի դորանից բարե-

կարգիչ Կարապետ քահանա Տեր-Մարտիրոսյանցի ձեռամբ (որ ցարդ կենդանի է) հինգ տարի շարունակ աղքատներին մասնատրում էր յուրանքաչյուր տարի չորս հարյուրական ռուբլի, իսկ առաջնորդ նշանակվելից հետո յուրաքանչյուր տարի նույնչափ գումար մասնատրել էր տալիս յուր հաշվից Աղաբաբ Վարդանյանցի ձեռամբ: Կարապետ արքեպիսկոպոսի կյանքի վերջին տարիների գործքերից հիշատակության արժանի են աղքատաց հոգաբարձության կազմակերպությունը: Այդ հոգաբարձությունը շարունակում է մինչև այսօր և դորա նպատակն է խեղճ և անտերունջ աղքատներին օգնել: Հոգաբարձությունը կազմվում է այսպես: - Երեք տարին մի անգամ հասարակությունը հավաքվում է և քվեարկությամբ ընտրում է յուր միջից երկու աշխարհական և մի հոգևորական (քահանա) անձինք հոգաբարձուներ: Այդ հոգաբարձության մոտ կա ցուցակ քաղաքի աղքատների և հասարակության ներկայացուցիչներից ժապավինացրած և վավերացրած մի մատյան, ուր գրվում են նվերները և երեք ամսենը մի անգամ մասնատրվում են աղքատներին հոգաբարձության անդամների ձեռքով, իսկ նվերներ հավաքվում են այսպես 1) Ամենայն շաբաթ օր հոգաբարձության որոշմամբ, ամեն մի քաղաքացի մի արհեստապետի հետ հերթով փողոցներում գանձանակ է մանածում և կամավոր նվեր հավաքում կամ դրամով կամ զանազան իրեղեններով, ինչպես սանդր, աղյուղ և այլն, որոնք հետո իսկույն վաճառվելով, փոխարկվում են փողի: 2) Տարվա չորս գլխավոր տաղավարներում քաղաքագլուխը, հոգաբարձության մի անգամը և քաղաքացիներից էլ երկու հոգի ման են ածում նույն գանձանակը փողոցներում: - Հետևյալ օրը, ավագ քահանաները եկեղեցիներում ծանուցմամբ հայտնում են հասարակության այդ կերպով հավաքված գումարների որքանությունը: 3) Ամենայն շաբաթ երեկո և կիրակի առավոտ մի քահանա մի հոգաբարձուի հետ եկեղեցիներում ման է ածում դարձյալ գանձանակ: 4) Ամենայն եկեղեցու գավթում կան կնքված

գանձանակներ, որոնք նույնպես գտնվում են աղքատաց հոգաբարձուլթյան իրավասուլթյան տակ: - Բացի այդ մշտական աղբյուրներից, աղքատաց հոգաբարձուլթյունը երբեմն երբեմն հայտնի կամ ծածուկ նվերներ է ստանում ուխտագնացներից, պսակվողներից, ննջեցյալների տերերից: - Այդ եղանակներով հավաքված փողերի գումարը հասնում է 1800-2000 ռուբլու տարեկան:

Հին հոգաբարձուները և ծերերը մեղ հավաստիացրին, որ Կարապետ արքեպիսկոպոսը սովորուլթյուն ուներ ամենայն առավոտ և երեկո եկեղեցուց դուրս գնալիս մի մասնավոր նվեր ձգել եկեղեցու դավթում դրված գանձանակը, իսկ հանդիսավոր օրերում նա երբեմն երբեմն պղնձե դրամի վրա փաթաթած ձգում է եղել և 100 և 25 մանեթանոց թղթեր:

Երկրորդ նշանավոր գործն էր աղքատանոցի կազմակերպուլթյունը, որ նորան չհաջողեցավ, մահը վրա հասնելով: Աղքատանոցը Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր կազմակերպել այսպես: Նա արդեն պատրաստած էր մի ընդարձակ տեղ, դետին, որի վերա պետք է շինվեր աղքատանոցը, ուր աղքատները ձրիաբար բնակվելու և կերակրվելու էին: Աղքատանոցը պիտի կառավարվեր բացի վերոհիշյալ աղբյուրներից գոյացած գումարից այլ նաև 1) քսան խանուլթների արդյունքով: Այդ խանուլթների մի մասը յուր կենդանուլթյան ժամանակ նա արդեն շինած էր, մնացյալ մասի համար էլ կտակով փող թողեց, բայց այդ փողը յուր նպատակին չծառայեց, ինչպես հետո կտեսնենք, և մնացյալ շինուլթյունը ավարտվեցավ Ջալալյան Սարգիս արքեպիսկոպոսի (այն ժամանակվա թեմակալ առաջնորդի) տնօրինուլթյամբ եկեղեցական փողով և այդ 20 կրպակները և նրանց եկամուտը գտնվում է այժմ երեցփոխանի իրավասուլթյան տակ 2) 33 հին և անչուք տների եկամուտներով: Այդ տները Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր կարկատել և նորոգել և հանձնել աղքատաց հոգաբարձուլթյան: Այդ տներում այժմ բնակվում են քաղաքիս հայ աղքատները ձրիաբար. 3) աղքատասեր

ընկերութեան բաժանորդագներով, որ սահմանելու էր «մեծավորը» և որի յուրաքանչյուր անդամը տարեկան պետք է վճարեր 1ռ. 20կ. վերջին ժամանակներում քաղաքիս արհեստավորները մի քանի անգամ ժողովներ կազմեցին իրանց «մեծավորի» այդ նպատակը իրագործելու, բայց զանազան պատճառներով դուրս չեկաւ այդ բանը: Մենք համոզված ենք, որ եթե Կարապետ արքեպիսկոպոսի մահը շուտ վրա չհասներ, Ախալցխան այժմ կուռնենար և մի փառավոր ու հաստատուն աղբյուրներով ապահովացրած «Կարապետյան աղքատանոց» ինչպես ունի մի այդպիսի ուսումնարան, որ յուր եկամուտների կողմից առաջինը կարող է համարվիլ Ներսիսյան ուսումնարանից հետո: Ասում են, որ Կարապետ արքեպիսկոպոսը մտադիր էր աղքատանոցի մոտ բաց անել և մի փոքրիկ ուսումնարան որբերի և աղքատների անտերունջ զավակների համար, այնպես, ինչպես նա բաց արած ունեւ էր զուրումում մի այդպիսի հիմնարկութիւն՝ վանքային մշակների և սպասավորների որդոց համար, ուր ճրիաբար ուսուցչութիւն էին անում մի մի տարի հերթով Կարապետյան ուսումնարանի հառաջագեմ աշակերտները: Այդ մշակների ուսումնարանի արգասիքն է մի «ավագ մշակի» որդին, Դավիթ քահանա Օրճացի (Ախալքալաքա գաւառում), որի աշակերտներն են այդ ընդարձակ գաւառի գրեթե բոլոր հայ քահանաներն և որի կյանքից մի քանի գծեր մենք հաղորդել էինք ընթերցողներին 1875 թվականի Մեղուի մի համարում: Այդ բազմարդյուն քահանան այս տարի վախճանեցաւ:

ԺԳ

1853 թվականի պատերազմի ժամանակ, երբ օսմանցիք հանկարծակի հարձակվեցան Ախալցխայի վերա և լցվեցան քաղաքի արվարձաններն ու գերեզմանները, Ախալցխայում բացի սակավաթիվ պահնորդ զորքից ուրիշ զորք

չկար: Տաճկաց գլխավոր բանակը զետեղված էր Սուխխիս գյուղում. որ Ախալցխայից երկու վերստ հազիվ հեռի է: Քաղաքի հարավային կողմում բարձրություններից տաճիկները թնդանոթներով և հրացաններով ուժակոծում էին բերդը, քաղաքը և մասնավորապես «էրզուրուումի զարաբաշի» տունը: Ժողովրդականք մեծ տազնապի մեջ էին, հարուստները քաշվում էին բերդը և այնտեղ ամրանում, իսկ հասարակ ժողովուրդը յուր բոլոր հույսը դրել էր դարձյալ յուր «մեծավորի» վերա: Կարապետ արքեպիսկոպոսը եկեղեցու բեմից անդադար քարոզ էր կարդում և ժողովրդյան կազդուրում: Նորա հրավերքով կազմվեցավ մի հայկական գումարտակ, որոնց տերությունից բաժնվեցան հրացաններ և ուրիշ զենքեր: Այդ գումարտակին առաջնորդում էր խաչը ձեռին Կարապետ արքեպիսկոպոսի նախկին սպասավոր, Սուրենյան Հակոբ ավագ քահանան: Այդ գումարտակն էր, որ մինչև Տիխիսից գորքեր հասնելն և հասնելից հետո էլ օգնում էր քաղաքի պահպանությանը: Թանկությունը սաստկացել էր քաղաքի մեջ և օսմանցուի երկյուղի հետ միասին սարսափեցրել ժողովրդին: Կարապետ արքեպիսկոպոսը ժողովրդի ոգին մինչև վերջը պահպանելու համար, չնայելով իրան արված առաջարկություններին, չհամաձայնեցավ թողնել յուր բնակարանը և քաշվիլ բերդը, միայն յուր տան վրա տեղացող զենքերի հարվածներից երկյուղ կրելով, քաշվեցավ Հրեից թաղը, ձորի մեջ: Նորա այդ անձնանվեր ժողովրդասիրությունը վկայում է այսօր գաղթական ժողովուրդը: Միևնույն այդ բանը վկայում են և նորա Վասիլ և Գրիգոր իշխան Բեհբուլթյանցներից ստացած նամակներն, որոնցից հանում ենք այս տողերը «*Приношу Вам, милостивый архипастырь, мою искреннюю благодарность за твердость, с каковою Вы оставались в городе Ахалцихе, окруженном со всех сторон неприятелем, и личным присутствием Вашим одушевляли и поддерживали дух жителей, которые по доходящим ко мне частным сведениям видно, что разделяли труды и опасности вместе с храбрыми нашими войсками*»: (Ալեքսանդրոպոլից. 29

նոյնմբ. 1853)... «Քարոզեցաւ յականջս ամենեցուն թէ դուք ի սէր հօտի ձերոյ մոռացեալ ապահովութիւն ձեր անձնական բացէ ի բաց մերժեալ էք զհրաւէր մտանելոյ և պատսպարելոյ ի բերդին: Ողորմությամբ Տեառն յամօթի եղեն թշնամիք խաչին, փախեան, ցիրուցան եղեն, իսկ համբաւ ձեր և փառաւոր անուն և ևս հռչակեալ անմահացաւ, զի ուր և քարոզեսցի պաշարումն և ազատութիւն քաղաքիդ Ախալցխոյ, քարոզեսցի և համբաւ վսեմ հոգւոյ ձերոյ և աներկիւղ վստահութիւն ձեր» (Թիֆլիզից 12 դեկտ. 1853.):

Ընթերցողը կհիշէ, որ Կարապետ արքեպիսկոպոսը էրզուրումում երկու անգամ կաթված էր ստացել և բժշկվել: Վերջին անգամ աջ ոտքի վրա ստացած կաթվածից նա բոլորովին չէր առողջացել և շատ անգամ հիվանդանում էր: Յուր վերջին ժամանակներում կրած վշտերն և նույնիսկ ծերությունն 1856 թվականի սկզբներում նրան ձգեցին անկողնի մեջ, որից այլևս չկարողացավ վեր կենալ և նույն տարվա հունիսի 3-ին վերջացրեց յուր յոթանասուն և վեց ամյա արդյունավոր կյանքն: Մեռնելից մի քանի օր առաջ, մայիսի 23-ին, նա ժողովեց յուր մոտ Ախալցխայի բոլոր ազգությունների ներկայացուցիչներին, հոգևորականներին և աշխարհականներին, օրհնեց նորանց, հորդորեց «եղբայրական սիրով վարել ընդ միմեանս, բառնալ ի միջոյ զորումն սատանայի, զհեռ, զնախանձ»: Հետո առանձնապես խրատներ տվեց դադթական ժողովրդյան, մաղթելով նոցա համար առ Աստված «պահել լրութեամբ ի ծոց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ճմարիտ հաւատով, պարկեշտ վարուք և միաբանական սուրբ սիրով»: (գիր օրհնության մայիսի 13-ին 1856 ամի):

Կարապետ արքեպիսկոպոսը պարթև և փառահեղ մարդ էր, առույգ և կայտառ նույնիսկ ծերության ժամանակ, մի աչքը շիլ, արծուունգն, ձայնը զորեղ, ուսումնասեր և լավ քարոզիչ: Շեքերճյան Գրիգոր պատվելուց նա միշտ դաս էր առնում Աստվածաբանությունից էրզուրումում, Ախալցխայում և Թիֆլիզում, ծանրաբարո և ողորմած:

Բայց նորա ամենամեծ հատկությունն էր յուր ժողովրդականությունը: Նա միշտ և հանապազ ժողովրդյան մեջ էր ապրում, նրա հետ ուրախանում և նրա հետ վշտանում: Շատ անգամ հարսանիքներում, նույնիսկ աղքատների տներում, նա սեղանի գլխում բազմած զվարճանում էր: Շատ անգամ էլ փորձանքի և զանազան ճախորդությանց ժամանակ նա դրամով օգնում էր: Առանձնապես յուր տան մեջ Կարապետ արքեպիսկոպոսը սաստիկ խնայող, կարելի է ասել կծծի էր, նրա ճաշը երկու տեսակից էր բաղկացած և այն գլխավորապես կանանչեղենից, բայց և շատ առատ էր հարկը ստիպած ժամանակ: Կարապետ արքեպիսկոպոսի հառաջադրություններով Ներսիսյան ուսումնարանի տպարանում տպված են բացի մի քանի գրքերից նաև «Թերթք վասն պարտավորութեան երեցփոխանաց (1842)» «Վաճառելի մատեանք հոգևոր ճեմարանին», «Ատենի աւետարան», «Հաւատով խոստովանիմ երեք լեզուով» (1843), «Պատմութիւն հայոց» (1843), «Խորհրդատետր» (1844):

Ժ Դ

Կարապետ արքեպիսկոպոսը յուր մահվանից առաջ թողել է կտակ, որ հետո մեծամեծ դատաստանական վեճերի պատճառ դարձավ և վերջիվերջո անգործադիր մնաց: Դեննք այստեղ ամբողջությամբ այդ կտակը:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ես ներքոյ անուանեալս արքեպիսկոպոս հայոց Կարապետ հանապաղօր ունելով ի յիշատակութեան իմում անմոռաց զանդառնալի վճիռ Արարչին իմոյ զայս իմ կտակ անդառնալի ըստ իմում յօժարութեան ի լինելն իմ յամբողջ բանաւորութեան աւանդեմ կտակակատարաց իմոց աներկբայ լինելով թէ այն ըստ Առաքելական սուրբ վճռոց և համաձայն կայսերական օրինաց հաստատուն է յետ մահուան իմոյ և եղիցի հանապազ:

Ի միջոցի այսքան բազմամեայ ծառայութեան իմում Հայրենի սուրբ եկեղեցւոյ և ազգի յարգարավաստակ արդեանց իմոց ստացեալ իմ զկալուածս և զկայս, զորս ազաչեմ կտակակատարաց իմոց բաժանել յետ մահուան իմոյ յետագայ կարգաւ:

1) Արքեպիսկոպոսական տունն իմ որ յարեմուտս սուրբ Փրկիչ եկեղեցւոյ Ախալցխոյ ընծայեմ սրբոյ Աթուոյ էջմիածնի և Երուսաղեմի այնպէս զի տարեկան արգիւնք նորին Հաւասարաչափ ստասցին այն երկու սուրբ աթոռք:

2) Գիւղօրայքն իմ Կարծախ, երկու Տաղէչներ, Խաւետ, Խօզաբին, Կարաւ և Վերանայ – Կարծախ, և ընդ սոցին եղեալ լերինք և խոտնոցք Սանճախին* Չլտրոյ որ անկանի ի կողմն Ռուսաց՝ զորս 1834 ամի դնեալ եմ ի սեփհական արդեանց իմոց, միայն ընդհանուր կանոնաց տէրութեան որով չհրամայի կուսակրօն հոգեւորականաց Հաստատել զկուբչայս** յանուն իւրեանց ըստ բարձրագոյն բարեհաճութեան հրամայեցաւ ինձ տալ Հաստատել զայնս յանուն միոյ եկեղեցւոյ, որում ես յօժարիցեմ, վասնորոյ ետու Հաստատել զայն կուբչա յանուն սուրբ Փրկիչ եկեղեցւոյ տեղւոյս, զորոյ այժմ տարեկան եկամուտն տնօրինեմ բաժանել յերիս Հաւասար մասունս. 1) Մի մասն սուրբ Փրկիչ եկեղեցւոյ, որով կտակակատարքն իմ երկամեայ արդեամբքն տացեն բերել ի Ռուսաստանէ յարմար ձեակերպութեամբ զմի պատուական խաչկալ վասն խորանի նոյն եկեղեցւոյ և զմի մեծ պատկեր փրկչական որոյ թագն ևս շինեսցի արծաթապատ ոսկեղօծ ի Մոսկուայ և վասն զարդարելոյ զայն ևս աւանդեմ կտակակատարաց իմոց զերկու մեծագոյն կաբինետնի մատանխան իմ զորս առաքեսցեն անդ ի վայելչազարդ շքեղութիւն թագին փրկչական: Յետ այսոցիկ երկուց ամաց տարեկան արդեամբք այսոքիւք յամի ամի հոգասցեն զներքին պէտս

* սանճախ, սանջակ – վարչական միավոր Օսմանյան կայսրութիւնում, որը Համապատասխանում է գավառին:

** կուբչա, կուսչա – առք ու վաճառքի սեփականութեան փաստաթուղթ:

նոյն եկեղեցւոյն և ամ յամէ յաւելացուսցեն զվայելուչ զարդս սեղանի, զգեստուց պատարագի և զչապիկս սարկաւազաց և տիրացուաց ամենայն վայելչութեամբ և այս հասանելի տարեկան արդիւնքն եկեղեցւոյ մի երբէք մտցեն ի մատեան արդեանց, այլ յաւելեալ զարդքն գրեացին իցուցակի կայից եկեղեցւոյն: 2) Մի բաժին որ վասն ուսումնարանի կառավարեսցէ զայն ըստ հաճութեան և ըստ համաձայնութեան ընդհանուր հասարակութեան: 3) Մի մասն աղքատաց և կարօտելոց և ի ձեռն հոգաբարձուաց նոցին, յորմէ շահեսցեն զաղքատս Աժողօրայ և Խրթուիզոյ և յիսուն մանէթ ի տարին առաքեսցեն յախալքալակ ի գանձանակն աղքատաց: Յիսուն մանէթ ի տարին բաժանեսցի քահանայից եկեղեցեացն Ախալցխոյ որք և կատարեսցեն յամենայն տաղաւարս վասն իմ զհոգեհանգիստ: Չորս աղքատ մանկունք կիրթ յեկեղեցական ժամերգութիւնս վասն ծառայելոյ եկեղեցւոյն ամենայն ջերմեռանդութեամբ և վասն պատրաստութեան վայելուչ ուսումնառութեան ի հոգևորականութիւն պահպանեսցին շարունակաբար տալով իւրանքանչիւրոցն ի սնունդ զվաթսուն մանէթ, զորս աղաչեմ կատարել անտրտունջ և անխնայօրէն: Կառաւարիչ և վերակացու այսոցիկ կալուածոց կարգեմ ես նմանապէս զկտակակատարս իմ:

3) Առաքեսցին ի սուրբ Էջմիածին ամենայն ձեռագիր մատեանք իմ, բաց ի քանի մի ձեռագրաց, առ ի անկորուստ պահպանել իբրև աւանդ սրբազան ի գրատան նորին, որպէս և ես ցայսօր պահպանեալ եմ զայնս: Արծաթեայ օձազլուխ գաւազանս և ձեռաց խաչն իմ ոսկեզօծ և ասղանի կարմիր մախմուր եմիփորոնն արծաթեայ խապալան իմ ոսկեզօծ, երեք ձեռաց գաւազանքս և կապուտ ասղանի աթլազ խալիչայսն ի վայելս սրբոյ տաճարին, յորոց լէկեն իպրղն²¹ յատուկ ի ժամ պատարագի վասն ժամարարաց, մի մեծ տուժինանոց արծաթեայ փողնոցն, մի արծաթեայ մեծ չայնիկն, մի կաթամանն և մի տուժին ոսկեզօծ, սևադեայ դանակն չենդել և գդալսն, մի մեծ կառէթն, մի կալասկայն և մի Փայտոնն ընդ չորից

երիվարաց և պարագայիցն ի վայելս վեհափառ կաթողիկոսին: Հինգ մատանիք իմ մի զմրուխտ բոլորն խուրդայ, մի լալ բոլորն ալմաս խուրդայ, մի զմրուխտ բարձրանկիւնք խուրտայիւք և երկու մեծ տափակ եաղութ, նմանապէս և երկու մեծ բանակիքս (պանակի) ընդ նոսին ևս մի ոսկի ժամացոյցս և մի արծաթն ի թանգարան նորին: Երկու մեծ քուրք (մուշտակ) երեսն մահուդ, մի փոքր քուրք երեսն կարմիր գէղի, երկու ծիրանի և կապուտ ծաղկեայ փիլոնք, երկու ծիրանի և կարմիր կապուտ մախմուր վերարկուք ընդ ամենայն հանդերձնդինաց իմոց առաքեսցի ի հանդերձատունն: Մի մեծ պարսից դիպայ շուրջառն և մի եմփորոնն յանձնեսցի պահարանին, որք պատկանին սրբոյ էջմիածնի և ձեռագրաւ դտանին առ իս: Եւ մի մեծ մինալի տափակ անդղ ժամացոյցն իմ վայելս բարձր սրբազան Ղուկաս արքեպիսկոպոս եղբօրն իմ:

4) Ամենափրկչի սուրբ եկեղեցւոյն Ախալցխոյ բաց ի վերոյնշանակեալ գիւղօրէից և երկու մատանեանցն տացի մի յունածև խաչն մէջն փայտեայ երեսն չիֆտիչի խամ քարերով, խաչ սևատու բոլորն մարջանիւ (բուստ) և խամ քարամբք անծանօթ մասամբ, մի փոքր խաչ երեք մասամբ, մի փոքր խաչ պղնձեայ, մասամբ սրբուհւոյն Հռիփսիմեայ, մի տուփ փղոսկրեայ ի միջի քանի մի մասունք սրբոց, որոց անուանքն վրացերէն և անվերծանելի, մի մասունք սրբոյն Յակոբայ ծրարեալ ի մէջ թղթոյ, մի արծաթեայ տուփ խաչածև մէջն զանազան մասունք սրբոց, մասունք սրբոյն Յակոբայ սրբոյն Մինասայ և Պանդալիօնի բժշկին, զորս խնդրեմ յանձնել ի սրբարանն (պահարան):

Չորս արծաթեայ չամտանքն (աշտանակ) ի վայելս սուրբ սեղանոյն Աստուծոյ: Ոսկի տուփ երեսն սատաւ և լալ յակինթ խուրտայիւք և ճակատն ալմաս խուրտայիւք դիցեն ի սուրբ սեղանն վասն կենարար մարմնոյ և հաղորդութեան: Երկու ասղանի զար մեծ խալիչայք, յորոց կարմիրն ի հանդիսաւոր կայսերական տօնախմբութեան

աւուրս արկցեն առաջի աթոռոյ ժառանգին այժմեան կայսեր:

5) Մէկ շուրջառ Ռուսաստանի ճօթ զար ի վերայ սև մախմուրի, երեք մանր դոգնոցք ասղանի, մի կոնքեռ կարմիր մախմուր ասղանի, մի զար զէյֆէի խալիչայ (գորգ), երկու զոյգ ասղանի հողաթափք յանձնեսցի պահարան. մի ձեռք զգեստն, որ ցայսօր գտանիւր առ իս և պատկանի նոյն եկեղեցւոյն, վասնորոյ և խնդրեմ յանձնել պահարանին, որք են մի ձուլածոյ ոսկեզօծ խաչ ամանովն, մի ոսկի խաչ պարանոցն եաղութ և զմրուխտ ակամբ զարդարեալ, մի շուրջառ պարսից զար դիպայ, մի կանաչ շուրջառ զէյֆէի, մի եմիփորոն խէթեյի և մէջն խաչերով ասղանի և մարգարտեայ, մի փորուրար ասղանի, մի թագ ասղանի մարգարտայեռ ականակապ արտախուրակօք և ոսկի խաչիւք, մի վակաս ասղանի մարգարտայեռ ակամբք և կամարօք, երկու զոյգ հին բազպանք, մի սպիտակ շապիկ ժամարարի, մի սպիտակ շապիկ սպասավորի, մի քօղ սկիհի և Աւետարան արծաթապատ:

6) Նուիրեսցի Ախալքալաքայ սուրբ Խաչի եկեղեցւոյն մասունքն սրբոյն Յակոբայ և կենաց փայտի իմէջ ոսկեզօծ արծաթեայ թեօքուրտմա խաչի: Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն Կարծախ գեղջ տացի մի խաչ ոսկեզօծ չիֆտիչի, յորում մասն սրբոյն Կարապետի: Ի Սուրբ Յարութեան եկեղեցւոյն Տադեշ գեղջ մի խաչ որոյ երեսն չիֆտիչի յորում մասն սրբոյն Յակոբայ և Պանդալիօնի բժշկին:

7) Պռիլիանդ խաչս պարանոցի զոր հանգուցեալ 'ի Տէր թագավոր կայսրն Նիկողայոս պարգևեալ է ինձ յայցելութեան իւրում մնասցէ ի տան հօրեղբօր որդւոյ իմոյ, իբրև աւանդ սուրբ ի յիշատակ անուան իմոյ մշտնջենապէս յորդիս և 'ի սերունդս նոցա:

8) Մեծ ոսկի զանգակաւոր ժամացոյցն իմ, զոր ընծայեալ է ինձ աղա Կարապետն Մամիկոնեանց, ի յիշատակ արժանայիշատակ մեծանուն Հօր իւրոյ Յակոբ ամիրայի յանձն առնեմ վերադարձուցանել կրկին ինքեան հայրական օրհնութեամբ ի վայելս իւր:

9) Բոլոր առ ձեռն պատրաստի գումար դրամոց իմոց Հասանէ ցերեք Հազար վեց Հարիւր մանէթ, բաց յայսմանէ մուրհակօք ի վերայ Յակոբ վարժապետի Կարինեանց Հազար եօթն Հարիւր մանէթ, յորմէ ստացեալ եմ Հարիւր ութսուն մանէթ և զմնացելոցն գրեալ եմ նմին առաքել ուղղակի առ Հոգաբարձուս գանձանակին աղքատաց, վասն շինութեան դուքանացն և եթէ առանց զանցառութեան և անտրտունջ ոչ Հասուցանէ զայն, յանձնեմ կտակատարաց իմոց բողոքել ուր Հարկն է և մի կորուսանել զժամանակ մուրհակին, ի վերայ պրապօրչչիկ Սարգիս աղայի Տիգրանեանց Հազար մանէթ արծաթի, բոլորն լինի վեց Հազար Հարիւր մանէթ արծաթի:

Յայսմ գումարէ արացեան ծախս:

1) Նախ աւուր թաղման իմոյ և եօթն աւուրց վեց Հարիւր մանէթ արծաթի:

2) Ի շինութիւն գերեզմանի իմոյ չորս Հարիւր մանէթ արծ:

3) Հազար մանէթ առաքեսցի ի սուրբ Էջմիածին սրբազնագոյն Հայրապետին և վեհափառ տեառն իմոյ և Հօր Ներսիսի կաթողիկոսի:

4) Հինգ Հարիւր մանէթ առաքեսցի ի սուրբ Էջմիածին միաբան սուրբ եղբարց իմոց:

5) Տացի խոստովանահօր իմոյ Հարիւր մանէթ:

6) Մնացելովքն շինեսցեն զձեռնարկեալ դուքանս, որ վասն աղքատաց և կարօտելոց և յաւելեալն ևս յայնմանէ որքան և երևեսցի յանձնելոց են Հոգաբարձուաց աղքատաց գանձանակին վասն բաժանելոյ նոցա:

Վասն ամենայն լրութեամբ ի կատար ածելոյ զայս իմ կտակագիր, կառավարելոյ զբոլոր այս ընծայեալ յինէն կալվածս և վասն Հոգաբարձութեան յինէն կառուցեալ և ընծայեալ ազգային և Հոգևոր ուսումնարանին՝ ես նշանակեմ կտակակատար, կառավարիչ և Հոգաբարձու զարժանապատիւ Յակովբ քահանայն Սուրենէանց, զբարեծնունդ պօսպօրուչիկ Աւետիքն Պօղօեանց և զպրապօրչչիկ Վարդան Վարադանեանց, զիւնկեր Կարապետն Մութաֆե-

անց, զպատուելի մ. Յովհաննէսն Յակօբջանեանց և զհա-
ւատարիմ սպասաւորն իմ շնորհունակ տիրացու Ստե-
փաննոսն Դեմիրճօղլեանց, որոց և յանձնեալ եմ ողորմու-
թեանն Աստուծոյ և շնորհաց նորին նախախնամութեան
աւանդեմ զյետագայ կանոնս:

ա) Ամենայն ճիշդ վերահայեցողութեամբ ունել զմեծ
հոգացողութիւն վասն անփոփոխ և անթերի կատարելոյ
զայս ամենայն յօժարակամ աւանդութիւն իմ:

բ) Հոգ ունել պահպանել ամբողջութեամբ և անկորուստ
զկալուածս իմ և զարդիւնս նոցին:

գ) Տարեկան ամենատեսակ եկամուտքն բաժանել և
իգործ դնել համախոհութեամբ և հաւանութեամբ միմեանց
և հաճութեամբ հասարակութեանն:

դ) Կալուածագիրն իմ յանձնեմ նոցա և մի մեծ արկղ
երկաթեայ զի որպէս զայն կալուածագիր նոյնպէս և
ամենատեսակ արդիւնք ի նմին արկեղ պահեսցեն կնքով
իւրեանց և մի ումեք տացեն զիմ կալուածագիր:

ե) Ունիցին զմի ժապաւինեալ մատեան վաւերացուցեալ
կնքովք քանի մի երևելեաց և ուստաբաշեաց, յորում և
գրեսցեն մանրամասնաբար ի մուտս զամենատեսակ ար-
դիւնս և ի ծախս զամենայն ծախս արարեալ և բաժանեալ
դրամս և ի վախճան իւրաքանչիւր ամի տացեն համարս
լրութեան ազգիս և երևելեաց քաղաքիս և ի ստուգութիւն
ստորագրեսցին:

Ես հաւատամ զի կտակակատարքն իմ ծառայեսցեն
հաւատարմաբար զամենայն աւուրս կենաց իւրեանց, իսկ
ընդ հակառակն եթէ երևեսցի յո և իցէ ի նոցունց
զանցառութիւն ինչ կամ անհասաւատարմութիւն,
հասարակութիւնն խորհրդակցութեամբ ընդ միւս
կտակակատարաց կարէ յարձակել զնա և տեղի նորա
նշանակել զայլ հաւատարիմ:

Ի վերջոյ աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի
կատարել զամենայն աւանդեալ ի սմին ցանկութիւնս
հոգւոյ իմոյ և սրտի և մի մնալ պարտաւոր առաջի ասեղ
ատենին Քրիստոսի և խնդրեմ աղօթել վասն հոգւոյ իմոյ

բաղմամեղի զհանգիստ և զբարեմասնութիւն Աստուածա-
յին սուրբ խոստմանց: Յամի փրկչական հազար և ութ
հարիւր յիսուն և վեց ամի և ազգականն հազար երեք
հարիւր հինգ ի քսաներորդ մայիս ամսոյ ի քաղաքն
Ախալցխայ: Ջայս կտակ ըստ ցանկութեան կտակարարի
բարձր սրբազան Կարապետ արքեպիսկոպոսի գրեցի սպա-
սաւոր նորին Ստեփաննոս Մարտիրոսեան Դէմիրձողլե-
անց: Այս կտակ գրեալ է ըստ ցանկութեան և ըստ
յօժարութեան հոգւոյ իմոյ արքեպիսկոպոս հայոց Կարա-
պետ. խոստովանահայր Վարդան քահանայ Ստեփանեանց:

Այս կտակ եղեալ է ի ժամանակս յամբողջ բանաւորու-
թեան նորին Բարձր Սրբազնութեան արքեպիսկոպոսի
Կարապետի, որպէս ՚ի յայտնելն նորին զկտակն ականատես
եղաք և գտաք յառողջ մտօք և յամբողջ յիշողութեան և
այս ստորագրութիւն է իսկական և կտակն գրեալ է ըստ
ցանկութեան նորին, վասնորոյ վկայեմք ստորագրութե-
ամբք: Աւետիք ավագ քահանայ Վարդապետեանց, անդամ
կառավարութեան Աբրահամ քահանայ Ղազազեանց, ան-
դամ կառավարութեան Գէորգ քահանայ Յովակիմեանց,
Յարութիւն Մովթաֆեանց, մ. Աղաբաբ Վարդանեանց, մ.
Սարգիս Յակոբջանեանց, Յակովբ Չաթալբաշեանց, մ.
Յակոբ, մ. Վարդանով, մ. Սահակ Պաղչիինեանց, մ. Յով-
հանէս, մ. Կարապետով, մ. Ռափայէլ, մ. Յովհաննիսեան,
Պետրոս Քրիստոստուրեանց, Պետրոս Չլնկարեանց, Սար-
գիս Քէշիշեանց, Աղապապ Մառանկոզեանց, Յարութիւն
Սէրոբեանց, Յարութիւն Սարգսեան, մ. Միքայէլ, մ. Այ-
վազեանց, Մկրտիչ Սաղօյեանց, Մանուկ Պաղչիինեանց:

Ջնշանակութիւն ի կտակագրին լուաք և ընդունելի են
մեզ. Յակոբ քահանայ Սուրէնեանց, պրապօրչչիկ Վար-
դանեանց, իւնկեր Կարապետ Մովթաֆեանց, սպասաւոր
նորին բարձր սրբազնութեան տիրացու Ստեփաննոս Դէ-
միրձողլեանց:

Завещание это составлено въ памяти Его Высокопре-
освященствомъ Архепіскопомъ Карапетомъ въ томъ сви-
детельствую Штабъ лекарь надворный советникъ Гравили.

Докторъ Ахалцихскаго Госпиталя статскій советникъ Степановичъ.

Что сіе духовное завещаніе собственноручно подписано Армянскимъ Архіепископомъ Карапетомъ и составлено оно въ памяти, въ томъ свидѣтельствую. Мая 20 дня 1856 года. Приставъ Ахалцихской Градской полиціи прапорщикъ Азарпетовъ.

ԺԵ

Այս կտակի մասին վեճ բաց արին Կարապետ արքեպիսկոպոսի մերձավոր և հեռավոր ազգականները Բագրատունյանք, Բոդոյանք, Աստվածասուուրյանք և Լազարյանք, բայց դորանց բոլորի խնդիրքն էլ Քուլթայիսի նահանգական Դատարանը, յուր ի 5-ն հուլիսի 1863 ամի N 2614 վճռահատությամբ բացասեց, ենթարկելով նրանց 9793 ռուբլի 10 կոպ. տուգանքի և Կարապետ արքեպիսկոպոսի կայքը համարելով «սեպհականութիւն Հայոց Լուսաւորչական եկեղեցւոյ», Կառավարիչ ծերակույտը, որին դիմել էին վերոհիշյալ ժառանգավորք, յուր մայիսի 27-ին 1868 ամի N 1079, վճռագրով հաստատեց Քուլթայիսի նահանգական Դատարանի վճիռը, այն փոփոխությամբ միայն, որ այդ կայքը համարվի սեփականութիւնն այն վիճակի եկեղեցեաց, որոց վերա հանդուցյալը վիճակավոր առաջնորդ է եղել: Այդ վեճերի ժամանակ Կարապետ արքեպիսկոպոսի կտակակատարներն զանցառության տվին իրանց սուրբ պարտականութիւնը, և ս. էջմիածինը յուր պատգամավորի, պ. Նիկողայոս Տեր-Հովսեփյանցի ձեռամբ 1869 թվականում եկավ Ախալցխա և հօգուտ էջմիածնի տիրեց և տարավ, բաց ի հանդուցելո կտակում էջմիածնի համար կտակածներից, այլ նաև. 1) կտակի 7-րդ հոդվածում հիշված բոլիլյանդ խաչն. 2) 3645ռ. 80 կոպ. արժողությամբ հայսկուլյս Կովկասու հասարակաց խնամատարության սլրիկազի երեք տոմսակներ NN 135, 52 և 259, որոց քանի տարվա տոկոսն ևս

անուամ է մի քանի հազար ուրբլի: 3) 2700ռ. առնելիքի պարտամուրհակներ: 4) Չանազան ոսկեղենք, արծաթեղենք և այլ նյութեղենք 2835 ռ. 95կոպ. արժողությամբ: 5) 377 օրինակ զանազան գրյանք 526 ռ. 55 կոպ. արժողությամբ: Բացի դորանցից նաև 1) մի դատարկ զետինք երկայնությամբ 16,5, իսկ լայնությամբ 6,75 սաժեն, որի վրա այժմ շինված է Եղիսաբեթյան ուսումնարանը Պարզյան Սուքիաս եպիսկոպոսի անխոնջ ջանքով և երկարատև գրագրությամբ: 2) Մի հին տուն երկայնությամբ 10,5, իսկ լայնությամբ 7 սաժեն, որ այժմ էջմիածնին տարեկան 80 ռ. եկամուտ է բերում (հրամ. Սինոդին ի 20-ն հոկտ. 1869 ամի N 1992 այդ շարժական և անշարժ կայքերի ստացման մասին): 1874 թվականից սկսյալ ս. էջմիածինը հօգուտ ճեմարանին ստանում է նաև Ախալցխո ս. Փրկիչ եկեղեցվո կապալադրամից տարեկան 2000 ուրբլի: Չբավականանալով այդ քանով ս. էջմիածինը մինչև այսօր պահանջում է Ախալցխո ս. Փրկիչ եկեղեցուց կտակի 1 հողվածում հիշված արքեպիսկոպոսական տունն (հին հաջորդարանն հրամանագիրք Սինոդին 30-ն ապրիլի 1871 ամի N 964 և ի 26-ն նոյեմբ. 1874 ամի N 2694): Ս. էջմիածինը ուզեցել է նաև վեճ բանալ Կարապետ արքեպիսկոպոսի ժառանգների հետ, հանդուցելույն նրանց ընծայած կալվածքների համար (հր. Սինոդին ի 18-ն նոյեմբ. 1869 ամի N 2211), բայց նորա այդ դիտավորությունը մինչև այսօր մնում է անիրագործելի: Ինչ որ վերաբերում է կտակում հիշված Հակոբ Կարինյանցի և Սարգիս Տիգրանյանցի վրա պարտամուրհակով եղած փողերին, պետք է հայտնել, որ այդ պարտականները օգուտ քաղելով զանազան հանգամանքներից իրենց փորերն են քաշել այդ դումարը: Ոմանք ասում են, որ էջմիածին տարված պարտամուրհակներն իբր հենց այդ Կարինյանցի և Տիգրանյանցի մուրհակներն են:

Ի վերջո այս էլ պետք է հավելացրած, որ կտակում Կարապետ արքեպիսկոպոսի կանխիկ փողն բոլորն էլ դուրս չէ բերված: Կտակում հիշված դումարից կրկնա-

պատիկ ավելի գումար հանգուցելու վերջին օրերում վարպետորդի մարդիկ ինքնաեռների (սամովար) միջոցով դուրս տարան և հետո իրենց համար հարստություն կազմեցին: Բացի դրանից հանգուցյալը բավականաչափ գումար էլ ուներ մուրհակավ այս և այն անձի վերա և մահվան օրերը հրավիրելով նրանց յուր մոտ վերադարձրել է յուրյանց մուրհակները, առանց փողերն ստանալու, երդում տալով նրանց, որ յուր մահվանից հետո այդ գումարները բարեգործական նպատակների գործածեն իրան, Կարապետ արքեպիսկոպոսի անունով: Բայց այդ երդումն ուտողներն էլ մինչև այսօր երդմնազանց են գտնվում: Կարապետ արքեպիսկոպոսի մեջ սովորություն էր դարձած հիվանդացած ժամանակ յուր պարտապանների մուրհակներն հետ դարձնել պարտավորելով նրանց յուրյանց մոտ մնացած գումարներ գործադրել բարեգործական նպատակով և այդ սովորությունը նա ուներ միմիայն նրա համար, որ միգուցե յուր փողերն անցնեին ս. էջմիածնի ձեռքը, որովհետև նա միշտ ասում էր «ժողովրդյան սեփականությունը կրկին ժողովուրդին դարձնելու է»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Կարապետ արքեպիսկոպոսի «ցուցակ ծառայութեան» թղթի մեջ ասված է, որ նա այդ գիտութիւնները սովորել է Կ. Պոլսո «Հոգևոր ճեմարանում», բայց այդ սխալմունք է. որովհետև Կ. Պոլսում Հոգևոր ճեմարան առաջին անգամ բացված է «Ճեմարան Սուրբ Երուսաղեմ» անունով 1838 թվակ. դեկտ. 9-ին Կ. Պոլսեցի Կարապետ ամիրա Պալյանի և նորա քեռայր (օսմանյան տերութեան արքունի ճարտարապետի) Հովհաննես էֆենդիի աշխատութեամբ և Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի հաճութեամբ, Կ. Պոլսո Յուսկիթեր թաղում. (տես Ա. Պերպերյան. Պատմ. Հայոց. Կ. Պոլիս, 1871 եր. 267), իսկ այդ ճեմարանը, ինչպես ժամանակագրութիւնից երևում է, մեր պատմութիւնից բավականին հետո է. այս պատճառով Կարապետ արքեպիսկոպոսի ծառայութեան ցուցակումը հիշված «Հոգևոր ճեմարանը» չափազանցութիւն է, և պետք է հասկանալ նույն ժամանակվա մասնավոր ուսումնարանները, կամ, որ ավելի հավանական է, գիտնականները:

² Մինչև այժմ սովորութիւնն կա մեր ազգի մեջ, որ քահանա, վարդապետ և նույնիսկ եպիսկոպոս ձեռնադրովող անձը ձեռնադրողին մի ընծա է տալիս, որ և կոչվում է «աջահամբույր»: Գուցե մեր մեջ այդ սովորութիւնը ամենահին ժամանակներում ունեցել է յուր պարզ նշանակութիւնը, բայց որովհետև դա վերջերումս դառել է պարտադիր և իբրև գլխավոր պայման մի որևիցե աստիճանի հասնելու, ուստի այդ սովորութիւնը այժմ ոչ

այլ ինչ է, եթե ոչ կաշառակերություն, կամ ավելի ճիշտն ասելով, սիմոնականություն: Կարապետ վարդապետին առաջնորդ նշանակող պատրիարքն ևս ազատ չէ եղել այդ ախտից: Բացի Կարապետ և Հակոբ վարդապետներից էրզուրումի առաջնորդական աթոռի համար կային և ուրիշ մրցողներ նույնիսկ Կ. Պոլսո մեջ, որոնցից նշանավորներ Իսրայել անունով մի վարդապետ, բայց նորա «աջահամբույրը» հազար ղուռուշ (50 ու.) քիչ է եղել և պատրիարքը նշանակել է առաջնորդ Կարապետ վարդապետին ոչ այնքան նորա արժանավորությունը ճանաչելով, որքան գուցե նորանից իրան առաջարկված 2000 ղուռուշ (100 ու.) աջահամբույրի համար: Այդ հանգամանքից հետո ինչ զարմանք է, որ վարդապետները և քահանաները շատ անգամ ձեռնարկում են կաշառակերության, իբրև կրկնապատիկ փոխարենը իրանց տվածների: Ինքը Կարապետ արքեպիսկոպոսը յուր գործունեությունը երբեմն երբեմն արատավորում էր կաշառակերությամբ:

³ էրզրումի և նորա վիճակի հայերը, մինչև անգամ մյուս քրիստոնյա ժողովուրդները, Կարապետ արքեպիսկոպոսի հետ խոսելիս, նորան կոչում էին «հայր սուրբ», իսկ միմյանց հետ նորան անվանում էին «մեծավոր»: Այդպես էին կոչում և գաղթականությունից հետո Ախալցղխայում: Մինչև այսօր էլ ասում են «մեծավորի գերեզմանը», «մեծավորենց բաղնիքը», «մեծավորենց գեղերը», «մեծավորին տունը», «մեծավորենց աղբյուրը»:

⁴ Այդ Գևորգ Տեր Դավթյան սպասավորը, իբր ձեռնասուն և ամենից հավատարիմ աշակերտ Կարապետ արքեպիսկոպոսի, շատ սիրելի անձն էր: Կարապետ արքեպիսկոպոսը նորան յուր հետ բերավ Ախալցխա, ձեռնադրեց վարդապետ և եպիսկոպոս, իսկ երբ ինքը նշանակվեցավ Վրաստանի և Իմերեթի թեմակալ առաջնորդ (1836 թ.): Գևորգ եպիսկոպոսը Ախալցխայում հաջորդի պաշտոն էր վարում: Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն Գևորգ եպիս-

կոպոսը թողեց Սուլդա մեծ գյուղի երկու մասն և մի քանի նշանավոր ավերակներ: Գևորգ եպիսկոպոսը վախճանեցավ Ախալցխայում 1847թ. հունիսի 4-ին խոլերայից, 45 տարեկան, և թաղվեցավ ս. Փրկիչ եկեղեցու արևելյան կողմը:

⁵ Այդ օրերում օսմանցիք ավելի խիստ և բարբարոս կերպով սկսան վարվիլ մանավանդ կաթոլիկների հետ, որոնց բոլոր վարդապետներին բռնելով մորուքները զերծեցին և աքսոր քչեցին: Ոմանք ասում են այդ բանի պատճառը եղել է Կարապետ արքեպիսկոպոսը, որ իբր թե կոնդակի տակի «Կաթողիկոս» բառը բացատրել է «Կաթոլիկոս» (Հռոմա պապ), որի կողմից թշնամաբար ուղարկված է եղել այդ գիրը հայերին և նոցա առաջնորդին վնասելու համար: Բայց այդ սխալ է: Կաթոլիկ վարդապետներին աքսոր քչելու իսկական պատճառն այն է, որ այդ անցքից մի փոքր ժամանակ առաջ, 1827 թվականի վերջերում, կաթոլիկ կղերը արդեն օսմանցիների տերության առաջ պաշտոնապես ճանաչված էր իբրև ապստամբ և վտանգավոր, և նույն թվականում դուրս եկած սուլթան Մահմուտի մի ֆերմանով ինչպես բոլոր Եվրոպական Տաճկաստանում, նույնպես և Անատոլում սկսվեցավ կաթոլիկ կղերի հալածանքն ու աքսորը: Այդ հրովարտակի զորությամբ Ախալցխայում ավագ հինգաբլթի օրը փակվեցան կաթոլիկաց եկեղեցիները և նոցա բոլոր վարդապետները կալանավորվելով, ուղարկվեցան էրզուրում քննության համար, որտեղից վերադառնալուց հետո, նոքա Ախալցխայի բերդում բանտարկվեցան մինչև Ախալցխայի առումը (1828) ռուսներից և յուրյանց քահանայական պաշտամունքները կատարում էին զինվորների հսկողության ներքո: Այդ վարդապետների մեջն էր մինչև այժմ բոլոր ախալցխացիներին հայտնի պատեր-թոմա նշանավոր ճեզվիթը, իսկ այն վարդապետները, որոնց մորուքները վեր առան էրզուրումում և աքսոր քչեցին, արդեն բանտից փախածներն և հայերի տներում ծածուկ պատսպարվող-

ներն էին: Ռուսի գալը լսելով, էրզուրումի փաշան խստությամբ հետևեց դոցա և կալանավորեց: Գուցե այն հայերը, որոնք մինչև այդ ժամանակ պահում էին այդ վարդապետներին, այնուհետև յուրյանց անձից երկյուղ կրելով, դուրս տվին վարդապետներին, որոնք հետո այդ պատճառով, գուցե, բարդեցին Կարապետ արքեպիսկոպոսի վերավերոհիշյալ բարուրանքը:

⁶ Թեպետ Ադրիանուպոլսո դաշնադրության 7-րդ և 12-րդ հոդվածների զորությամբ Օսմանյան տերության այդ գավառների քրիստոնյաների վիճակը և հավատը ապահովված էր, և թեպետ մահտեսի Գևորգ աղա Բայբուրդի հարուստ մի քանի երեւելի անձանց հետ այդ միջոցում Կ. Պոլիս գնալով, սուլթան Մահմուդից հրովարտակ էր բերել հատկապես հայերի համար, բայց այդ հոդվածների և հրովարտակների որքան ուժ և նշանակութուն ունենալը շատ լավ հասկացած էր Կարապետ արքեպիսկոպոսը, ուստիև չուզեց ինքն իրան և ժողովրդին խաբուսիկ հույսերով խաբել: Օսմանցիներին երբեք ձեռնտու չէր, որ հպատակ քրիստոնյաները գաղթեին իրանց երկրից, ոչ ապաքեն երկիրը ավերակ կդառնար, ինչպես և եղավ էլ. որովհետև բացի 95000 հոգի հայերից, օսմանեան զանազան գավառներից գաղթեցին դեպի Ռուսաստան նաև 10700 հույներ և 6000 բուլղարներ:

⁷ Այդ գաղթականների թիվը Պ. Պերպերյան (Պատմ. Հայոց եր. 212) դնում է 9900 տուն կամ 45000 հոգի. պ. Օգ. Հաքստհաուզեն (Կռունկ Հայոց Աշխ. 1862 N2 փետր. եր. 108 և Արարատ 1873 N4 ապրիլ եր. 131) 52000 հոգի, պ. Զազուրսկին (Записку Кавказ. орд. Импер. русс. Геогр. Общ. VIII) 14000 տուն կամ 90000 հոգի, որին համաձայն են մեր Ախալցխայի գավառական կառավարության արխիվի պաշտոնական թղթերից հանած թվանշանները: Այս մասին տե՛ս նաև Դաստիարակ 1873 N3, օգոստոս, եր. 43, պ. Արտաշես Սուրենյանցի հոդվածը:

⁸ Մինչդեռ օսմանեան երկրից Լահազին բազմությամբ քրիստոնյաները դիմում էին դեպի Ռուսաստան, նույն կարգավ Ախալցխայի փաշալիկի օսմանցիները Լահազին բազմությամբ դիմելով դեպի Տաճկաստան, ամբողջ քաղաքներ և բազմաթիվ գյուղեր մնում էին ավերակ և ամայի, որոց հետո պետք է ծաղկեցներ գաղթական ժողովուրդը. այդ պատճառով ռուսաց տերությունը պետք եղած օգնությունը չխնայեց նորանցից, մանավանդ քանի կենդանի էր Կարապետ արքեպիսկոպոսը, որին ամեն տեսակ զիջողություն լինում էր տերության կողմից, քանի որ նա ողջ էր:

⁹ 1837 թվականի հոկտ. 1-ին, երբ հանգուցյալ Նիկողայոս կայսրը Ախալցխա եկավ և իջևանելով Կարապետ արքեպիսկոպոսի մոտ, առաջարկեց նորան պարգև, Կարապետ արքեպիսկոպոսը չոքեց կայսեր առաջ և «գթություն ու ողորմություն» խնդրեց յուր հոտի համար, ասելով. «Ես իբրև քրիստոնյա եպիսկոպոս, երկար ժամանակ պահպանեցի քրիստոնեությունը Տաճկաստանի մեջ, այժմ այդ քրիստոնյաները հանձնում եմ քրիստոնյա թագավորական հայրական խնամոցը»:

¹⁰ Ախալցխոս ս. Փրկիչ անուկով մայր եկեղեցին շինվեցավ 1835-1837 թվականներում և նորա մեջ զետեղվեցան օսմանյան երկրից բերված վանքերի և եկեղեցիների անոթները, զարդերը, ս.մասունքները և զգեստները: Այդ զարդերի և մասունքների վերջին ցուցակից, որ կազմված է 1875 թ. ապրիլի 28-ին, երևում է, որ այդ ամեն զարդերը, անոթներն ու մասունքները, ընդամենը 486 կտոր, որոց մեջ արծաթից շինված են ա) 116 արծաթյա խաչեր և սրբոց մասունքներ. բ) 7 սկիհ. գ) 17 սաղավարդ. դ) 6 բուրվառ. ե) 3 գուլգ քշոցներ. զ) 9 գուլգ մեծ և փոքր աշտանակներ. է) երկու կանթեղներ. ը) 10 գոտի. թ) 7 մասնատուփ և մեռոնատուփ. ժ) 13 վակաս. ժա) 5 գավազան. ժբ) 62 արծաթապատ ավետարաններ. ժգ) 13 եպիսկո-

պոսական թագեր, որոնցից երկուսը բավականին թանկագին. ժդ) Մի կոնք ու փարչ (պատարագչի լվացվելու համար). ժե) 52 հոխա 203 դրեմ (4 փուլթ 5Ֆ.) ջարդված արծաթեղենք:

¹¹ Այդ կալվածներն են, բացի երեք, ս. Փրկիչ, ս. Լուսավորիչ և ս. Ստեփաննոս, եկեղեցիներից և բացի հոյակապ երկհարկյա հաջորդարաններից և Կարապետյան ու Եղիսաբեթյան ուսումնարանների ընդարձակ և փառավոր շինություններից, նաև 31 կրպակ, 28 տուն և 925 քառակուսի սաժեն դատարկ գետին: Այդ կալվածքներից նոր հաջորդարանը և Եղիսաբեթյան ուսումնարանը շինեց գերապատիվ Սուքիաս եպիսկոպոս Պարզյանցը, ախալցըխացիների համար միշտ անմոռանալի պատվական անձն:

¹² Այդ կալվածքների կուպչան այժմ կորած է, և չնայելով Ախալցխայի նախկին հաջորդ գեր. Սուքիաս վարդապետի մեծ աշխատության և երկարատև գրագրությանը, չէ գտնված, բայց կուպչայի գոյություն մասին վկայված է Կառավարիչ ծերակույտի մի վճռագրում, որ կայացած է մարտի 27-ին 1873 ամի N 12.433, այդ գյուղերի և ավերակների համար արքունի դանձարանի հետ բացված վեճի առթիվ:

¹³ Մենք չենք հանդգնում Կարապետ արքեպիսկոպոսի արժանավորությունը և մեծագործությունը հավասարեցնել Ներսես կաթողիկոսի արժանավորությանը և մեծագործությանը. առաջինը նշանավոր էր յուր մասնավոր վիճակի համար, իսկ երկրորդը ընդհանուր հայոց համար. բայց թե Կարապետ արքեպիսկոպոսը, ընդհանուր առմամբ, նույնպես նշանավոր էր, դորա մասին կասկած չունինք:

¹⁴ 1838-1839 թվականներում, երբ Կարապետ արքեպիսկոպոսը Թիֆլիզումն էր, Ախալցխայում ճարակված

էր բուռն զորութեամբ ժանտախտ կոչված հիվանդու-
թյունը: Հարյուրավոր մարդիկ կոտորվում էին այդ ժան-
տախտից: Տերությունը որոշել էր այդ ցավով մեռածների
դիակներն այրել: Այդ առողջապահական կարգադրու-
թյունը խիստ ընդդիմություն և հակառակություն գտավ
գաղթական ժողովրդի կողմից, այնպես որ տերության
այդ կարգադրությունը գործադրվում էր գիշերները, գրե-
թե ծածուկ: Մի օր երբ ցերեկով մի մեռած այրի կնոջ
դիակ էին տանում զինվորներով շրջապատած այրելու,
ժողովուրդը շատ մեծ ընդդիմություն ցույց տվեց և
երկու անգամ դիակն առավ զինվորների ձեռքից: Այդ
բանը տեսնելով բերդապահ և Ախալցխայի փաշալիկի
կառավարիչ գեներալ-մայոր Ֆոն-Կլյուգենաու, մի խումբ
ուրիշ զինվորներով անձամբ գնաց այդ անցքի տեղը և
ստիպմամբ քաշեց, առավ գաղթական ժողովուրդի ձեռքից
դիակը: Ժողովուրդը դորանով յուր կրոնը անպատված և
բռնաբարված համարելով, սկսավ կատաղաբար քարկոծ
առնել կառավարչին, որ փախուստ տալով բերդը, հազիվ
մահից ազատվեցավ: Բայց այդ անմիտ վարմունքը շատ
թանկ նստավ հետո ժողովրդյանը: Հետևյալ օրը Ախալ-
ցըխայի իշխանները և փոքր ինչ ձայն ունեցող մարդիկը,
թվով 36 հոգի, բերդում կալանավորվեցան իբրև պատճառ
և դրդող ժողովրդյան դեպի այդ ասպտամբուլթյունը,
թեև իսկապես այդ մարդիկը ոչինչ մեղք չունեին այդ
բանում, բայց Ֆոն-Կլյուգենաու լավ պատճառ գտավ
այդպեսով գոնե յուծել յուր վրեժը, որ մի քանի ժամա-
նակից հետո ուներ դեպի վերոհիշյալ անձինքը: Հինգ
ամիս բանտարկված մնացին այդ մարդիկը բերդում և
այդ ժամանակ ժողովրդյան նորանց ազատելու համար
արած զանազան փորձերը ավելի և ավելի ծանրացրին
բանտարկելոց վիճակը: Կարապետ արքեպիսկոպոսի միջ-
նորդություններն իզուր էին, և որոշված էր արդեն ի
ձեռն քննության, որ այդ ողորմելիքն աքսորվին: Այդ
որոշումը լսելով Կարապետ արքեպիսկոպոսը Թիֆլիզում
մի հացկերույթ տվավ Կովկասյան փոխարքա բարոն

Ռոզենին: Սեղանի վերա փոխարքայի կենացը խմելիս, Կարապետ արքեպիսկոպոսին հաջողեցավ համոզել նորան, որ այդ տխուր անցքը եղել է լուկ տգիտությամբ և ոչ քաղաքական նպատակներով, ինչպես այդ դուրս էր բերված քննության թերթերում, և թե որովհետև ինքն է եղել պատճառ ժողովրդյան գաղթելուն, ուստի և նորա գործած հանցանքների համար նա ինքն է պատասխանատու: Այդ հացկերույթից երկու օր հետո փոխարքան ինքն անձամբ Ախալցխա գնաց և բանտարկյալներին ազատելով, քննությունից դուրս բերված որոշմունքը շնջեց:

¹⁵ Մինչև պոլոժենիայի դուրս գալը վիճակի հոգևոր գործերը կառավարվում էին «Հոգևոր կառավարություն հայոց Վրաստանի» միջոցով, ուր կային միմիայն մի նոտար և մի գրագիր հոգևորականներից:

¹⁶ Այդպիսի հարյուրավոր օրինակներից դնում ենք այստեղ մի պատմություն: Թիֆլիզցի մի պարոն, Մելքոն Մեհրաբյանց, յուր ծերության հասակում երրորդ անգամ կույս աղջկա վերա պսակվելիս սրբազանին 50 բաջախուռ ոսկի է տված եղել: Կարապետ արքեպիսկոպոսի տված մեկնություններից և առաջ բերած ապացույցներից նորա քննիչները ստուգեցին, որ այդ 50 ոսկուց միմիայն 5 ոսկի անցել է եպիսկոպոսի ձեռը, մնացյալները բաժնված է եղել Կարինյանցի և անդամների մեջ, բայց 50 ոսկին էլ առնված է եղել եպիսկոպոսի անունով:

¹⁷ 1875 թվականում մի գեյթունցի վարդապետ, Ստեփաննոս Աղջաբեգյանց, մի օր ինձ մոտ ընթրիքի պատահեցավ: Մյուս օրը նա իմ բարեկամներիս հայտնել էր մեծ դժգոհություն ինձանից, որ իրեն աջահամբույր չտվի հացից հետո: Ես լսելով այդ բանը, վարդապետին 3 մանեթ ուղեցի տալ, բայց նա չստացավ, հանդիմանելով քաղաքավարությամբ, որ «ուրիշի հիշելով կատարված պարտքը չանցնիր»: Զեյթունցիք էլ տաճկաց «դիշ քիրե

սիին» աջահամբույր անուն են տվել ուրեմն:

¹⁸ Մենք պատրաստ էինք քարկոծել Կարապետ արքեպիսկոպոսին, եթե համոզված լինեինք, որ նա կաշառք էր ուտում, որ նա շեղվում էր արդարությունից փողի համար:

¹⁹ Դալմայի առուն, որ դուրս է գալիս Հրազդան (Զանգի) գետից ս. էջմիածնի սեփականություն է և տարածությունն է Հրազդանից մինչև Վաղարշապատ 22 վերստաչափ: Այդ առուն պատմական ժամանակներում ոռոգում էր Արարատյան ընդարձակ դաշտի մի մասը: Աթոռապատկան հողերի տարածությունն է այդ առվի շրջակայքում 2000 օրավար, որ թեև շատ արգասավոր հող է, բայց առվի փչացած լինելու պատճառով մինչև այժմ մնում է առանց վարուցանքի: Դալմայի առվի վերանորոգության ծախք Երևանի արքունի ճարտարապետն հաշվել է 20000 ռուբլի: Վեհափառ կաթողիկոսն կամենալով նորոգել այդ առուն նոյեմբերի 3-ին 1872 ամի Սինոդի ձեռքով պաշտոնական ծանուցումներ հրատարակեց, որպեսզի ցանկացողք նորոգեն Դալմայի առուն իրանց հաշվով, մի որոշյալ ժամանակով շահվին վերոհիշյալ 2000 օրավար աթոռապատկան հողից: - Բայց աճրդախոսություններին ոչ ոք չներկայանալով, կարծեմ, այդ գործը մնաց մինչև հիմա անկատար:

²⁰ Այդ հանձնաժողովի քննության թերթի պատճենը ամբողջությամբ գտնվում է միայն Սինոդի հնադարանում: Մենք թեև շատ աշխատեցինք ձեռք բերել, բայց չկարողացանք գտնել տալ: Ավետիք Պեպերյանը (պատմ. Հայոց. Կ. Պոլիս. 1871 եր. 288) ասում է, թե այդ հանձնաժողովը կազմված էր հետևյալ անձինքներից. Գևորգ վարդապետ Կ. Պոլսեցի (այժմյան վեհափառ կաթողիկոսը) Դավիթ վարդապետ (Ղավուխճյան) Երուսաղեմացի, Հովհաննես վարդապետ Արշարունի, որոց նախագահում էր Կարապետ վարդապետ Շահնազարյանց, որո համար «պատմի թէ

Կարապետ Եպիսկոպոս տայ կաշառս» երեք Հաղար մանէթաց Շահնազարեան Կարապետ վարդապետին, որ նախագահն էր յանձնաժողովոյն յուրոյ, զի զհաշիւն տեսցէ յօգուտ անձին իւրոյ և նա այլ ընդ այլոյ տեսանէ զհաշիւ: Իմացեալ զայս կաթողիկոսին Ներսիսի, խնդրէ զՇահնազարեանցն պատուհասել ըստ արժանւոյն, բայց նորա զգացեալ զիշերայն խոյս տայ Տփխիսէ և անցանէ ընդ սահմանս Օսնանեան տէրութեան», - բայց այդ սխալ է, այդ վարդապետները այդ ժամանակ եկել էին եպիսկոպոսանալու և դոքա, մանաւանդ Գևորգ վարդապետը, միջնորդ էր կաթողիկոսի և առաջնորդի մեջ հաշտվելու, բայց նոցա միջի կռիվը արդեն այն աստիճան բորբոքվել էր, որ դարձել էր կատարյալ վարդապետի կռիվ, ինչպես ասում են: Իսկ Շահնազարյան Կարապետ վարդապետը փախավ Ներսեսի ձեռքից 1850 թվականում, երբ կաթողիկոսի հրամանով կարգվեցան քննիչներ նորա տպարանի վերատեսչության և կոնսիստորի գլխավոր անդամության երեք տարվա հաշիվներն (1847-1850) քննելու և երբ Շահնազարյան վարդապետն իմացավ թե «խարդախ հաշուեցուցակութիւնք կոնսիստորի վկայեալ գտանեն (կոնդակ 29 հուլիսի 1850 N 210) թողեց թիֆլիզը: - Տպարանի հաշվոց մեջ նույնպես հանցավոր էր գտնվել Շահնազարյանց վարդապետը, եթե մտիկ տանք Ներսեսի կոնդակներին:

²¹ Ձուտ արծաթ են երկուքն էլ, որոց ծանրությունն է 7 գրվանքա 9 մսխալ: Ծան. հեղ.

ՇԵՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Մեր խոր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր նյութապես և բարոյապես սատար կանգնեցին Եղիշե (Հովակիմ) Գեղամյանցի «Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրություն» աշխատության վերահրատարակման գործին, իրենց վերաբերմունքով իրապես ժողովրդական բնույթ հաղորդեցին այս ձեռնարկին՝ դրանով իսկ ապացուցելով, թե մեզանում անմար են այն արժեքները, որ ժամանակին արմատավորել է մեր հոգևոր առաջնորդը՝ Կարապետ արքեպիսկոպոս Բազրատունին:

Շնորհակալություն ենք հայտնում՝

Բազրատունիների միությանը (նախագահ՝ Անդրեաս Սրաբյան), որը հոգաց սույն աշխատության հրատարակության հետ կապված ծախսերի զգալի մասը,

Ախալցխայի Շառլ Աղնավորի անվան բարեգործական ընկերությանը (նախագահ՝ Գևորգ Շուշանյան),

Աշոտ Մեղրոնյանին,

Պավել Ամիրխանյանին,

Լևոն Հովհաննիսյանին,

Ավթանդիլ Գրիգորյանին,

Սեսլուհ Սաղաթելյանին,

Արտակ Ոսկանյանին,


Գոհար Աղաջանյանին,

որոնք իրենց անշահախնդիր մասնակցությամբ նպաստեցին դրքի լույսընծայմանը:

Հմայակ Անխոնյան
հրատարակության կազմակերպիչ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրութիւն	15
Ծանոթագրութիւններ	99
Շնորհակալութեան խոսք	109



Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու դամբան-մատուռը Ախալցխայի հայկական գերեզմանոցում (իր կառուցած և խորհրդային տարիներից Սպայի տան վերածված ս. Ամենափրկիչ եկեղեցու գավթից վերաթաղվել է 1953 թ.)



ՔԱՐՔԱՆՆԻ
ՔԱՐՔԱՆՆԻ ԱՐԽԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ

ՔԱՐՔԱՆՆԻ

ԱՐԽԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ
ՔԱՐՔԱՆՆԻ ԱՐԽԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ

1779-1856

31

[500pp.]

17

149

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0668404

108207